

Ռոժե Կայան

ԻՆՉ ՏԵՍԱ
ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

ՀԱՅՊԵՏՈՐԱՏ

9(62)

Վ-21 Ռոժե Կայան

ԻՆՉ ՏԵՍԱ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

12225

Մայ

9(62)

1537



ՆՈՒՅՆՆԵՐ

1954

4054

РОЖЕ ВАИЯН
ЧТО Я ВИДЕЛ В ЕГИПТЕ

(На армянском языке)
Армянское государственное издательство
(Айпетраг), Ереван, 1954

ԱՌՍԶԱՐԱՆ

Ֆրանսիացի պրոֆեսիվ գրող և ժուռնալիստ Ռոժե Վա-
յանը որպես «Հանուն խաղաղության պաշտպանության»
ժուռնալի թղթակից Եգիպտոս այցելեց 1952 թվականի օգոս-
տոսի վերջին, այնտեղ տեղի ունեցող քաղաքական դեպքե-
րի ամենաեռուն ժամանակաշրջանում՝ գեներալ Մուհամմեդ
Նագիրի գլխավորած ռազմական հեղաշրջումից երկու շաբաթ
հետո: Այդ հեղաշրջման հետևանքով Եգիպտոսի թագավոր
Ֆարուկը ստիպված եղավ հրաժարվել գահից և հեռանալ
երկրից:

Երկրի քաղաքական կյանքին, նրա ժողովրդին և քաղա-
քական առանձին գործիչների հետ ծանոթանալուց ստացած
իր տպավորությունները Ռոժե Վայանը շարադրել է թարգ-
մանաբար սովետական ընթերցողին առաջարկվող՝ «Ի՞նչ
տեսա Եգիպտոսում» գրքում: Գիրքը, ինչպես արդեն ինքը
վերնագիրն է ցույց տալիս, երբեք հավակնություն չունի
Եգիպտոսի սոցիալ-քաղաքական կյանքի սպառնիչ լուսաբա-
նումն ու գիտական անալիզը տալու, այլ պարունակում է
միայն զննող ժուռնալիստի առաջին տպավորությունները:
Սակայն նա կարողացել է ոչ նվազ վարպետությամբ բացա-
հայտել երկրում կատարվող դեպքերի էությունը և մեծ հա-
մոզականությամբ ընթերցողի առաջ բացել այն նորը, որ
հատկանշական է այսօրվա Եգիպտոսի համար:

Ընթերցողին երկրի քաղաքական իրադրության հետ
ծանոթացնելով, մի շարք գործող անձանց վառ նկարագիրը
տալով, Ռոժե Վայանը հատուկ ուշադրություն է նվիրում

Եզրույթները հասարակ մարդկանց՝ ֆելլաճաներին, որոնք երկրի բնակչության հիմնական մասնան են կազմում: Դա միանգամայն բնական է: Ֆրանսիական առաջավոր գրողը չէր կարող չհետաքրքրվել եզրույթական ժողովրդի կյանքով, աշխատանքի ծանր պայմաններով, նրա թշվառ գոյության պատճառներով:

Հեղինակն այցելել է Ստորին Եզրույթների մի քանի գյուղեր: Օմդեխի (գյուղական ավազի) օգնականի և նրա համագյուղացիների հետ զրուցելով, ֆելլաճաների կարիքներին և կենսական շահերին ծանոթանալով, նա համոզվեց, որ աճել է նրանց ինքնագիտակցությունը և հողի համար, խաղաղության ու անկախության համար պայքարելու ձգտումը:

Վայանի ամբողջ գիրքը համակված է եզրույթական ժողովրդի նկատմամբ անկեղծ և խոր սիրով, ջերմ զգացումով դեպի դաշտերի աշխատավորները՝ ֆելլաճաներն ու բանվորները, որոնց շահագործմամբ ահա յոթանասուն տարի է, ինչ հեթաթմային հարստություններ են կոտակում անգլիական, ֆրանսիական և ամերիկյան ընկերություններն ու բանկերը: Առավելագույն շահույթի հետևից ընկած մոնոպոլիստական կապիտալը, տեղական կալվածատերերի և ֆեոդալների հետ միասին, կողոպտում է Եզրույթները, քսան միլիոնանոց եզրույթական աշխատասեր, ընդունակ ու անվեհեր ժողովրդին դարձնելով ստրուկներ:

Հեղինակը Եզրույթների առաջ կանգնած պրոբլեմների լուծումը փնտրում է ոչ թե քաղաքական պարտիաների և խրմբավորումների պայքարի մեջ, ոչ թե պրոտանգլիական կամ պրոամերիկյան դրածոների պալատական ինտրիգներում և անդրկուլիսյան պայքարում, այլ ժողովրդական մասսաների աճող դիմադրության մեջ, մասսաներ, որոնք գնալով ավելի ու ավելի ակտիվ մասնակցություն են ցույց տալիս երկրի քաղաքական կյանքին, որոնք գնալով ավելի հաճախ են հանդես գալիս ազատության, խաղաղության և անկախության իրենց պահանջներով:

Պետք է նշել, որ Ռոժե Վայանի գիրքը զերծ չէ որոշ թերություններից, նրանում կան նաև ոչ ամբողջապես ճիշտ

զրույթներ: Բայց այդ թերություններն ավելի շուտ հետևանք են այն բանի, որ եզրույթական ուստիկանությունը ամեն կերպ խոչընդոտ է հարուցել հեղինակին ծանոթանալու երկրի դրությանը և ջանացել է առավելագույն չափով մեկուսացնել նրան ժողովրդից: Ակնհայտ է, որ հենց Եզրույթների աշխատավոր բնակչության կյանքի հետ Ռոժե Վայանի որոշ չափով միակողմանի ծանոթությամբ էլ (որը պայմանավորված է երկրում չափազանց կարճ ժամանակով մնալով) բացատրվում է այն փաստը, որ նա իր գրքում համարյա ուշադրություն չի դարձրել եզրույթական բանվոր դասակարգի վրա, որի գերը երկրի ազգային-ազատագրական շարժման մեջ գնալով ավելի է աճում:

Հեղինակը թերի է նկարագրել նաև այն խոր ատելությունը, որ եզրույթական ժողովուրդը՝ և մասնավորապես եզրույթական բազմամիլիոն գյուղացիությունը, տածում է անգլիական և ամերիկյան զավթիչների հանդեպ: Իմպերիալիզմի հանդեպ տածվող այդ խոր ատելությունն է հենց, որ մղում է եզրույթական ժողովրդին՝ բանվորներին, գյուղացիներին, ինտելիգենցիային, մանր բուրժուազիային և ազգային բուրժուազիայի ռեյուցիոն մասին, ուժեղացնելու և ամեն կերպ ընդլայնելու ազգային-ազատագրական, հակա-իմպերիալիստական պայքարը:

Սակայն առանձին թերությունները բնավ չեն նվազեցնում Ռոժե Վայանի գրքի արժանիքները: Թեթև և պատկերավոր լեզուն, լավ ոճը, արվեստագետի մեծ վարպետությունը, որ օգնել է նրան համեմատաբար ոչ բարդ ձևով ընթերցողին հասկանալի դարձնելու եզրույթական իրականության բարդ պրոբլեմները, հմտությունը, որով Ռոժե Վայանը սրսում է մի քանի հետաքրքիր մոմենտներ և պատկերում Եզրույթների հասարակ մարդկանց կենդանի կերպարներ, և գլխավորը՝ եզրույթական աշխատավոր մարդկանց նկատմամբ տածած մեծ հարգանքի զգացումը, եղբայրական համերաշխության և պրոլետարական ինտերնացիոնալիզմի զգացումը, որոնցով համակված է Ռոժե Վայանի ամբողջ գիրքը, — այդ ամենը գիրքը դարձնում է արժեքավոր և այն

ինչպես հարկն է կրնդունվի սովետական ընթերցողների լայն շրջանների կողմից:

Վսյանի գիրքը ընդգրկում է համեմատաբար ոչ մեծ ժամանակաշրջան, սակայն հենց այդ ժամանակաշրջանը հարուստ է եղել կարևոր և հետաքրքիր դեպքերով:

1952 թվականի հուլիսին Եգիպտոսում տեղի ունեցած պետական հեղաշրջումն ու Ֆարուկ թագավորի իշխանությունից հարկադրական հրաժարումը նախապատրաստվել էին նախորդ մի ամբողջ շարք դեպքերով ու գործոններով, որոնց մեջ հիմնականը հանդիսանում է եգիպտական ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի վերելքը: Գրքի հեղինակը մի շարք օրինակներ է բերում, որոնք վկայում են այն մասին, որ Եգիպտոսի աշխատավորության դեպի ազատությունն ու անկախությունն ունեցած ձգտումը անմիջական ազդեցություն է գործել երկրում կատարված դեպքերի զարգացման վրա:

Հանուն իր ազգային անկախության եգիպտական ժողովրդի մղած պայքարը, որը կազմում է հանուն խաղաղության և անկախության միջազգային դեմոկրատական շարժման անխզելի մասը, մեծ թափ ընդունեց համաշխարհային երկրորդ պատերազմից հետո, հատկապես 1951—1952 թվականներին:

Ավելի քան յոթանասուն տարի՝ 1882 թվականին անգլիական իմպերիալիստների կողմից Եգիպտոսը դրավելու մոմենտից սկսած, եգիպտական ժողովուրդը պայքարում է իր երկրի ազգային սովերենիտետի, ազգային անկախության համար, պահանջելով անգլիական տիրապետության և Եգիպտոսի ռազմական օկուպացիայի վերացում, որը հակառակ անգլիացիների կողմից բազմիցս արված խոստումների, շարունակվում է մինչև օրս:

Եգիպտոսում ազգային-ազատագրական շարժումը առանձնապես մեծ թափ ընդունեց 1919—1921 թվականներին, այն սկսվեց Հոկտեմբերյան Մեծ ռեյոլուցիայի ազդեցությամբ, բայց եգիպտական բուրժուազիան դավաճանեց

նրան, և շարժումը դաժանորեն ճնշվեց անգլիական իմպերիալիստների կողմից:

Բրիտանական իմպերիալիզմի տիրապետության հետևանքով Եգիպտոսը՝ հնագույն քաղաքակրթության և կուլտուրայի այդ երկիրը, հիանալի կլիմայով և աշխարհի ամենապտղաբեր հողն ունեցող երկիրը հասել է լիակատար քայքայման, իսկ նրա բնակչությունը՝ ծայրահեղ աղքատության: Անգլիական մետրոպոլիայի ագրարա-հումքային կցորդի, բամբակի մոնոկուլտուրայի, արդյունաբերական տեսակետից նվազ զարգացած մի երկրի վերածված Եգիպտոսը Մերձավոր Արևելքում օգտագործվում է որպես անգլո-ամերիկյան իմպերիալիզմի ռազմա-ստրատեգիական բազա: Անգլիական և օտարերկրյա այլ մոնոպոլիաների երկարատև տիրապետության հետևանքով, մոնոպոլիաներ, որոնք երկրից առավելագույն շահույթներ են կորզում, Եգիպտոսի հիմնական բնակչությունը՝ եգիպտական գյուղացիությունը, որը կազմում է երկրի բնակչության երեք քառորդից ավելին, խղճով, կիսաքաղց գոյություն է քայլ տալիս:

Մշակվող ամբողջ հողի 45 տոկոսից ավելին կենտրոնացած է խոշոր կալվածատեր-ֆեոդալների մի աննշան խմբի ձեռքին, իսկ 2,5 միլիոն գյուղացիական մանր տնտեսություններին ընկնում է մշակելի հողային ողջ տարածության միայն 30,3 տոկոսը, այլ խոսքով, յուրաքանչյուր գյուղացիական մանր տնտեսության բաժին է ընկնում մեկ ութերորդից մինչև մեկ քառորդ հեկտար: Երկրում արհեստականորեն ստեղծված հողի սովը, որը հետևանք է հողերը բռնագրավելուն և օտարերկրյա բանկերի ու բնկերությունների, մուսուլմանական կրոնական հաստատությունների, պետության և կալվածատերերի ձեռքը կենտրոնացնելուն, եգիպտական ֆելլահներին դեպի ստրկության է մղում խոշոր հողատերերի մոտ: Երկրի տնտեսական զարգացումն արգելակող իմպերիալիստներն ամեն կերպ պահում ու պաշտպանում են ֆեոդալական մնացուկները:

Մինչև օրս եգիպտական գյուղում շահագործման լայնորեն տարածված ձևեր են հանդիսանում կոոբ, կիսրարու-

թյունը, աշխատավճարումը՝ վարձակալական բարձր վճարը, վաշխատությունը, օտարերկրյա ընկերությունների, բանկերի և արտահանողների՝ գյուղացիներից աննշան գնով բամբակ մեծագնողների կողմից գյուղացիության կողոպտումը,— այդ բոլորը եզրիպտական ֆելլաճին հասցրել են լիակատար աղքատության:

Ավելի լավ դրության մեջ չեն նաև եզրիպտական բանվորները՝ մեծ մասամբ քայքայված ֆելլաճները, որոնք աշխատանք փնտրելու համար քաղաք են եկել և չնչին գնով ձեռնարկատերերին են վաճառում իրենց աշխատուժը: Նույնիսկ ՄԱԿ-ի ավլալներով երևում է, որ եզրիպտական տեքստիլագործ բանվորի աշխատավարձը ամենացածրն է ամբողջ Մերձավոր Արևելքում: Եզրիպտական բանվորը օրական աշխատում է տասնչորսից-տասնվեց ժամ. եզրիպտական բանվորների ընդհանուր թվի 15-ից մինչև 20 տոկոսը կազմում են տասնհինգ տարեկան երեխաները:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Եզրիպտոսում ամերիկյան էքսպանսիայի ուժեղացումը և հատկապես 1951 թվականի մայիսից սկսած «Տրումենի ծրագրի շորորոդ կետի» համաձայն նրա վզին փաթաթված «օգնությունը», որն ամեն կարգի արտոնություններ է ապահովում ամերիկյան կապիտալին, ավելացրին ժողովրդական մասսաների ճնշումն ու շահագործումը: Եզրիպտոսի աճող ռազմական ծախսերը, որոնք պայմանավորված են ԱՄՆ-ի և Անգլիայի կողմից Եզրիպտոսի վզին փաթաթված պատերազմի նախապատրաստությամբ, հասցրին բնակչության հարկերի մեծացմանը, գների աճին, ինֆլացիային և աշխատավոր մասսաների կենսամակարդակի խիստ իջեցմանը:

Թե ինչ աստիճանի աղքատության են հասել Եզրիպտական աշխատավորները կարելի է դատել հիվանդացումների ու մահացության շահերով. բնակչության 92 տոկոսը հիվանդ են բիխարդիայով (արյան հիվանդություն), 89 տոկոսը՝ տրախոմայով. եզրիպտացու կյանքի միջին տևողությունը կազմում է 24-ից 30 տարի, այնինչ Անգլիայում՝ 51 տարի: Եզրիպտոսում երեխաների կեսը մահանում է հինգ տարե-

կանին չհասած: Մահացության շահերի կողմից Եզրիպտոսը աշխարհում առաջին տեղերից մեկն է բռնում:

Հայրենի և օտարերկրյա զավթիչների դեմ եզրիպտական ժողովրդի մղած պայքարը, հողի, հացի և խաղաղության համար նրա մղած պայքարը անխուսափելիորեն դեմ առավ բրիտանական իմպերիալիզմի համառ դիմադրությանն ու ռեպրեսիաներին: Իր տիրապետությունը պահպանելու նպատակով Անգլիան 1936 թվականին Եզրիպտոսի վզին փաթաթեց ստրկացուցիչ ռազմական մի պայմանագիր, որն ամբապնդում է Եզրիպտոսի անգլիական օկուպացիան: Եզրիպտական ժողովուրդը երբեք չի դադարեցրել այդ պայմանագիրը խզելու համար մղվող պայքարը և պահանջել է իր երկրից դուրս հանել անգլիական օկուպացիոն զորքերը: Եզրիպտոսում ազգային-ազատագրական շարժումն առանձնապես ուժեղացավ համաշխարհային երկրորդ պատերազմից հետո: Երկրում աճող ազգային-ազատագրական շարժման ճնշման տակ վաֆլական կառավարությունը 1951 թվականի հոկտեմբերին անվավեր ճանաչեց անգլո-եզրիպտական պայմանագիրը: Բայց անգլո-ամերիկյան իմպերիալիստները որոշեցին բոլոր միջոցներով Եզրիպտոսը պահել որպես իրենց ռազմա-ստրատեգիական բազա: Հենց այն պահից, երբ Եզրիպտոսը շեղյալ հայտարարեց անգլո-եզրիպտական պայմանագիրը, Միացյալ Նահանգները փորձ արին Եզրիպտոսը ներգրավելու այն ազդեսիվ դաշինքի մեջ, որ հայտնի է «միջին արևելյան հրամանատարություն» անունով և որը նախատեսում է անգլո-ամերիկյան զորքերով օկուպացնել եզրիպտական տերիտորիան ու Եզրիպտոսի մարդկային ռեսուրսներն օգտագործել ՄԱՌՄ-ի և ժողովրդական դեմոկրատիայի երկրների դեմ ԱՄՆ-ի կողմից նախապատրաստվող պատերազմում: Սակայն ժողովրդի ճնշման ներքո վաֆլական կառավարությունը հարկազրված եղավ մերժել երկրի անկախության և սուվերենության հետ անհամատեղելի այդ առաջարկությունը, որի նպատակը, վերջին հաշիվով, Եզրիպտոսին Հյուսիս-ատլանտյան ազդեսիվ բլոկի ռազմական միջոցառումների մեջ ներգրավելն էր:

Իր ստվերենությունը պաշտպանելու և ստրկացուցիչ պայմանագրի լուծը դեն նետելու եզրիտական ժողովրդի փորձերին անգլիական իմպերիալիստները պատասխանեցին բացահայտ ագրեսիայով: Նրանք Սուեզի ջրանցքի գոտին փոխադրեցին ռազմական նոր կոնտինգենտներ և առանց հայտարարության պատերազմ սկսեցին Եգիպտոսի դեմ, գործի դնելով տանկեր, ինքնաթիռներ, ծանր հրետանի: Անգլիական զինվորները հողին էին հավասարեցնում եգիպտական քաղաքներն ու գյուղերը, հարձակվում խաղաղ բնակիչների վրա, կողոպտում ու սպանում անպաշտպան քաղաքացիներին, անկարգություններ անում և անարգում կանանց, երեխաներին ու ծերերին: Իր հայրենիքը պաշտպանելու համար միահամուռ կերպով ոտքի ելավ ամբողջ եգիպտական ժողովուրդը: Հատկապես ակտիվ և կազմակերպված ձևով հանդես եկան եգիպտական բանվորները, որոնք հանուն ազգային անկախության իրենց հետ պայքարի տարան գյուղացիությունը, արհեստավորներին, մանր բուրժուազիային, ինտելիգենցիային և ազգային բուրժուազիայի մի մասին: Եգիպտական բանվորները կազմակերպում էին ցույցեր ու գործադուլներ, ինչպես նաև դենքը ձեռքներին օկուպանտների դեմ կոչվում պարտիզանական ջոկատներում: Չնայած այն բանին, որ իմպերիալիստները գազանորեն դատաստան էին տեսնում պարտիզանների և երկրի խաղաղ բնակչության հետ, այնուամենայնիվ նրանք չկարողացան կոտրել եգիպտական ժողովրդի դիմադրությունը: Այն ժամանակ անգլիական իմպերիալիստները դիմեցին խորամանկության և պրովոկացիաների: 1952 թվականի հունվարի 26-ին, երբ Իսմայիլիայի խաղաղ բնակչության նկատմամբ օկուպանտների գազանային դատաստանից վրդովված Կահիրեի բնակչությունը դուրս էր եկել բողոքի ցույցի, անգլո-ամերիկյան գործակալությունը պրովոկացիոն ձևով անկարգություններ ու ընդհարումներ սարքեց, որոնց հետևանքով տեղի ունեցան մարդկային զոհեր:

Այդ ձևով Եգիպտոսի ներքին գործերին միջամտելու արհեստական պատրվակ ստեղծելով, անգլո-ամերիկյան իմ-

պերիալիստները Ֆարուկ թագավորից պահանջեցին իշխանությունից հեռացնել Մուսթաֆա Նահասի վաֆուական կառավարությունը, որպես «անվտանգությունն ու կարգը» չապահովող կառավարություն: «Վաֆո» պարտիայի հին պարագլուխը շտապեց հրաժարական տալ, վախենալով ժողովրդական մասսաներից դուրս եկած քաղաքական այն ուժերից, որոնք սկսել էին գործել երկրում: Քաղաքական ասպարեզից «Վաֆո» պարտիայի հեռացմամբ է՛լ ավելի սրվեցին անգլո-ամերիկյան հակասությունները, որոնք համապատասխանորեն աճում են, հենց որ ԱՄՆ-ը փորձ է անում իր մրցակցին՝ Անգլիային հա մղել Եգիպտոսում գրաված նրա դիրքերից:

Կես տարվա ընթացքում (հունվարից — հուլիս) Եգիպտոսում իրար հաջորդեցին մերթ պրոտանգլիական, մերթ պրո-ամերիկյան օրինեսացիայով վեց կառավարություններ: Մինիստրական այդ աթուղման ավարտվեց գեներալ Մուհամմեդ Նագիբի կողմից կատարված ռազմական հեղաշրջմամբ: Շուտով Նագիբը դարձավ պրեմյեր-մինիստր, ռազմական և ռազմա-ծովային մինիստր, ինչպես նաև զինված ուժերի գերագույն հրամանատար: Ժողովրդին ատելի, վարկաբեկված, բռնապետ Ֆարուկ թագավորը, առանց ղեկավարության, հեռացվեց ղեկավարությունից և աքսորվեց երկրի սահմաններից դուրս: Սակայն միապետական հին կարգը իր ֆեոդալական ձևում և խոշոր ավազանու, կալվածատերերի ու խոշոր բուրժուազիայի տիրապետությամբ շարունակեց գոյություն ունենալ: Արդարև, հաշվի առնելով եգիպտական ժողովրդի ռեուլուցիոն պայքարի աճը, որը ցայտուն կերպով գրսևորվեց վերջին տարիներում, գեներալ Նագիբը հայտարարություն արեց մի ամբողջ շարք ռեֆորմների մասին, որոնց կիրառմամբ պետք էր ամբացվեր նրա դիրքը: Այսպես, փաշաների և բեյերի կոշտները վերացվեցին, խոստացված էր ցրել թագավորին սպասարկող քաղաքական ոստիկանությունը, մշակված էր ռեսպուբլիկական ռեֆորմատատելու նախագիծ, հայտարարված էր ազրարային ռեֆորմի օրենքի մասին և այլն: Ազրարային ռեֆորմին վերաբե-

յող օրինքը նախատեսում է բունագրավել հողային այն տիրույթները, որոնք գերազանցում են 200 ֆեդգանից (ֆեդգանը հավասար է 0,42 հեկտարի): Հողատերերը հողի ավելցուկները պարտավոր են պետությունը վաճառել սահմանված գներով. պետությունն իր հերթին պետք է դրանք հողագուրկ և սակավահող գյուղացիներին վաճառի՝ հողի արժեքը երեսուն տարվա ընթացքում վճարելու պայմանով: Սակայն Եգիպտոսի միլիոնավոր հողագուրկ և սակավահող գյուղացիները իմպերիալիստների և խոշոր կալվածատերերի տիրապետության հետևանքով հասցվել են աղքատացման այնպիսի աստիճանի, որ ի վիճակի չեն հող ձեռք բերել նույնիսկ երեսուն տարվա տարկետումով: Հողային նման օրինակները հետևանքով հող կարող է ստանալ միայն ունևոր գյուղացիության աննշան մասը: Հետագայում գեներալ Նագիբի կառավարությունը ցրեց բոլոր քաղաքական պարտիաները:

Ռոժե վալանի գրքում համոզիչ կերպով ցույց է աբրվում, որ ոչ մի ճնշում ի վիճակի չէ կասեցնելու ազգային-ազատագրական շարժման հզոր աճը: Եգիպտական ժողովուրդը չի դադարեցնում օտարերկրյա զավթիչների դեմ հանուն իր երկրի ազգային սովերենության և անկախության մղվող պայքարը: Եգիպտական ժողովրդի պայքարը ընդդեմ անգլիական և ամերիկյան իմպերիալիստների և նրանց գործակալության՝ ի դեմս Եգիպտոսի ֆեոդալական բուրժուական ռեակցիոն վերնախավի, կպսակվի վերջնական հաղթանակով, որովհետև այդ պայքարը լիակատար աջակցություն է գտնում խաղաղասեր բոլոր ժողովուրդների կողմից, որոնք խաղաղության պահպանության գործը վերցրել են իրենց ձեռքը:

Լ. ՎԱՏԱԼԻՆՍ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԵՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻՆ, ՓԱՇԱՆ ԵՎ ԵԳԻՊՏԱԿԱՆ ՍՊԱՆ

Ես կահիրե հասա ինքնաթիռով, 1952 թվականի օգոստոսի 12-ին, տասնվեց օր անց ռազմական այն հեղաշրջումից, որի հետևանքով թագավոր Ֆարուկը հարկադրված եղավ հրաժարվել գահից և հեռանալ երկրից:

«Մեմբրամիս» հյուպանոցի կարին սարքված այգում, որը միաժամանակ ծառայում է որպես նախաճաշարան և ռեստորան՝ մի վայր, ուր սովորաբար դիպլոմատները, քաղաքական գործիչները և ամբողջ աշխարհի թերթերի հատուկ թղթակիցներն են հավաքվում, — ես հանդիպեցի իմ անգլիացի և ամերիկացի գրչակիցներին, որոնց ահա արդեն քսան տարի է, ինչ անփոփոխ կերպով հանդիպում եմ երկրագնդի ամենատարբեր վայրերում: Նրանցից շատերն իր ժամանակին եղել են ռազմական թղթակիցներ: Մենք միասին ենք լսել գեներալ Բրեդլիի շտաբի տագնապալի հաղորդագրությունները 1944 թվականի դեկտեմբերին, երբ Ֆոն-Ռունշտեդտը Արդենների վրայով Անավերպենի վրա էր նետում իր բանակները, սպառնալով երկու մասի կիսել դաշնակիցների բանակները: «Մենք փրկված ենք, — հայտնեց մեզ ամերիկյան ղեկները մի անգամ, երեկոյան դեմ: — Ռունսերն սկսել են իրենց ձմեռային հարձակումը, և ինձ հենց նոր հաղորդեցին, որ տանկային թարմ դիվիզիաները, որ Ֆոն Ռունշտեդտը մտադիր էր մեր դեմն ուղղել, հապճեպորեն Արևելյան ճակատն են ուղարկվում»:

Անգլիական «Դեյլի Մեյլ»-ի թղթակից Ուոլտեր Ֆարրը, որն արդեն բավականին վիսկի էր կոնծել, ինձ տեսնելուն պես ասաց.

— Ահա մենք բոլորս նորից հավաքվել ենք: Վատ նախանշան է Եգիպտոսի համար: Ուր որ մենք թռչում ենք, այնտեղ միշտ արյուն է թափվում...

Նվ նա կռավեց ճիշտ ազնավի նման, թեև, իրոք, ջանում էր շատ ազատություն շտալ լեզվին. չէ՞ որ նա անգլիացի է:

Հարևան փոքր սեղանի մոտ ամերիկյան դեսպանության ինչ-որ մի աշխատակից հյուրասիրում էր եգիպտական բանակի մի երիտասարդ սպայի: Բոլոր դիպլոմատներն ու ժուռնալիստները նախանձում էին նրան, որովհետև անսահման աչքաբացություն և հմտություն է պետք, որպեսզի ռազմական հեղաշրջման հաշորդ օրը բարեկամական հարաբերություններ հաստատես զինվորականի հետ:

Երիտասարդ սպան ատլետի կազմվածք ուներ: Այդ տիպի մարդիկ Նեղոսի հովտում հազվագյուտ չեն: Ֆրանսիայում, որտեղ հանդիպում ես լոկ այն եգիպտացիներին, որոնք շքեղ հյուրանոցներում են ապրում և մշտապես գեր են ու բոլորովին էլ եգիպտացու նման չեն, կարելի է մոռացության տալ, որ Եգիպտոսի ներկայացուցիչները սպորտի միջազգային մրցումներում հաճախ են հաղթող դուրս գալիս: Եգիպտացի լողորդներին, սուսերամարտիկներին, բասկետբոլիստներին դժվար է արժանի ախոյաններ գտնել: Եգիպտացիները բարձրահասակ, նուրբ և բարեկազմ ժողովուրդ են, և եթե գյուղացու որդուն ավելի երջանիկ բախտ վիճակվի, քան հորը, և նա կարողանա ավելի լավ սնվել, այլ խոսքով, եթե ճաշին եգիպտացորենից պատրաստած աղքատիկ բլիթից և թյուրբական սիսեռից բացի, նա ունենա նաև մի կտոր միս, ապա նրա մոտ կհայտնվեն մկաններ, և նա շուտով կդառնա ատլետ:

Ամերիկացին բարձրահասակ էր, ամրակազմ, ոչ մեծ փորով ու հազիվ նկատելի ճաղատ՝ իսկական չինոպնիկ:

Նրա աչքերը ծածկված էին ակնոցներով, իսկ նուրբ բերանը չգիտեր, թե ինչ բան է ժպիտ ասածը. նա ամերիկյան տիպիկ գործարար էր և նոր տիպի դիպլոմատ: Վաղուց են անցել այն ժամանակները, երբ անբարեկազմ, երկար ոտներով, ժպտալիս ոսկի ատամները բացող յանկի-բիսնեսմենը տնօրինում էր Ամերիկայի գործերը: Նա չապրեց 1929 թվականի ճգնաժամը: Այժմ վրա է հասել չինոպնիկների թագավորութունը, սառը հաշվի թագավորութունը:

Անգույն շրջանակ ունեցող ակնոցներով այդ ամերիկացու հայացքը արագ, ասես հորձանքներով, տեղափոխվում էր եգիպտացու երկար իրանի ողջ երկայնքով՝ հետամտում էր, գնահատում, չափում, կշռում, ենթադրում էր, հաշվում. այդ հայացքի մեջ մարդկային ոչինչ չկար. ամերիկացու ակնոցների ապակիներից արտացոլվող կաթձերը նրա աչքերը նմանեցնում էին ուլունքե աչքերի, որպիսիք պատահում են որոշ միջատների մոտ: Երբ ամերիկացին դադարում էր հետամտելուց և ունկնդրելուց, նա սկսում էր խոսել, և նրա հայացքը անշարժանում էր, դառնում ոչ թե բացակա, ինչպես լինում է, երբ որևէ բանի մասին ես երազում, այլ ինչ-որ ապակյա հայացք, — իսկ անշրթունք բերանը նրձկում էր անողորմ պլաններ, որոնց կիրառումը Ամերիկային ավտոմատ կերպով տիրապետութուն կապահովեր աշխարհի վրա: Այդ մարդը հանքային ջուր էր խմում և ուտում խաշած բանջարեղեն: Թող Կորեայում մարդասպանութուն կատարող մանր մարդիկ և Վերսալի ու Ֆոնտենբլոյի ուտելու կարտով բռնված էմիրանտները դինու մեջ մոռացում փնտրեն և առանց զարթնելու խմեն զօր ու գիշեր: Մեծ Ամերիկայի ուղեղային տրեստը բուսակերներից և ոգելից ըմպելիքների արգելման կողմնակիցներից է կազմված:

Նա չէի կարող հայացքս պոկել այդ ամերիկացուց. նա ինձ զարմացնում և վախեցնում էր: «Ժամանակակից իմպերիալիզմի վերջին արտադրանքն է», — մտածեցի ես: Փշրված ապակու բեկորների նմանող աչքերով, խելագարությամբ դիվահարված ալգալիսի չինոպնիկներն են ահա, որ սառնա-

սրբապետութեամբ հաշվում են, թե ինչքան միկրոսէ քաճանջ-
վում մեկ միլիոն շինացիներ ոչնչացնելու համար, և ինչքան
դուլար է հարկավոր եգիպտական մի սպայի կաշառելու և
նրան «ատլանտյան բանակի» մի համաքաղրող դարձնելու
համար:

Եգիպտացի սպան, որը ընդոստ, անշնորհք շարժումնե-
րով մի խոխա էր, ակնհայտ կերպով կաշկանդված էր զգում
իրեն. այդպիսի սիրալիրութեամբ, իսկ նրան հյուրասիրող
գիպտոմատը այդ ուղղութեամբ անբասիր էր, անհանգստաց-
նում էր նրան: Նկատելի էր և այն, որ նրան հաճելի չէր
այդքան մանրակրկիտ ուսումնասիրութեան և կշռվելու-չափ-
վելու առարկա դառնալը: Նա շարունակ շուրջ բոլորն էր
նայում, զննում այգին. նախկին փաշաների որդիները պա-
րում էին իրիկնային զգեստներ հագած օտարերկրացի կա-
նանց հետ. իտալացի մետրոպոլիտները կարճ հրամաններ էին
տալիս եգիպտացի սպասյակներին, որոնք իսկույն վազ էին
տալիս դրանք կատարելու. օտարերկրյա թղթակիցները աչք-
ները շռել էին խալի գույնի համազգեստի վրա, որը դեռևս
նոր իշխանութեան առեղծվածային սիմվոլն էր. ծաղկուն
գարավանդի ստորոտին, լուսնի լույսի մեջ տարածված Նեղո-
սը թվում էր թատերական մի դեկորացիա, իսկ հոսանքն ի
վեր փոված թաղամասերը, որտեղ աշխատավոր ժողովուրդն
է ապրում՝ մարդու հոգին հագիվ տազնապող մի հիշողու-
թյուն: Կարելի էր շտարակուսել, որ եգիպտացի երիտասարդ
սպան «Սեմիրամիսում» առաջին անգամն էր ճաշում:

Նա սկսեց խոսել՝ դանդաղ, դժվարութեամբ գտնելով
օտար լեզվի բառերը: Այնուհետև իրեն զինվորական արհես-
տին նվիրած երիտասարդի բերտ, ուղղագիծ շարժումով նա
ձեռքի ափով խփեց փոքրիկ սեղանին: Նրա աչքերն այրվում
էին: Անշուշտ նա խոսում էր ռեֆորմի նախագծերի մասին,
որոնցով այդ օրերին բոլոր թերթերն էին լցված, — հենց
այդ ժամանակ վերացվել էին մամուլի գրաքննչական ար-
գելքները: Ամերիկացին մատնեցով դանդաղորեն թմբկահա-
րեց սեղանին:

Ներս մտան երկու հոգի և նստեցին մեկուսի, չազի

մաներաներով Ռավել¹ նվագող բրավուրիստական նվագախմբից
քիչ հեռու: Ներս մտնողներից մեկը, ըստ երևույթին, կարևոր
մի թուշն էր. բոլորը, որոնց նա հայացքով հանդիպում էր,
իսկույն հարգանքով բարեկամ էին նրան: Նա ինչ-որ բանից
վրդովված էր, և նրա դեմքը մռայլ էր, ճիշտ այնպես, ինչպես
ծովը փոթորիկից հետո՝ կապարագույն, սպիտակավուն ցու-
քով: Ներքին, շնածկան նման հակայական ծնոտը կախ էր
ընկել՝ կարծես նրան տեղում պահող սկզբը դուրս էր ըն-
կել: Նրան ուղեկցող մարդը, որը, ակներևաբար, դատելով
նրա հաճոյակատար քծնանքի շարժումներից, նրա կառա-
վարիչն էր կամ հավատարմատարը, — ամեն կերպ աշխա-
տում էր զվարճացնել իր տիրոջը, բայց ստիպված էր լինում
ինքը ծիծաղել իր սեփական սրախոտութեանների վրա: Իսկ
նրա գրուցակիցը նստել էր շատ ձիգ, լուռ, հանգած հա-
յացքով և անշարժությամբ հիշեցնելով մեռելի: Սա այդպես
էլ սպասում էր, որ ահա ուր որ է նրա կախ ընկած ներքին
ծնոտը կկափկափի, և ատամները կկափվեն իրար:

Չարը, որը նրա հետ ծանոթ էր, մոտեցավ նրա սեղա-
նին: Բանից պարզվում է, որ դա հողային խոշոր մի սեփա-
կանատեր էր, նախկին փաշա, վերջին թագավորի մեծ սի-
րելին: Չարուկի հրաժարականից մի օր հետո, նա կամավոր
կերպով թողել-զնացել էր իր փոքր պալատը, որը կառույ-
ված է նրա կալվածքներից մեկի խորքում, Նեղոսի դելտայի
վրա: Նա ձերբակալվելու սպառնալիքի տակ էր, բայց դա
նրան առանձնապես չէր անհանգստացնում. իր երկարամյա
փորձից ելնելով, նա գիտեր, որ եգիպտոսում ամեն ինչ կա-
րելի է հարթել, միայն թե փող լինի: Այժմ նա հենց նոր
հապճեպորեն վերադարձել էր Կահիրե, այս անգամ իրապես
ոչ թե կատակով վախեցած: Գյուղացիները՝ նրա գյուղացի-
ները, հրաժարվել էին վարձակալութեան վճարը տալուց,
թեև վճարման ժամկետն անցել էր Նեղոսի վարարումի հետ.

¹ Ռավել Մարիա — (1875—1937) աչքի ընկնող ֆրանսիացի կոմպո-
զիտոր: Մանոր, կարճ (Սյու և հետագա ծանոթագր. ոտյ. թարգմանու-
թյան խմբագրիմ էն):

1922

5501

1537



նրանք չէին ցանկանում նույնիսկ իրեն ողջունել: «Դու այլ-
ևս փաշա չես,— ասել էր նրան մի ֆեւրա՛հ,— և մենք քեզ
ոչինչ պարտք չենք»:

Քսան միլիոն բնակչությունից տասնվեց միլիոնը ֆեւ-
րահներ են և միայն վեց հարյուր հազարը բանվորներ:
Եգիպտական հասարակությունն ապրում է ֆեւրահների աշ-
խատանքի հաշվին: Ֆեւրահ արաբներեն նշանակում է գյու-
ղացի, բայց նրա աշխատանքով կերակրվող հարուստների
շրջանում «ֆեւրահ» բառը նվաստացուցիչ իմաստ է ստացել.
Ֆեւրահը՝ դա նույնն է, թե ասես՝ բոհ, գոհճիկ, անտաշ մու-
ժիկ: Թյուրքերը, Օսմանյան կայսրության դարաշրջանում
եգիպտոսի նախկին տիրակալները, գոռոզանալով իրենց
ուսումական քաղաքակրթությամբ, արհամարհանքով էին վե-
րաբերվում հողագործությամբ զբաղվող ժողովուրդներին,
այդ պատճառով էլ նրանց համար ֆեւրահը նշանակում էր
եգիպտացի: Այսպիսով, որևէ եգիպտացի, լինի նա գյուղա-
ցի, թե փաշա, թյուրքի աչքին մի մուժիկ է: Այս իմաստով
Օսմանյան կայսրության տապալումը ոչինչ չի փոխել: Ոչինչ
չկա ասելու հաճելի՝ հեռանկարներ Միջին Արևելքում «հա-
մատեղ պաշտպանության պակտ» կնքելու համար, եթե այդ-
պիսին ընդհանրապես կնքվի՝:

1 Խոսքը վերաբերում է «միջին արևելյան հրամանատարության»,
արևմտյան տերությունների ագրեսիվ պլանի նոր վարիանտին, որը նա-
խատեսում է Մերձավոր և Միջին Արևելքի երկրների օկուպացիան ամե-
րիկա-անգլիական զորքերի կողմից և այդ երկրների ներգրավումը իմպե-
րիալիստների կողմից պատրաստվող երրորդ համաշխարհային պատե-
րազմին: «Միջին արևելյան հրամանատարություն» ստեղծելու նախագիծը
այնպիսի վճռական դիմադրության հանդիպեց Մերձավոր և Միջին արև-
վելքի ժողովուրդների մոտ, որ արևմտյան տերությունները հարկադրված
եղան հրաժարվել նրա իրականացումից: Սակայն նրանք չհրաժարվեցին
իրենց ագրեսիվ մտադրություններից և 1952 թ. օգոստոսին առաջ քաշե-
ցին մի նոր, այսպես կոչված «միջին արևելյան պաշտպանական կազմա-
կերպություն» ստեղծելու էլ ավելի քողարկված պլան: Իրականում այդ
«պաշտպանական» կազմակերպությունը հետամտում է նույն այն ագրեսիվ
նպատակները, ինչ որ «միջին արևելյան հրամանատարությունը»:— Մա-
նոբ. Խմբ.:

— Եթե ֆեւրահը ոտքի կանգնի և ուսերն ուղղի,— նկա-
տեց Ֆարրը,— «Սեմիրամիս» հյուրանոցին վերջ կլինի:

Եվ նա նորից սկսեց կռավել, միայն ավելի զգույշ, քան
առաջին անգամ, որովհետև նա ինչքան շատ է վիսկի խմում,
այնքան ավելի է անգլիացի դառնում:

Ամերիկացին և եգիպտացի սպան դուրս եկան: Լիֆտի
մոտ նրանք երկուսով միասին, մեկը մյուսին ճանապարհ
տալով մի կողմ քաշվեցին: Եգիպտացին մի վայրկյան դան-
դաղեց և առաջինը մտավ լիֆտ: Ամերիկացին, թողնելով,
որ իր հյուրն առաջ անցնի, դանդաղորեն՝ վերևից ներքև
հայացք գցեց նրա վրա, և այդտեղ առաջին և եզակի անգամ
նրա շրթերի վրա ես ժպիտ տեսա:

ԳՂՈՒՆ ԵՐԿՐՈՐԳ

ՄԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Նկարագրված դեպքերից երկու շաբաթ առաջ, հուլիսի 23-ի երեկոյան, Կահիրեի կայազորի երեք երիտասարդ սպաներին հայտնի դարձավ, որ լուսարացին նրանց կալանավորելու են:

Նրանցից մեկը հետևակ էր, մյուսը՝ տանկիստ, երրորդը ծառայում էր Պաղեստինում պատերազմած և ժամանակավորապես Կահիրե տեղափոխված բանակում: Երեքն էլ անդամներ էին «Ազատության սպաներ» գաղտնի ընկերության, որը վաղուց դավադրություն էր պատրաստում միապետության դեմ: Արդեն բազմիցս ապստամբության պլաններ էին մշակվել, բայց վերջին պահին, չգիտես ինչու, ոչինչ չէր ստացվում: Այժմ մի նոր դավադրություն էր պատրաստվում, որի կենսագործումը նշանակված էր օգոստոսի կեսին: Երեք երիտասարդ սպաները դավադրությունը նախաձեռնողների մեջ էին, և ինչպես երևում է, դրա շուկները հասել էին թագավորական ոստիկանությանը:

Նվաճ սպաները սրտեցին թագավորի ոստիկանությունից առաջ ընկնել և ապստամբություն բարձրացնել Կահիրեի կայազորում: Շատ ուշ էր «Ազատության սպաների» ընկերության ղեկավարների հետ ապստամբությունն սկսելու վերաբերյալ բանակցություններ վարելու և նրանց համաձայնությունն ստանալու համար, բացի այդ, հազիվ թե հաջողվեր այդպիսին ստանալ. գեներալները իմպրովիզացիաներ չեն սիրում: Այդպիսով երեք երիտասարդ սպաները գործում

էին բացառապես սեփական սխրագործության և պատահականության հաշվով:

Այդ սպաների հրամանատարության տակ ելած զորամասերը գնացին նրանց հետևից: Ինչ չափով որ նրանք հանգուցային կետեր էին գրավում, նրանց միանում էին այլ սպաներ: Բավական էին մի քանի հանդիպումներ և հեռախոսային զանգահարումներ, որպեսզի ապստամբությանը միանար ավիացիան, այնուհետև նաև հրետանին: Ինչ-որ կես ժամում, ապստամբության ամենաթեժ պահին, ստեղծվեց ինը անդամից կազմված Ռազմական կոմիտե, որը շուտով դարձավ մայրաքաղաքի տերը և, պետք է ասել, դրա համար շատ շփոթված էր: Կահիրեում տեղի ունեցածին ինչպես են վերաբերվելու երկրի այլ կայազորներ, թագավորը, կառավարությունը, անվիացիները, որոնց կայազորները գտնվում են Սուեզի ջրանցքի գոտում, ամբրիկայցիները, որոնց նավատորմը Միջերկրական ծովն է ակոսում: Ապրատամբների մեջ աստիճանով ամենից ավագը մի փոխ-գնդապետ էր:

Գիշերվա ժամը երկուսին Ռազմական կոմիտեն գարթեցնում է գեներալ Նազիրին՝ Պաղեստինի կամպանիայի մասնակցին, միակ գեներալին, որը թագավորին առարկելու վճռահանությունն ունեցող մարզու համբավ էր վայելում և դրա համար էլ «Ազատության սպաների» ընկերության ղեկավարներից մեկն էր (բայց, ըստ երևույթին, ոչ ամենաազդեցիկը): Սկզբում նրան են դիմում խորհուրդ ստանալու համար՝ թե ինչպես վարվել ստեղծված բազաբազան իրադրության պայմաններում, հետո նրան առաջարկում են գլխավորել ապստամբությունը: Նա համաձայնվում է:

Առաջին երեք դավադիրներից մեկը պետք էր կտրեր հեռախոսային այն լարերը, որոնք Կահիրեն միացնում էին Նզիպտոսի այլ կայազորների և Ալեքսանդրիայի հետ, որտեղ այդ ժամանակ հանգստանում էին թագավորը, կառավարության անդամները և գլխավոր շտաբը: Բայց նա, չգիտես ինչու, այդ բանը չի անում: Երեկ ինչ-որ մեկը խանգարում է նրան, կամ թե չէ նա պարզապես մոռանում է կատարել

առաջադրանքը: Պարզվում է, որ դա ձեռնառու է գեներալ Նազիրին և Ռազմական կոմիտեին, որոնց բավական եղավ միայն հեռախոսով կապվել այլ կայազորների հետ, որպեսզի իսկույն ապստամբութեանը միանա եզրիտական ամբողջ բանակը: Լուսաբացին նրանք արդեն ամբողջ երկրի տերն էին և աշխարհի ամենաերջանիկ մարդիկ:

Այս հեղաշրջման սկիզբը նման է Ստենդալի «Ժտալական խրոնիկաներին»: Ես այստեղ ոչ մի մեղք չունեմ: Ես շատ ականատեսների ևմ հարցուկործեմ և նույնիսկ ապրտամբութեանը գլխավորող երիտասարդ մարդկանցից ոմանց. ամեն ինչ իրականում տեղի է ունեցել հենց այնպես, ինչպես ես նկարագրեցի:

Առավորության ժամը 8-ին գեներալ Նազիրը հավաքում է Ռազմական կոմիտեն և նրան անում է հետևյալ հարորդումը.

— Ինձ նոր այցելեց Միացյալ Նահանգների ղեսպանութեան ներկայացուցիչը, որի ասելով անգլիացիները մտադիր են ռազմական ուժի օգնութեամբ Ֆարուկին պահել գահի վրա: Ամերիկացիները պատրաստ են ճնշում գործադրելու Լոնդոնի վրա, որպեսզի ես մղեն մեզ սպանացող հարվածը: Բայց նրանք մտադիր չեն կրակից շարանակներ գուրս բերել կոմունիստների համար: Նրանք պահանջում են, որ մենք նշանակենք Մինիստրների խորհրդի մի այնպիսի նախագահ, որը կարողանա երաշխավորել, որ Մինիստրների խորհուրդը չի գործի Մոսկվային ձեռնառու ձևով: Ես առաջարկեցի Ալի Մախերին: Նրանք համաձայն են:

Ռազմական կոմիտեում, որի երկու երրորդը բաղկացած էր «Մուսուլմանական եղբայրութեան» ընկերության հետ առավել կամ պակաս սերտորեն կապված սպաններից, իսկ մի երրորդը՝ պրոգրեսիվ տարրերից, բորբոքվում են բուն վիճարանութեաններ:

Պրոգրեսիվ տարրերը պնդում են, որ անգլիական միջամտության փտանգը փչոց է:

«Անգլիացիները տնտեսական տեսակետից այնքան շատ են շահագրգռված նզիպտոսում, որ ոխակ չեն անի պատերազմ սանձաղերծել, — ասել են նրանք: — Առանց այն էլ նրանք Ասիայում մինչև կոկորդը խրված են բարգութեանների մեջ, էլ ինչո՞ւ Նեղոսի գերտան վերածեն մի նոր «Մալայայի»:

«Միևնույնը չի՞ արդյոք, թե անգլիական վտանգը փչոց է, թե ոչ, — առարկում են նրանց՝ կոմիտեի անդամ երեք օղաչունները: — Փարիզը մի պատարագ արժի», ասել է Ֆրանսիացի թագավորներից մեկը: Միացյալ Նահանգների աջակցութեանը արժե մի Ալի Մախեր: Թերևս մենք այդ ժամանակ ռեակտիվ ինքնաթիռներ ստանանք...»:

Բանն այն էր, որ այդ օղաչուններից մեկը ստաժավորումից հետո հենց նոր էր վերադարձել Միացյալ Նահանգներից և հիշելով այն հոյակապ ինքնաթիռները, որոնց հետ նրան թույլատրել էին խաղալ այնտեղ, շարունակում էր հիացումից շնչասպառ լինել:

«Ալի Մախերը, — բողբոքում են ղեմնկրատները, — հրշակվել է ղեմնկրատական շարժման նկատմամբ ցուցաբերած իր գազանային դատաստանով և Սովետական Միութեան նկատմամբ ունեցած իր ատելութեամբ: Նա Անգլիայի ղեմ կպայքարի միայն նրա համար, որպեսզի մեզ նետի Միացյալ Նահանգների դիրկը, իսկ ռազմական դաշինքների համար այդ գենք մատակարարողները մեզ հարկադրելու են մտնել պատերազմի քաղաքականութեան ուղին, որն ակնհայտորեն հակասում է նզիպտոսի կենսական շահերին»:

Ռազմական կոմիտեում այդ առիթով երկար ժամանակ տաք վիճարանութեաններ են տեղի ունենում: Գեներալ Նազիրը խոստանում է միանալ մեծամասնութեան կարծիքին:

Ընդհանրապես ասած, այդ վիճարանութեաններն անիմաստ էին, որովհետև այժմ, ըստ իս, ստուգապես հաստատված է, որ անգլիացիները չեն էլ պատրաստվել ռազմական ուժով պաշտպանել Ֆարուկի գահը: Գեներալ Նազիրը վաղուց ի վեր բարեկամական հարաբերութեանների մեջ էր Ալի Մախերի հետ, որի մոտ իր ժամանակին ռազմական

ակադեմիայում դասախոսություններ էր լսել իրավագիտու-
թյան մասին: Նա Ալի Մախերի թեկնածությունն էր առաջար-
կում դեռևս մինչև ձախողված դավադրությունները, երբ քըն-
նարկվում էր, թե ով է գլխավորելու եգիպտական ապագա
կառավարությունը:

Վերջապես, ոչ ոքի համար դադանիք չէր Ալի Մախերի՝
Եգիպտոսի գործարար շրջանների այդ խոսափողի կապը
աշխարհի առաջին կապիտալ արտահանող Միացյալ Նա-
հանգների հետ: Միակ բանը, որ այդպես էլ մնաց չպարզ-
ված, այն է, թե զեներալ Նադիրը մասնակցե՞լ է արդյոք
ԱՄՆ-ի դեսպանության և Ալի Մախերի սարքած անգլիացի-
ների ուղղման ինտերվենցիային վերաբերող լեգենդի
ստեղծմանը, թե ինքն էլ զո՞հ է եղել խաբեության:

Երկար քննարկումներից հետո Ռազմական կոմիտեն
վեց ձայնով ընդդեմ երեքի որոշում է հանձնարարել Ալի
Մախերին գլխավորելու կառավարությունը:

Այսպիսով, մեր երիտասարդներն ընդամենը միայն մի
առավոտ են իրենց ձեռքում պահում այն իշխանությունը,
որին հասել էին մի սոմանտիկական գիշերվա ընթացքում:



Ընդհանրապես ասած, ապստամբությունից դեռևս շատ
առաջ բոլոր պայմանները կային, որ գոյություն ունեցող
կարգը փլվի մատի մի հարվածով:

1952 թվականի հունվարի 26-ին Կահիրեում ծագած
անկարգություններն ու հրդեհը միայն շատ քիչ ժամանակ
խաբեցին հասարակական կարծիքը: Շուտով հայտնի դար-
ձավ, որ դա թագավորական պալատի և անգլիացիների կող-
մից կազմակերպված մի պրոպագանդա էր. պատրվակ էր
հարկավոր Նահասի հրաժարականի, վաֆդական պառլա-
մենտը ցրելու, երկրում պատերազմական դրություն մտցնե-
լու համար և, որ գլխավորն է՝ ցրելու ժողովրդական զինված
ջոկատները, որոնք Սուեզի ջրանցքի գոտում կռվում էին
անգլիական օկուպանտների դեմ:

Հունվարի 26-ից մինչև հուլիսի 24-ը ընկած ժամանա-
կամիջոցում օրեցօր աճում էր դժգոհությունը ընդդեմ թա-
գավորի: Ընտրություններում ձայների ճնշող մեծամասնու-
թյուն ստացած և այդ հիման վրա իրենց ժողովրդական
կամքի իսկական արտահայտիչներ պատկերացնող վաֆդա-
կանները չէին կարող ներել Ֆարուկին, որ նա անօրինական
ձևով իրենց հեռացրեց իշխանությունից, իսկ հետո նաև
խաչատառակեց, հրապարակելով կաշառակերությունների մի
բանի դեպքեր, որոնք լայնորեն կիրառվում էին Եգիպտո-
սում, մինչդեռ միապետն ինքը նման գործարքների գլխավոր
գործող անձն էր և շատ էր հարստացել զրանից: Գեմեկրա-
տական կազմակերպությունները չէին կարող ներել թագա-
վորին, որ նա վերացրեց կոնստիտուցիոն ազատություն-
ները, որ բանտերն ու համակենտրոնացման ճամբարները
լցված էին բերնե բերան: Բանվորները չէին կարող նրան նե-
րել, որ նա խոչընդոտ հանդիսացավ արհմիությունների Համ-
ընդհանուր կոնֆեդերացիա ստեղծելու գործին, իսկ բանակն
այն բանի համար, որ նա իր պաշտպանության տակ էր
առել կաշառակերներին ու սեռական գանձը կողոպտողնե-
րին, Պաղեստինի արշավանքի ձախողման մեջ մեղավորնե-
րին: Բացի այդ, տնտեսական ճգնաժամից տուժել էին
բնակչության բոլոր շերտերը՝ առևտրականներն ու արհես-
տավորները, բանվորներն ու գյուղացիները, մի տնտեսական
ճգնաժամ, որը սերտորեն կապված էր բամբակագործույնու-
նը կազմալուծող ճգնաժամի հետ, և որի դեմ պայքարելու
համար կառավարությունը ոչ մի միջոց չէր ձեռնարկել:

Ֆարուկի ողջ կերպարանքը ասես իրենով մարմնավո-
րում էր նրա խաչատառակ սեփմը: Լինելով հսկայական, շա-
փից ավելի ճարպակալված մարդ, նա նույնիսկ արտաքնա-
պես տարբերվում էր իր հպատակներից. դե նա ուտում էր
անհամեմատ ավելի շատ, քան նրանցից որևէ մեկը, ըստ
որում միշտ ոսկյա ամաններով, Ֆարուկի նախաճաշերի մա-
սին, ի սիոփումն նրա սոված հպատակների, հրաշքներ են
պատմում: Պակաս լեգենդներ չեն պատմում նաև կանանց
նկատմամբ նրա ունեցած հակումի մասին: Գիշերն անընդ-

հաս րեֆ անելուց հետո Ֆարուկը կարողանում էր ամբողջ օրը որս անել անապատում: Ասում էին, որ նա ընդունակ է բոունցքի մի հարվածով գետին տապալել հակառակորդին: Այդպիսի «բացառիկ տվյալներ» ունենալով, նա կարող էր գառնալ կիսասոված: Բայց երբ նրա երեսուն տարին լրացավ, Ֆարուկը, իր նախորդ շատ բռնապետների նման, ամեն ինչի նկատմամբ կորցրեց ճաշակը և սկսեց բավականություն ստանալ միայն իր հպատակների նվաստացումով: Մի օրն է կնոջ տիրելու ցանկությունը նրա մոտ հայտնվում էր միայն այն դեպքում, երբ այնտեղ էր լինում այդ կնոջ ամուսինը. նա հարգանք ու պատիվ էր տալիս միայն այն միևնույնիսկներին, որոնք հանդուրժում էին իր քացիներն ու ապատակները: Երիտասարդ Հերկուլեսը դարձել էր թագավոր Ուբու:

Որոշ պայմաններում շուրջ չի սառչում նույնիսկ զբոյլից ցած շեմաստիճանում, բայց բավական է ամենափոքր շարժումով խախտել նրա հանգիստ դրությունը՝ օբիյնակ, նրա մեջ ապակյա մի ցպիկ մտցնել, — և շուրջ իսկույն կպնդանա, սառույց կդառնա: Ֆիզիկոսներն այդ երևույթն անվանում են գերսառեցում: Ծիշտ այդպես, Եգիպտոսի թագավորական կարգը արդեն վաղուց «գերսառեցման» վիճակում էր գտնվում, և երեք երիտասարդ սպաները՝ հուլիսի 23-ի դիշերվա հերոսները, տվյալ դեպքում խաղացին ապակյա ցպիկի դերը: Տարբերությունը միայն այն է, որ նրանց, ինչպես նաև գեներալ Նազիրին ու Ռադմական կոմիտեի մյուս անդամներին է պատկանում ճիվաղին հաղթողների փառքը: Այդ պատճառով էլ այժմ, ինչպես և հետագայում երկար ժամանակ, չի կարելի հաշվի շահնել այդ նորահայտ սուրբ գեորդներին:

Նույն այն պայմանները, որոնք այնպես հեշտացրին թագավորական կարգի տապալումը, ծայրահեղ շարժումով բարդացրին նրա հաջորդների դրությունը:

1 Թագավոր Ուբու — անցած դարի 90-ական թվականներին Ֆրանսիայում ժողովրդականություն վայելող համանուն կոմեդիայի գործող անձը, որի կերպարում մարմնավորված են սնափառության, եսասիրության, ազահության և պարծենկոտության գծերը: Մանոթ. խմբ.:

Այսպես կոչված «մաքրագործման» այն կամպանիան, որ Ալի Մախերն սկսեց հունվարի 25-ի անկարգությունների հենց հաջորդ օրը, անհետևանք չմնաց «Վաֆդ» պարտիայի համար: Այդ կամպանիան այնքան կեղտ առաջացրեց, որ ամբողջապես պղտորեց շուրջ. պարտիայի ստորին կազմակերպություններն սկսեցին կասկածով վերաբերվել իրենց առաջնորդներին, իսկ վերջինները ոչինչ անել չէին կարող, որովհետև մամուլի ազատության վերացումը հրապարակորեն պաշտպանվելու հնարավորությունից զրկում էր նրանց: Բեպրեսիաներից վախեցած, նրանք սկսեցին իրար մեղադրել: Մի խոսքով, 1952 թ. հուլիսի 24-ի առավոտյան «Վաֆդ» պարտիան այնպիսի անբարենպաստ դրություն մեջ էր գտնվում, որ բնավ չէր կարողանում պատշաճ հեղինակություն մատակարարել ժողովրդի կամքի արտահայտչի տրադիցիոն գերին:

Ամենաբոցաշունչ հայրենասերները գտնվում էին համակենտրոնացման ճամբարներում. Սուեզի ջրանցքի գոտում անդիակական զավթիչների դեմ պայքարելու համար ստեղծված «ազգային կոմիտեները» ցրվել էին. խաղաղության կողմնակիցների կոմիտեները թուլացած, իսկ նրանց ղեկավարները բանտ էին նետված. բանվորական և գյուղացիական կազմակերպությունները քշվել էին ընդհատակ:

Վերջապես բանակը վատ էր նախապատրաստված այն դերի համար, որ նա խաղալու էր: Բայց դա որոշ պարզաբանում է պահանջում:

Եգիպտոսում չկա կաստայական սպայություն, ինչպես Հարավային Ամերիկայի մի քանի երկրներում կամ Թյուրքիայում: Եգիպտական սպաների մեծամասնությունը մանր բուրժուազիայի միջավայրից դուրս եկած մարդիկ են: Նրանց շատ քիչ են վճարում: Իրենց հայրերի, եղբայրների, ազգականների միջոցով նրանք շարունակ շփվում են մանր խանութպանների, ծառայողների, աստիճանավորների՝ Եգիպտոսի այդ ամբողջ մանր մարդկանց կարիքների և ակնկալությունների հետ: Սպաների և բանակի հիմքը կազմող սերժանտական կազմի միջև չկան անթափանցելի միջ-

կորմներ, զեռես չի մոռացվել այն ժամանակը, երբ հավասարապես թե՛ մեկին և թե՛ մյուսին ծաղրում էին նրանց վարժեցնող անգլիական հրահանգիչները: Զինվորները բնակչության ամենաաղքատ շերտերին են պատկանում, որովհետև գինվորական ծառայությունից ազատվելու համար բավական է վճարել քառասուն եգիպտական ֆունտ¹: Վերջապես, սևագմական արհեստանոցներից, որտեղ պատերազմի ժամանակ տասնյակ հազարավոր մարդիկ էին աշխատում, պրոֆմիտիթենական ու քաղաքական ասպարեզներն են դուրս եկել եգիպտական բանվոր դասակարգի շահերի համար պայքարող լավագույն մարտիկները: Հետևաբար, եգիպտական բանակը բնավ կտրված չէ ժողովրդից. նա ընդունակ է արտահայտելու ժողովրդի ակնկալությունները և պաշտպանելու դրանք:

Բայց 1952 թ. հուլիսին, երբ իշխանությունը բանակի ձեռքն ընկավ, բանակի դեմոկրատական կազմակերպությունները դեռևս չէին կազդուրվել այն ծանր հարվածներից, որ նրանց հասցրել էր 1948 թվականի «մաքրագործումը» (Պաղեստինի պատերազմը): Այդ ժամանակաշրջանում նըշված կազմակերպությունների անդամների մեծամասնությունը՝ զինվորները, սերժանտները և ռազմական արհեստանոցների բանվորները, կամ բանտումն էին, կամ հեռացված էին բանակի շարքերից: Այն մի երկու տասնյակ սպաները, որոնց չէր զիպել «մաքրագործումը», կորցրել էին ամեն մի կոնտակտ իրենց զենքի ընկերների և նույնիսկ իրենց զինվորների հետ: Վերջինները պաղեստինյան կամպանիայի սկզբում իսկական ֆանատիկներ էին՝ խանդավառված Իսրայելի դեմ մղվող խաչակրաց արշավանքով: Պաղեստինում կրած պարտություններից հետո այս սպաները շատ դանդաղ էին ներգրավվում զինվորների մասսաներին քաղաքականապես դաստիարակելու աշխատանքին:

Ներկայումս եգիպտական բանակը համարյա ամբողջու-

¹ Եգիպտական ֆունտը իր արժեքով համարյա հավասար է անգլիական ֆունտ սաեռլինգին: Մանր. խմբ.:

թյամբ գտնվում է «Մուսուլմանական եղբայրություն» կազմակերպության ազդեցության տակ:

Իսլամին դավանող ժողովուրդների շահերի ընդհանրությունը «Մուսուլմանական եղբայրությունը» հարկադրում է հանդես գալ ընդդեմ իմպերիալիստական պետությունների, որոնք Ֆեսից մինչև Ջակարտա, այսինքն՝ երկրագնդի կես մասում, մուսուլմանական երկրները պահում են դաշուխային կամ կիսադաշուխային վիճակում: Անգլիացիները, ֆրանսիացիները, հոլանդացիները և ամերիկացիները — զրանք բոլորը «անհավատներ», աղբեսորներ են, «ուղղափառներին» ստրկացնողներ: Այսպիսով, կրոնի հաղթության համար մղվող պայքարը համընկնում է աղգային ազատագրության համար մղվող պայքարի հետ:

Սակայն «անհավատները», որոնց դեմ «Մուսուլմանական եղբայրություն» ընկերության կորիզը կազմող եգիպտական մանր բուրժուազիան պայքար է մղում ամեն օր, դրանք, որպես կանոն, անգլիացիները, ֆրանսիացիները չեն և ոչ էլ ամերիկացիները: Շատ հաճախ դա մի հույն է, մի հրեա կամ մի ասորի, մարդիկ, որոնք բազմաթիվ ֆիլիալներ ունեցող մի որևէ խոշոր խանութի կամ բաժնետիրական ընկերության կառավարիչներ են: Այստեղից էլ ծագում է միտում՝ ամենից առաջ պայքարել Եգիպտոսի ոչ-մուսուլմանական ազգային փոքրամասնության դեմ, այնուհետև Անգլիայի և Ֆրանսիայի դեմ, որոնց զինված ուժերը գտնվում են իսլամի երկրներում, և միայն վերջին հերթին՝ ամերիկացիների դեմ, որոնց երկիր թափանցելու մեթոդները առավել բողոքական են և այնքան էլ բացահայտ չեն: Ահա հենց այդ հարցի՝ առաջին հերթին ո՞ւմ դեմ պայքարելու հարցի առթիվ եղած տարածայնությունները մինչև օրս խանգարում են «Մուսուլմանական եղբայրությունը» հստակորեն որոշելու իր քաղաքական նպատակները, ընկերության անդամների միջև դառնալով անսպառ կոնֆլիկտների ու թյուրիմացությունների աղբյուր և առաջացնում շարժման ղեկավարների հաճախակի փոփոխում:

Դեմոկրատական ուժերի կազմալուծում, հակասություն-

ներ մանր բորժուազիայի լազերում և բանակում, ընդհանրապես լիակատար խառնաշփոթություն մարդկանց մտքերում — այդպիսին է եղել գրությունը, երբ հուլիսի 24-ի առավոտյան Ռազմական կոմիտեն գեներալ Նազիրի նախագահությամբ և Ալի Մախերի կառավարությունը բաժանում են իշխանությունը, որը նվաճել էին գիշերվա ընթացքում երեք խելացնոր երիտասարդները:

Իսկ դրանից ինը ամիս առաջ «Վաֆդ» պարտիան, երկարատև ընդմիջումից հետո վերագտնալով իշխանության գլուխ, հենվելով պառլամենտի ճնշող մեծամասնության և ժողովրդական լայն շարժման վրա, շեղյալ հայտարարեց 1936 թվականի անգլո-եգիպտական պայմանագիրը, որի ռազմական հոդվածները, ինչպես և այն հոդվածը, որը եգիպտոսին պարտավորեցնում էր իր արտաքին քաղաքականությունը համաձայնեցնել Մեծ Բրիտանիայի քաղաքականության հետ, դատարկ խոսքերի էին վերածում եգիպտոսի՝ պաշտոնապես հռչակված անկախությունը: Պայմանագրի ոչնչացումը խանդավառությամբ ընդունվեց եգիպտոսի բոլոր պարտիաների և խմբավորումների կողմից: Ողջ երկրում ծնունդ առան «ազգային կոմիտեններ», որոնք իրենց նպատակ էին դնում զինված պայքար մղել անգլիական օկուպանտների դեմ՝ Սուեզի ջրանցքի գոտում: Ժողովրդի մեջ հայրենասիրական վերելքը հասավ այնպիսի թափի, որ «Վաֆդ»-ի առաջնորդները՝ այդ պարտիայի գոյության ամբողջ պատմության ընթացքում առաջին անգամ լինելով, գիշումներ չարին թագավորին և Մեծ Բրիտանիային: Ժողովրդական շարժման աճը սահմանադրական ճանապարհով կասեցնելու ուժ չունենալով, Ֆարուկը օգտվեց 1952 թ. հունիսի 26-ին Կահիրեում բռնկված այն անկարգություններից, որ սարքված էին, ըստ երևույթին, ոչ առանց իր մասնակցության, անգլիական հետախուզության կողմից, երկրում ռազմական դրություն հայտարարեց և ցրեց վաֆդական կառավարությունը:

Շեղաշրջման հաջորդ օրը Ալի Մախերը և Ռազմական կոմիտեն, առանց գժվարության համաձայնվեցին պառլամենտը շարժարեւու և սահմանադրական ազատությունները շվերականգնելու մասին, որովհետև հակառակ դեպքում նրանք հարկադրված կլինեին իշխանությունը հանձնել պառլամենտում ձայների ճնշող մեծամասնություն ունեցող «Վաֆդ» պարտիային, իշխանություն, որը նրանք հենց նոր խել էին թագավորից: Եվ միայն Ռազմական կոմիտեի երեք դեմոկրատները համառորեն պնդում էին վերագտնալ պառլամենտական կարգին, բայց նրանք նորից պարտվեցին վեց ձայնով ընդդեմ երեքի: Ալի Մախերը կարողացավ հասնել այն բանին, որ ստեղծվի խնամակալական խորհուրդ, որը նրան հաստատեց պրեմյեր-մինիստրի դերում:

Մի քանի օր անց, օգոստոսի առաջին շաբաթվա կեսին, Ալի Մախերը պահանջեց, որ գեներալ Նազիրը ընտրություններ հետաձգի sine die (անորոշ ժամանակով) և ցրի քաղաքական պարտիաները: Ալի Մախերն ուզում էր տեղ մաքրել ապագա «միասնական պարտիայի» համար, որի ստեղծման մասին նա երազում էր դեռևս այն ժամանակ, երբ Ռոմմեյի տանկերը Ալեքսանդրիային էին մոտենում: Պրեմյեր-մինիստրը միաժամանակ հաղորդեց այն հրապուրիչ առաջարկությունների մասին, որոնց նկատմամբ ժլատ չէին անգլիացիներն ու ամերիկացիները՝ «Տրումենի ծրագրի շորրորդ կետի» համաձայն ղոլլարային օգնություն ցույց տալ եգիպտոսին. ջրանցքի գոտուց էվակուացնել անգլիական զորքերը, եթե եգիպտոսը միանա Միջին Արևելքի «համատեղ պաշտպանության վերաբերյալ պակտ»-ին. անգլիական և ամերիկյան զենքի վաճառք եգիպտոսին. գեներալ Նազիրին նշանակել Միջին Արևելքի զինված ուժերի գլխավոր հրամանատար: Ոչ մի միապետի շուրջ այնքան չէին պտտվել, ինչպես պտտվում էին գեներալ Նազիրի շուրջը՝ նրա կառավարման այդ երկրորդ շաբաթվա ընթացքում:

«Տրումենի ծրագրի շորրորդ կետի» համաձայն օգնություն տրամադրելը, գեներ մատակարարումը և այն քաղաքական գործիչների հետացումը, որոնք քանի՜ անգամ իր ճանապարհի դեմ էին կանգնել,— այդ ամենը գայթակղեցնում էին գեներալին: Սակայն «համատեղ պաշտպանության վերաբերյալ պակտը» խոտովում էր նրան: Նա գնաց Ռազմական կոմիտե, որն այն ժամանակ անդադար նիստ էր ունենում: Ծայր առավ բունն դիսկուսիա, որն սկսվեց օգոստոսի 9-ի շաբաթ գիշերը և շարունակվեց ամբողջ կիրակի օրը, մինչև երեկո,— տասնչորս ժամ անընդհատ: Վիճաբանությունների ընթացքում կոմիտեի անդամ դեմոկրատները կանչեցին քաղաքատնտեսության մի պրոֆեսորի, որը հայտնի էր իր ուղղամտությամբ և ազնվությամբ, և նրան խնդրեցին ժողովին պարզաբանել, թե «համատեղ պաշտպանության վերաբերյալ պակտն» ու «Տրումենի ծրագրի 4-րդ կետը» իրենցից ինչպիսի ծուղակ են ներկայացնում:

Այդ միջոցին մի փոխ-գնդապետ, քանի որ վիճաբանությունները չէին դադարում, գնալով աճող սգևորություններ շարունակում էր կրկնել, որ

«բանակին հաջողվեց տապալել քաղաքին միայն նրա համար, որ բանակը արտահայտում էր ժողովրդի կամքը. բանակը ժողովրդի աջակցությունից կօգտվի միայն այն դեպքում, երբ նա վերականգնի կոնստիտուցիոն ազատությունները և անհապաղ ձեռնամուխ լինի բնորոշումների նախապատրաստմանը, որ քաղաքական ուժերն է մարդկանց փշաքել, և ոչ թե մարդիկ են ուժերն փշաքել, որ մաքրագործման կամպանիան բոլորովին էլ չարն արմատախիլ անելու նպատակով չի արվել, այդ կամպանիան օտար պետությունների վարձկաններին պատրվակ ծառայեց պզգաշի պարտիաները վարկաբեկելու համար, ապացույց կարող է ծառայել այն հրեվանքը, որով ամեն անգամ անգլիական մամուլը դիմավորել է «Վաֆդի» դեմ եղած հարձակումները»:

Վիճաբանությունները մղվում էին ոչ պակաս կրթությունությամբ, քան 1793 թ. Հասարակական փրկության կոմի-

տեում, ինչպես պատմությունն է այդ մասին հաղորդում: Տասներեք ժամ անընդմեջ քննարկումից հետո, դեմոկրատները հաղթանակ տարան. նրանց առաջարկություններն ընդունվեցին միաձայն, եթե չհաշվենք դեմ տրված մեկ ձայնը: Գեներալ Նազիրը միացավ մեծամասնության կարծիքին:

Սակայն Ալի Մախերը վճռեց, որ ինքը կարող է հաշվի չառնել Ռազմական կոմիտեին, և կիրակի օրը երեկոյան մամուլի ներկայացուցիչներին հայտարարեց, որ քաղաքական պարտիաները ցրվելու են, իսկ ընտրությունները հետաձգվելու են անորոշ ժամանակով:

Գիշերվա ժամը երկուսին գեներալ Նազիրը հանդես եկավ փետեգորիկ հերքումով. ընտրությունները նշանակվում էին փետրվարին, քաղաքական պարտիաները ցրելու մտադրությունը ժխտվում էր:

Այդպես սկսվեց պատերազմը գեներալ Նազիրի և Ալի Մախերի միջև, մի պատերազմ, որին վիճակված էր օրեցօր ավելի ու ավելի սրվել, և շուտով Միջին Արևելքի «համատեղ պաշտպանության վերաբերյալ պակտին» միանալու առթիվ եղած վեճերը դարձան լսիկ մի պատրվակ այդ պատերազմի համար:

Գլխավոր պատճառը, որ եզրիպտոսին խանգարում էր միանալու պակտին, դա եզրիպտական ժողովրդի հակազդեցությունն էր, ժողովուրդը, որը միապետության տապալումից հետո երկրում անսպասելիորեն առաջ եկած քաղաքական կյանքի աշխուժացման շնորհիվ հնարավորություն ստացավ արտահայտելու իր կամքը: Եթե չլինեք հասարակական կարծիքի այդ հզոր պաշտպանությունը, Ռազմական կոմիտեի անդամ երեք դեմոկրատ սպաները վաղուց անհայտացած կլինեին ասպարեզից. պետական հեղաշրջման պատմությանը ծանոթ են նմանօրինակ հանկարծակի անհայտացումների շատ դեպքեր:

Հուլիսի 24-ի առավոտյան Ռազմական կոմիտեն, որը դեռևս ուշքի չէր եկել այն բանի վարմանքից, թե ինչպիսի հեղաշրջությամբ ու արագությամբ էր հաղթություն ձեռք բերել, և որն անհանդուստացած էր իր քաղաքական անփորձություն-

նից, տաղնապով սպասում էր, թե ինչպե՞ս է վերաբերվելու համաշխարհային հասարակական կարծիքը Եգիպտոսում տեղի ունեցած դեպքերին: Այդ պատճառով նա պատրաստակամությամբ համաձայնեց իշխանությունը բաժանել Ալի Մախերի հետ: Սակայն նոր կարգի գնալով ամրապնդվելուն զուգընթաց, բանակում երևան էր գալիս մենիշխանության ծարավ: Դա էլ հենց հիմք ծառայեց այն կոնֆլիկտին, որը ծագեց իմ Կահիրե ժամանելու պահին:

ՊԼՈՒՆ ԵՐՐԵՐԻ

ԳԱՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼՈՒԱՓՈՒՄ

Նեղոսի վարարումն իր դագաթնակետին է հասնում օգոստոսի կեսերին: Փքված գետը փոթորկալի թավալում է իր տղմոտ ջրերը: Զրարգելակները բացվում են օրը մի քանի անգամ, ջրերի հեղեղը դեպի դաշտերը բաց թողնելով ջրանցքների միջով, որոնք ճյուղավորվում են ինչքան աչքդ բռնում է: Օր ու գիշեր գոմեշները կամ էշերը իրենց սըմբակներով տոփանած տափարակում շուրջանակի մասն են գալիս, պտտեցնելով շուրջ բոլորը շերեփներ ամրացված անիվը, որի օգնությամբ ջուրը ջրանցքներից տեղափոխվում է բամբակի դաշտերի առունները և բրնձի պլանտացիաների ջրամբարները: Նեղոսի ողջ հովիտը ջրով է լցված. նա նման է մորուտի, որից անընդհատ խոնավություն է ծծում ոչ մի ամպով չմթաղնող արեգակը: Խոնավ օդը փառի նման պատում է մաշկը: Լրագրերում առավելագույն ջերմաստիճանի թվերի կոդքին խոշոր տառերով տպվում են խոնավության ցուցանիշները:

Կառավարությունը, մինիստրությունները, դեսպանությունները Նեղոսի վարարման ժամանակ սովորաբար տեղափոխվում են Միջերկրական ծովի մոտ, անապատի ծայրին գտնվող Ալեքսանդրիայի իրենց ամառային ռեզիդենցիաները, Ալեքսանդրիայի, որը Եգիպտոսի երկրորդ մայրաքաղաքն է: Սակայն Մախեր—Նագիբի «երկպիսանի» կառավարությունը ամուր հիմնավորվել է Կահիրեում և տեղից չի շարժվում: Եվ դա բացատրվում է ոչ միայն այն ցանկությամբ, որ մի ավել-

լորդ անգամ եւ ցուցադրվի զինվորականների կյանքի խիստ պարզութիւնը, որպիսին նոր սեփմը մտադիր է օրինակահանցել, և որի սիմվոլն է հանդիսանում, ի միջի այլոց, դեներալ Նազիրի շարժական նեղ մահճակալը, որը բոլոր թերթերում տպւած անհաշիվ լուսանկարների նյութ է դարձել: Բանն այն է, որ մազմական կոմիտեն բարվոք է համարում ավելի մոտիկ լինել Կահիրեի կայազորին, որի ընդերքում ծնունդ է առել ապստամբութիւնը, որպեսզի կայազորը պահի իր բռան մեջ:

Գնեերալ Նազիրը և իր գլխավոր շտաբը տեղավորվել էին մի խումբ վիլլաներում և զորանոցներում՝ այն ճանապարհին մոտիկ, որը Կահիրեից դեպի օդանավակայանն էր տանում, — այնտեղ, ուր վերջանում են արվարձանները և սկսվում է անապատը: Տեղասների կոտորների գնդացիներին մարտկոցներ են շարվել: Շինութիւնների շուրջը թեթև տանկեր են վազվզում: Սպաներն իրար շնջում են («Միայն թե, խնդրում եմ, ոչ ոքի չասեք՝ դա գաղտնիք է»), որ իբր բացվել է անգլիացիների գավազութիւնը, որոնք որոշել են վերացնել Նազիրին և նրա տեղը նստեցնել Պաղեստինյան բանակի մի գեներալի:

Ալի Մախերը դուրս չի գալիս արտաքին գործերի մինիստրութիւնից, որը ամերիկյան և անգլիական ղեսպանատներից ու «Սեմիրամիս» հյուրանոցից հեռու չէ: Այդ թաղամասի չորաբանչուր խաչմերուկում տեսնում ես թեթև տանկ, իսկ մայթերի վրա շարունակ խոնված են ժանդարմների խմբեր: Նեղոսի վարարման ժամանակ ոտի վրա երկար ժամանակ մնալ դժվար է, այդ պատճառով ժանդարմները հարևան դպրոցներից նստարաններ էին դուրս բերել և դրանք տեղավորել մայթի վրա. փողոցում տանկերն ու նստարանները տեղափոխվում են այն ստվերի հետ, որ շենքերն են գցում: Ժանդարմները նիրհում են, հենվելով իրենց ծնկների արանքում սեղմած հրացաններին:

Օսոդիցիայի, այլ խոսքով «Վաֆր» պարտիայի, գլխավոր շտաբը առաջվա նման գտնվում էր Ալեքսանդրիայում: Այնտեղ էլ ես որոշեցի մեկնել:

Մի քանի տասնյակ հազար կահիրեցիներ՝ բոլոր նրանք, ովքեր մայրաքաղաքի քաղաքական, վարչական և առևտրական կյանքում մի որեւէ դեր են խաղում, ամառը անց են կացնում իրենց ամառային սեզիզներում, որոնք տեղավորված են ծովափի կեոմաններին՝ զուգահեռ ընթացող այն ճանապարհի երկայնքով, որը Ալեքսանդրիայի առևտրական կենտրոնը միացնում է նախկին թագավորի՝ անտառայատ հրվանդանի բարձունքին միայնակ կանգնած պալատի հետ: Առաջներում այս վայրերում անապատի շիկակարմիր ավազը խառնվում էր Միջերկրական ծովի մանիշակագույն ջրերին: Դեռևս 1947 թ. քաղաքից մի կես ժամի չափ ճանապարհ գնալուց հետո թագավորում էր մեռելային լուսթիւն: Բայց վերջին երեք տարվա ընթացքում բամբակի առևտրից ստացված հսկայական շահույթները նպաստեցին մինչև այդ չտեսնված մասշտաբներով ամառանոցային սեզիզների շինարարութանը:

Բազմազույն հովանոցներից կազմված մի եզրագարդ, ավազի մի նեղ շերտ, ղզեստները փոխելու համար պատրաստված և իրար կպցրած խցերի մի բորբոք, մի ճանապարհ, որով համատարած հոսանքով շքեղ ավտոմոբիլներ են շարժվում, անհամար վիլլաներ, որոնք քաղաքից հեռանալուն զուգընթաց գնալով դառնում են առավել աննկատելի և ավելի համեստ, ի վերջո վերածվելով տախտակե տնակների, որոնց մեջ մանր ծառայողներ ու առևտրականներ են ապրում (չորաբանչուր ընտանիքին մի սենյակի հաշվով), — ահա այսպիսի տեսք ունի այսօր Ալեքսանդրիայի «Կառնիզը», որ փառաբանված է ճանապարհորդների և տուրիստական գործակալութիւնների կողմից: Իսկ անապատը, որ սկսում է ծովափի երկայնքով կառուցված վիլլաներից անմիջապես հետո, հավերժական ավազների աղնիվ անապատ-

որ, այժմ վերածվել է պահածոների առվերով լցված մի ամալի տարածության, որը նման է թափոններ նետելու աղբանոցի:

Պարոն Նահապը՝ «Վաֆր» պարտիալի նախագահը, ամառը, ինչպես բոլորը, անց է կացնում «Կառնիգում», շքեղազարդ այն վիլլայում, որը տեղավորված է գիշերային սրճարանի և զվարճության զբոսայգու միջև: Այժմ, 1952 թ. օգոստոսին, ռևոլյուցիոն վերափոխությունների այս ամսում, երբ հզորացույն «Վաֆր» պարտիան սկսել է գիտակցել իրեն սպառնացող վտանգի ամբողջ լրջությունը, այցելուները, իրար հաշորդելով, գիշեր ու ցերեկ այդ ընդարձակ վիլլան են գալիս. նրանց մեքենաներով փակված են բոլոր հարևան փողոցները: Առաջին հարկի հյուրասենյակում խոնավել են «Վաֆր» պարտիալի նահանգական կոմիտեների գեղեկատուները, ժամերով սպասելով, որ Նահասի քարտուղարն ընդունի իրենց: Դուռը բացվում է և դուրս է ցցվում քարտուղարի զլուխը. արագ հայացք նետելով սպասողներին, նա իր մոտ է կանչում որևէ մեկին: Ծառաները մանրիկ բաժակներով սև սուրճ են մատուցում: Հանկարծ հայտնվում է ղեկավար կոմիտեի անդամներից որևէ մեկը, և իսկույն բոլորը ուտքի են կանգնում:

Այս տուներ, որտեղ ամբողջ օրերով այնքան մարդիկ են հավաքվում, որտեղ օր ու գիշեր Նահասի անձնական պահակությունն ու ոստիկանական լրտեսներն են հերթապահում, քիչ էր հարմար այն ինտրիգների համար, որ սկսվել էին այդ ամսվա ընթացքում: Այդ պատճառով քաղաքական կյանքի կենտրոնը տեղափոխված էր ծովափ, գույնզգույն հովանոցների ներքո, որտեղ ծովից տաք հով է փչում, որը խոնավ փառի նման ծածկում է մաշկը, իսկ զվարճության զբոսայգիներում տեղավորված ռեպրոդուկտորներից հասնում է արաբական զրնգուն երաժշտությունը:

«Կառնիգի» ամբողջ երկարությունը ձգվող լողափերը սոսկ ցանկապատերով են իրարից բաժանվում: Բայց տախտակյա այդ նուրբ միջնորմները փաստորեն դասակարգերն ու կաստաները բաժանող փակոցներ են: Մի՞թե կա որևէ

ընդհանուր բան հեռախոսներ, հանգստավետ բազմոցներ, և հնդկական եղեգից հյուսած ու բարձր աղմինիստրատիվ պատիճանավորների սեփականությունը կազմող բազկաթուներ ունեցող ընդարձակ առանձնասենյակների, ինչպես նաև եվրոպական առևտրականների կողմից զբաղեցված հարևան լողափի նվազ փարթամ, բայց և բավականին հանգստավետ առանձնասենյակների ու հաշորդ լողափի խոնավ, փոքր առանձնասենյակների միջև, որ մուսուլմանական մանր աստիճանավորներն են վարձակալել: Եվ, սակայն, այդ բոլոր լողափերում կա ինչ-որ մի ընդհանուր բան՝ իր աղմուկով ու բարձր խոսակցությամբ միևնույն զինետունը հետին պլանում, կոկա-կոլայի նույն վաճառողները, միևնույն ձանձրացուցիչ երաժշտությունը, միևնույն սարսափելի խոնավ և միևնույն ժամանակ տաք քամին, որից, վերջ ի վերջո, սկսում ես կրծքի սեղմում զգալ:

1952 թ. օգոստոսին քաղաքական գործիչներն էլ վազվզում էին իրարից երբեմն մի բռնի կիլոմետր հեռու գտնվող էլեկանտ լողափերի միջև: Բոլորն էլ սովորական կոստյումներով էին և ֆեսերով, միայն առանց փողկապների՝ միակ ազատությունը հարգարանքի մեջ, որ ամառը նրանք իրենց թույլ են տալիս: Հող պատրաստելու նախնական փորձերը տեղի էին ունենում, որպես կանոն, առանձնասենյակների վերանդաներում, կանանց, բարեկամների և «հաճախորդների» ներկայությամբ: Այնուհետև, երկու հյուսված բազկաթուներ էին դուրս բերվում մեկուսի հաստատված մի հովանոցի տակ, և ինտրիգն սկսվում էր:

Ահա այստեղ, Ալեքսանդրիայի լողափերի հովանոցների տակ էլ ես ծանոթացա Եգիպտոսի հիմնական պարտիաների ներկայացուցիչների հետ՝ թե՛ նրանց հետ, որոնք պաշտպանում էին նոր իշխանությունը, և թե՛ նրանց հետ, որոնք օպոզիցիայի մեջ էին նրա նկատմամբ: Որպես ճշանուն խաղաղության պաշտպանության» ժողովուրդի հատուկ թղթակից, իմ ռեպորտաժներում ես պետք է նկարագրեի, թե զահի բեկորների վրա կազմավորված նոր Եգիպտոսը ինչպիսի գիրք է գրավելու խաղաղության պրոբլեմի նկատմամբ, խիստ

«Տամանագիծ գնեի այն երկու ուժերի միջև, որոնցից մեկը նիպտոսը հրկու էր խաղաղության լազերի կողմը, մյուսը՝ պատերազմի լազերի կողմը: Ինձ արգեն հայտնի էր, որ բոլոր պարտիաները իրենց ծրագրի անկյունաքարն էին դարձնել «ազգային պահանջների բավարարումը», այն է՝ Սուեզի ջրանցքի գոտուց անգլիական զորքերի էվակուացիան և Սուեզի միացումը Եգիպտոսին, այլ խոսքերով, բոլոր պարտիաներն ունեն հակաբրիտանական դիրքորոշում, որը նրանցից պահանջում է հասարակական կարծիքը, իսկ հասարակայնությունը փորձով գիտե, թե ինչ է իրենից ներկայացնում անգլիական օկուպացիան և ինչով է հղի Անգլիայի հետ կապված ռազմական դաշինքը: Բայց այժմ պատերազմի լազերը Միացյալ Նահանգներն են գլխավորում: Այդ պատճառով քաղաքական լիդերներին սված իմ հարցումները վերաբերում էին ոչ միայն Անգլիայի նկատմամբ նրանց ունեցած դիրքերին, այլ ամենից առաջ Միացյալ Նահանգներին, Անգլիային ու Ֆրանսիային՝ որպես Ատլանտյան պակտի դաշնակիցների: Իսկ գլխավորը, որ ինձ հետաքրքրում էր, դա նրանց վերաբերմունքն էր Միջին Արևելքի համար նախագծվող «համատեղ պաշտպանության վերաբերյալ պակտին»:

«Վաֆր» պարտիայի դիրքի մասին ինձ պատմեց պրեն իրազիմ Ֆարազը, որին վիճակվեց սեպտեմբերին, պրեն Սերազ էդ-Գինի ձերբակալումից հետո, ժամանակավորապես Ընդունել պարտիայի գլխավոր քարտուղարի պարտականությունները և տանել նրա վերակառուցումը:

«Հարց: Ինչպիսի՞ արտաքին քաղաքականություն է վարելու «Վաֆր» իշխանության վերադառնալիս:

Պատասխան: Նա անհապաղ կնորոգի պայքարը անգլիացիների դեմ և այն կտանի այնքան ժամանակ, մինչև որ բավարարվեն մեր ազգային պահանջները:

Հարց: Ինչպիսի՞ դիրք է գրավում պարտիան Միջին Արևելքի «համատեղ պաշտպանության վերաբերյալ պակտի» նկատմամբ:

Պատասխան: «Վաֆր» մտադիր չէ միանալու որևէ

պակտի այնքան ժամանակ, քանի դեռ լիակատար կերպով չեն կենսագործվել և կյանքում չեն կիրառվել մեր ազգային պահանջները: Իսկ դրանից հետո մենք վարվելու ենք այնպես, ինչպես կթելադրեն մեր շահերը:

Հարց: Ինչպիսի՞ն կլինի ձեր պատասխանը, երբ ձեր ազգային պահանջների բավարարման դիմաց ձեզ առաջարկեն միանալ «համատեղ պաշտպանության վերաբերյալ պակտին»:

Պատասխան: Մենք կհրաժարվենք նմանօրինակ գործարքից: Մենք պահանջում ենք ամենից առաջ էվակուացիայի ենթարկել Սուեզի ջրանցքի գոտին և Նեղոսի հովիտը միավորել միասնական պետության շրջանակներում: Իսկ դրանից հետո մենք գործելու ենք այնպես, ինչպես մեր շահերն են թելադրելու:

Հարց: Ինչպիսի՞ ռազմական քաղաքականության է հետևում «Վաֆր»:

Պատասխան: Մենք մտադիր ենք ամրացնել բանակը՝ բացառապես պաշտպանական նպատակներով, որպեսզի հնարավորություն ունենանք պաշտպանելու մեր հայրենիքը: Մենք ուզում ենք մեր հայրենիքն ապահովել ժամանակակից սպառազինությամբ՝ այն շափով, ինչ շափով դա թույլ կտա մեր բյուզեն:

Հարց: Իսկ դուք չե՞ք կարծում արդյոք, որ Անգլիան և Միացյալ Նահանգները ձեզանից կարող են պահանջել որոշակի քաղաքական պայմանների կատարում և միայն այդ դեպքում կհամաձայնվեն զենք մատակարարել:

Պատասխան: Եթե Մեծ Բրիտանիան և Միացյալ Նահանգները սկսեն համագործակցել մեզ հետ և համաձայնվեն մեզ զենք և հանդերձանք մատակարարել, եթե նրանք այդ ուղիով նպաստեն մեր բանակի ամրացմանը և ըստ այնմ քաղաքական ոչ մի պայման չեն դնի, ոչ մի հրաման չեն տա, խաղաղ ժամանակ մեզ չեն քաշի ռազմական որևէ դաշինքի մեջ, մենք կհամաձայնվենք մասնակցել մամբողջ աշխարհում ընդհանուր անվտանգության պահպանմանը, համագործակցելով Միավորված Ազգերի Կազմակերպության

էր: ՄԱԿ-ում մեր դիրքը կթելազրվի Եզիպտոսի ազգային շահերով:

Հարց: Ինչպի՞ս էք դուք նայում Արևելքի և Սրբաճառների առևտրին:

Պատասխան: Մենք պատրաստ ենք առևտրական հարաբերություններ հաստատել առանց բացառության բոլոր երկրների հետ:

Քանի որ անգլիացիները հաղիվ թե համաձայնվեն իրենց զորքերը Սուեզի ջրանցքի գոտուց առանց որևէ պայմանի էլակուացնելուն, «Վաֆդի» դիրքը այն տեսքով, ինչպես պր-ն Իբրահիմ Ֆարազը շարադրեց ինձ, հավասարազոր է Միջին Արևելքի «համատեղ պաշտպանության վերաբերյալ պակտին» միանալուց Եզիպտոսի հրաժարվելուն: Սակայն, չի կարելի չնկատել, որ նա զուսպ մնաց և որևէ կատեգորիկ արտահայտություն չարեց ընդդեմ պակտի, խաղաղության լազերին միանալու օգտին, կամ նույնիսկ չեզոքություն պահպանելու համար: Դա կարևոր է ընդգծել առավելապես այն բանի համար, որ պր-ն Իբրահիմ Ֆարազը համարվում է անգլո-եգիպտական պայմանագիրը խզելու նախաձեռնող, «Վաֆդի» առավել հակաիմպերիալիստական տրամադրություններ ունեցող ռազիկալ ֆրակցիայի լիդեր պր-ն Սիրազ Ե. Դիհի մերձավոր դորձակիցը:

«Վաֆդը», որի ներկայացուցիչների օգտին վերջին բնութագրություններին արվեց ձայների 80 տոկոսը, միակ պարտիան է, որ ամբողջ երկրի մասշտաբով կազմակերպություններ ունի և պարտիական պլանով իրենից ներկայացնում է լուրջ օպոզիցիա գոյություն ունեցող պեժմի դեմ:

Եթե վերցնենք «Մուսուլմանական եղբայրություն» ընկերությունը, ապա նա պաշտպանում է ռազմական դիկտատուրան: Այդ կազմակերպության մի քանի լիդերների հետ ունեցած խոսակցությունից ես եկա հետևյալ եզրակացությունների.

1. Ամբողջությամբ վերցրած կազմակերպությունը գրավում է մի դիրք, որն ուղղված է «մուսուլմանական հավատի վրա տպագիր խոսքի կամ զինված ուժի օգնությամբ հար-

ձակվող իմպերիալիզմի դեմ, մի հարձակում, որը տեղի է ունենում Պաղեստինում և ջրանցքի գոտում»:

2. Նա կատեգորիկ կերպով դեմ է որևէ տեսակի ռազմական դաշինքի՝ լինի դա Անգլիայի կամ Ամերիկայի հետ:

3. «Գերագույն առաջնորդը» պետք է նախագրուչացվի այն վտանգների մասին, որոնցով հղի է «համատեղ պաշտպանության վերաբերյալ պակտին» Եզիպտոսի միանալը:

4. «Սակայն մինչև այժմ պարզ չեն Սովետական Միության նկատմամբ եղած մտադրությունները»:

Ցաշխատական կանաչ շապիկավորների շարժումից առաջացած և ռազմական դիկտատուրային աջակցող սոցիալիստական պարտիայի փոխ-նախագահ պր-ն Իբրահիմ Շուբրիից ես լսեցի հետևյալ հայտարարությունը.

— Այժմ մեզ համար դեռևս վաղ է արտահայտվել Միջին Արևելքի համատեղ պաշտպանության պակտի մասին: Մենք չենք կարող ձեռնամուխ լինել այդ հարցի քննարկմանը մինչև այն ժամանակ, քանի չեն բավարարվել մեր ազգային պահանջները... Մենք կարծում ենք, որ ազգային անկախությունը չպետք է առևտրի առարկա դառնա... Հենց որ մենք իսկական անկախություն ձեռք բերենք, մենք երկրի պաշտպանությունը կկազմակերպենք մեր այն պատկերացումներին համապատասխան, որպիսին պիտի լինի այդ պաշտպանությունը, որ մեր բանակը ծառայի բացառապես պաշտպանական նպատակներին... Ինչ վերաբերում է առևտրին, ապա մենք մտադիր չենք պետությունների մի բրդի հանդեպ մյուսին նախապատվություն տալու. մենք առևտուր ենք անելու երկրի շահերին համապատասխան:

Ազգային պարտիան, որը նույնպես աջակցում էր ռազմական դիկտատուրային, բազմիցս հայտարարել է, որ մերժում է որևէ ռազմական դաշինքի մեջ մտնել Անգլիայի կամ Միացյալ Նահանգների հետ, կամ Անգլիայի ու Միացյալ Նահանգների հետ միասին վերցրած: Սակայն նրա ղեկավար կոմիտեի կազմից հեռացվեցին Յուսուֆ Հելմին և Սաադ Կամելը, որովհետև նրանք մտնում են իսլամական հավատալից:

մաշխարհային նորհրդի կազմի մեջ և այդ պատճառով վար-
կարեկում են պարտիային:

Ամեն երեկո, հյուրանոցի իմ համարը վերադառնալով,
ես արտագրում էի օրվա ընթացքում հավաքած կարծիքները:
Ես իջել էի «Մեդիտերրանե» հյուրանոցում, նեղ լուսամու-
տով այն միակ ազատ սենյակում, որ նայում էր գիշերային
սրճարանի այգուն, որը, այստեղ հաճախ այցելող Ֆարուկ
թագավորի ցանկության համաձայն, կոչվել էր «Կապրիզ»:
Ջազը, շոգը և ծովից փշող խոնավ քամին երկար ժամանակ
ինձ չէին թողնում քնել: Ես խորապես դառնացել էի, որ ինձ
չէր հաջողվում առավել որոշակի կարծիքներ հավաքել խա-
ղաղության օգտին: Ըստ երևույթին, ինչպես վաֆրական օպո-
զիցիային, այնպես էլ նոր իշխանությանն աջակցող պար-
տիաներին հավասարապես սարսափ է պատճառում իրենց
երկրի բախտը Միացյալ Նահանգների «բարի կամքին» կապե-
լու միտքը: Ուսանողական և բանվորական խոշոր ցույցերի
մասին արված հաղորդագրությունը թույլ է տալիս նույնիսկ
առավել ուրախալի հույսեր տածել: Սակայն Եգիպտոսի քա-
ղաքական կյանքը չի սահմանափակվում «Մեմփրամիս» հյու-
րանոցի տեղատուլ, «Կապրիզի» այգիներով և Ալեքսանդրի-
այի լողափերով:

Այդ պատճառով այն մարդկանց մեծ մասը, որոնց հետ
ինձ հաջողվեց հանդիպում ունենալ, ինձ թվաց, որ չափա-
զանց մտահոգված են այն խոտվահույզ շշուկներով, որոնք
վերաբերում էին նահանգներում «ազգային կոմիտեաների» և
գյուղերում՝ գյուղացիական կոմիտեաների կազմակերպվելուն,
ինչպես նաև ֆելլահների շրջանում առաջացած լայն շարժ-
մանը, ֆելլահներ, որոնք պահանջում էին ճանաչել իրենց
իրավունքները:

Ես որոշեցի Կահիրե վերադառնալ, որպեսզի մի մարդ
դտնեմ, որը կարողանա ինձ ուղեկցել և ինձ ցույց տալ
եգիպտական գյուղը:

Ավտոբուսով ես այնտեղ մեկնեցի այն ճանապարհով,
որ ձգվում է անապատի միջով և ճանապարհորդի առաջ բա-
ցում է եգիպտական պեյզաժի անմոռանալի պատկերներ:

Եգիպտական անապատը՝ դա անապատ է բառի լիակա-
տար իմաստով. այնտեղ ո՛չ բուսականություն կա, ո՛չ մարդ:
Նա բռնում է եգիպտական տերիտորիայի 93 տոկոսը: Եգիպ-
տոսը՝ դա մեկ միլիոն քառակուսի կիլոմետր անապատ, ավա-
զուտ և մշակության համար պիտանի 32 հազար քառակուսի
կիլոմետր հող է: Եգիպտոսի ամբողջ բնակչությունը Նեղոսի
հովտում է կենտրոնացած, այլ խոսքով, հազար հինգ հար-
յուր կիլոմետր երկարությամբ և մեկ կիլոմետր լայնությամբ
հողի մի շատ նեղ շերտի վրա՝ Սուդանի սահմանին մոտ,
հինգ կիլոմետր՝ Իգֆայի մոտ, տասնչորս կիլոմետր՝ Լուքսո-
րի մոտ, քսանհինգ կիլոմետր՝ Բենի-Սուեյֆի մոտ և միայն
Իելտայում հասնելով երկու հարյուր վաթսուն կիլոմետրի:
Ահա հենց այդ հողաշերտի վրա, որ անապատով մնացած
աշխարհից ավելի է կղզիացած, քան մի որևէ կղզի օվկիա-
նոսով, ապրում է քսան միլիոն մարդ՝ այնքան կոտակված
ձևով, որ մի քայլ չես կարող անել առանց մի կայարանի
կալչելու:

Ալեքսանդրիայից դուրս գալուց ճանապարհը շուտ է գա-
լիս դեպի անապատ և Կահիրեից միայն քսան կիլոմետր հե-
ռու նորից վերադառնում է դեպի Նեղոսի հովիտը, ավազե
բլրի կատարի վրայով ձգվելով դեպի հեռուները: Նրա բար-
ձունքից ճանապարհորդի աչքի առաջ հանկարծ բացվում է
ստվերախիտ այգիներով գոտևորված «Մեծ Կահիրեն»՝ «Հա-
զար ու մեկ գիշերների» քաղաքը, իր անհամար մինարենե-
րով, իսկ շուրջը՝ անծայրածիր անապատն է, որի միօրի-
նակությունը խախտում է միայն դեպի հարավ ձգվող կանաչ
շերտը: Ճանապարհը դեպի մայրաքաղաք է իջնում հսկայա-
կան բուրգի ստորոտով, բուրգ, որը եգիպտական ազգի հնու-
թյան ակնառու վկայությունն է:

Բնիկ եգիպտացի, Նեղոսի դելտայի մի փոքրիկ քաղա-
քում ծնված բանաստեղծ Քեմալը սիրով համաձայնվեց ինձ
ուղեկցել իր երկրում:

Քեմալը համարվում է եգիպտական նոր պոեզիայի
ստեղծողը, մի պոեզիա, որը փորձում է ազատագրվել արա-
բական գրականության ֆորմալիստական տրադիցիաներից

և հանդիսանալ ժողովրդի ակնկալությունների արտահայտիչը: Նա մեծ ժողովրդականություն է վայելում նույնիսկ իր հակառակորդների շրջանում: Մի անգամ Քեմալը փորձ է անում բողոքել իր ոտանավորների վերջին գրքույկի արգելման և շրջանառությունից հանելու դեմ:

— Այո՛, այո՛, — ասել է խուզարկությունը ղեկավարող ոստիկանը, — ես իսկապես մի նողկալի պարտականություն եմ կատարում, — վարվում եմ շան նման, իսկ շէ՞ որ ես սիրում եմ ոտանավորները...

Եվ ոստիկանը բերանացի արտասանել է այդ նույն գրքույկում տպված Քեմալի մի բանաստեղծությունը, որ եկել էր բռնագրավելու:

Քեմալը երեսուն տարեկան է: Նա նիհար, չղային և բարյացակամ հայացքով մի մարդ է: Նա արդեն շորս տարի է, ինչ ամուսնացել է, բայց ընդամենը մի ամիս է ապրել կնոջ հետ. քաղաքական իրադրությունը շարունակ այնպես է դասավորվել, որ երբեմն ինքը, երբեմն կինը նստել են բանտում կամ աքսորականների ճամբարներում: Նրա կինը այժմ էլ վտարանդի է:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԳ

ՆԵՂՈՍԻ ՀՈՎԻՏԸ ՄԻ ԱՅՅԻ Է

Մենք արդեն հինգ ժամ է ճանապարհ ենք զնում: Կահիրեից դուրս գալով, ավտոբուսը շրջանցեց Արևելյան անապատը և սուրաց Նեղոսի հովտով: Նեախ նման ուղիղ ճանապարհը ձգվում է երկշարք էվկալիպտոսների միջով:

— Այդ եզրպտացորենն ու շաքարեղեգը, — հաղորդեց ինձ Քեմալը, — մարկիզ Քարաբասին են պատկանում:

— Բամբակի այս պլանտացիաները մարկիզ Քարաբասին են պատկանում:

— Բրնձի այս դաշտերը մարկիզ Քարաբասին են պատկանում:

Այդ ժամանակ մենք անցնում էինք նախկին թագավորի՝ Եգիպտոսի խոշորագույն հողատեր Ֆարուկի կալվածքով, որն ունի 50 հազար հեկտար հող:

Մենք կանգ առանք մի մեծ գյուղում: Մի ուրիշ ավտոբուս, առաջինից մի քիչ փոքր, էլ անվեր զոռացնելով ու փոշտալով մեզ տարավ նեղլիկ, փոշոտ, փորփրված մի ճանապարհով՝ ընկած ջրանցքների երկայնքին, ուր լողանում էին տկուր երեխաներ, հիպոպոտամների կաշվի գույնը հիշեցնող գոմեշներ, հսկայական ծովաձիերի նմանող ուղտեր: Գյուղերը հաջորդում են գյուղերին: Դելտայում իզուր է միայնություն փնտրելը: Այստեղ մարդը պեյզափի անբաժանելի մասն է: Բնակչության խտությունը Նեղոսի հովտում և Դելտայում մի քառակուսի կիլոմետրի վրա հինգ հարյուր մարդուց ավելի է, այնինչ Ֆրանսիայում մի քառակուսի կիլո-

մետրին հիսուն մարդուց պակաս է ընկնում: Ինչպես գյուղում, այնպես էլ քաղաքում առանձին սենյակ ունենալը համարյա անմատչելի պերճանք է համարվում:

Եվ ո՛չ մի ազատ տարածություն աչքի համար: Դելտայում տեղանքն այնքան հարթ է, որ մարդու հայացքը անփոփոխ կերպով մերթ եզրայտացորենի դաշտին, մերթ բամբակի պլանտացիային է դեմ առնում: Զրանցքների և Նեղոսի թեկերի վրա քամու կամքով սահող մեծ գետանավերից երբեմն երևում են միայն եռանկյունաձև բարձր առագաստներ, և թվում է, թե գետանավերը ուղղակի հովտի միջով են լողում:

Զրարգելակներից մեկի մոտ Քեմալը խփեց շոֆերի ուսին. նա կանգնեցրեց մեքենան, և մենք դուրս եկանք: Զրանցքի վրայից անցնելով, մի փոքրիկ ճանապարհով մենք մտանք մի գյուղ, որը համատարած կերպով սպիտակ խորանարդներից էր կազմված. յուրաքանչյուրի վրա հարդի և եղեգի մի խորձ, ճիշտ՝ քամուց քրքրված խարոյաշ մագերի վրա եղած գդակի նման:

Քամբակի ծաղկման ժամանակն էր. նրա ծաղիկը շատ նման է փիփերթի ծաղիկին, միայն ունի մեղմ դեղնագույն, սակեգույն երանգ, և երբ նրանց թերթերը թափվում են, ցողունի վրա մնում է աղվամազե գնդիկը՝ բամբակը: Մեր աշկողմում փոխվում էր պոմիդորի հսկայական դաշտը, որը հեռվում դեմ էր առնում եզրայտացորենի պատին:

Կանայք և երեխաները, մի շարքում տասնական հոգով, զբաղված էին պոմիդորներ պոկելով: Տղամարդկանց մի խումբ բամբակենու դաշտն էր ջրում. նրանք շարժվում էին դանդաղ, յուրաքանչյուրն իր ափսոսով: Մեր ճանապարհին գտնվելու այդ ամբողջ ժամանակամիջոցում մենք չտեսանք գյուղատնտեսական ոչ մի մեքենա: Երեխաները քշում էին անիվը պտտեցնող գոմեշներին, անիվ, որին ամրացված շերեփները դարձնագույն ջուր են տալիս դաշտերին. այդ ջուրը հագեցված է Կենտրոնական Աֆրիկայի կուսական անտառների քայքայման տղմոտ նյութերով: Այդ տղմոտ նյութերը լավագույն պարարտանյութ են:

Դաշտերի և ճանապարհների միջև ընկած հողի նեղ շերտեր վեր է ածվել մի թմբի, որի վրա հասունանում են տուղ բաղրիջաններ, անբնական կերպով հսկայական վարունգներ և վիթխարի ձմերուկներ: Նեղոսի հողը այնպիսի թանկագին բան է, որ այստեղ նույնիսկ ճանապարհներն են օգտագործվում ցանելու և տնկելու համար: Նեղոսի հովիտը մի այդի է, որտեղ ամեն ինչ շափված է և հաշվի է առնված ավելի, քան Ֆրանսիական կրոնավորների այգիներում:

Մեր ճանապարհը արգելակեց գարշահոտ մի ջրափոս, որ շրջապատված էր թափոնների կույտերով: Հարկ եղավ այն շրջանցել: Իսկ նրանից անմիջապես հետո, սկսվում էր մի գյուղ, որը քառասուներկու բնակիչ ունեցող մեր Քյուժե գյուղակից ավելի քիչ տարածություն է զբաղում, բայց այստեղ ապրում են ութ հազար ֆելլահներ՝ տղամարդ, կին, երեխա: Նեղոսի հովտի հողը այնքան թանկարժեք է, որ հողատերերը շատ ժլատորեն են չափում իրենց ֆելլահների բնակելի տարածությունը տակ ընկնող տոփանած, անպտուղ հողը՝ ճիշտ այնքան, որքան մեկ մարդու հարկավոր է նրնջելու համար: Նեղոսի հովիտը աշխարհի ամենահարուստ այգին է, իսկ ֆելլահները՝ ամենաաղքատ այգեպանները:

Անկարգ կույտով թափված տնակները կիպ իրար են կպած: Մլեփից շինած, տիղմի հաստ շերտով ծեփած, արևի տակ չորացած և կրով սպիտակեցրած պատերը մեկը մյուսին են խառնվում այնպես, որ տունը տնից չես ջոկում, և ողջ գյուղը թվում է մի համատարած շինություն: Այստեղ ընկած մարդուն թվում է, թե նա գտնվում է կատակոմբի մեջ: Ո՛չ բակ կա, ո՛չ գոմ, ո՛չ ցախատուն, ո՛չ կալսանոց. մի՞թե այգեպանը կարող է այգուց հող գողանալ: Եվ ահա նա իր սենյակը բաժանում է գոմեշի հետ, կամ, եթե նրան ավելի է գուր գալիս, մահճակալի հետ փոխադրվում է գոմեշի մոտ՝ ախոռը: Ըստ որում գյուղացին սովորաբար մահճակալ չունի: Միշտ տեղի նույն խնայողության պատճառով նա վառելիքը պահում է կտրին, այստեղից են ծագում այն հետևանքները, որոնց մասին հաճախ կարելի է կարդալ եզրատական թերթերում: Ահա այդպիսի փաստերից մեկը.

«Տուկի օկրուգի Դիեր գյուղում բռնկված հրդեհից ոչընչացել են 217 տներ: Զոհվել են քսան մարդ, այդպիսի բոլոր անասունները և բերքը, չորս հարյուր ընտանիք գրկվել է սպաստանից: Հետաքննությունը պարզել է, որ հրդեհը առաջ է եկել մի գեղջիկուհու, ոմն Նեֆրսա Հասանի մեղքով, որը ճաշ էր պատրաստում: Կայծերից վառվել են տեղաստի վրայի փայտերը. քամին տարածել է բոցը, և հրդեհ է սկսվել»:

Քեմալի անձնական բարեկամ, օմդեխի օգնականը, որին Քեմալը նախապես տեղեկացրել էր մեր ժամանման մասին, արդեն մեզ էր սպասում իր տան սեմին կանգնած:

Օմդեխը՝ մի պաշտոնեական անձ, որին ներքին գործերի մինիստրությունն է նշանակում գյուղերի կառավարման համար, — գյուղի ավագն է: Նա անսահմանափակ իշխանություն ունի ֆելլահների վրա և միայն խոշոր հողատերերին՝ կալվածատեր-ֆեոդալներին է ենթարկվում, խոշոր հողատերեր, որոնց որոշումները նա հարկադրված է հաշվի առնել: Օմդեխը իր համար ճարում է մի օգնական, որն իր աշխատանքի դիմաց շնչին վարձատրություն է ստանում, և դաշտային պահակներ, որոնք զինված են մահակներով և հին տիպի հրացաններով. այս պահակներին պահելու ծախսը ֆելլահների վրա է ընկնում:

Օմդեխի օգնականը, որն այդ օրը մեզ ընդունեց, այստեղի օմդեխի քեռորդին էր: Թերևս դրանով է բացատրվում այն, որ օմդեխը շատ բաների վրա մատների արանքով էր նայում: Պետք է ասել, որ օմդեխի օգնականը իր ժամանակի մեծ մասը նվիրում է գյուղացիների համար պետիցիաներ կազմելով, որի համար նա վաղուց պետք էր բանտ նստած լիներ: Բացի այդ, ասում են, որ ինքը օմդեխն էլ համակրանքով է վերաբերվում ռեֆորմի օգտին ծավալվող գյուղացիական լայն շարժմանը, թեև իր վերաբերմունքը այնքան բացահայտ ձևով չի արտահայտում: Մի տասը տարի առաջ այդ բանը միանգամայն աներևակայելի էր: Բանն այն է, որ այդ ժամանակ առանց բացառության բոլոր օմդեխները ոստիկանությունն էին պատկանում և նշանակվում էին ոստիկաններից: Իսկ այժմ զնալով ավելի հաճախ են պատահում

օմդեխներ, որոնք շատ բանի վրա աչք են փակում. նրանց մեջ պատահում են նույնիսկ ընդհատակյա դեմոկրատական կազմակերպությունների մասնակիցներ: Մի գուցե այդ բանում վճռական դեր է խաղացել ավտորուսային երթևեկության զարգացումը: Այժմ արդեն օմդեխները չեն նստում իրենց գյուղում, ինչպես զնդանում, այլ տարին մի քանի անգամ Կահիրե են գնում: Այնտեղ նրանք կախարդվածների նման կանգնում են շքեղ խանութների վառ լուսավորված ցուցափեղկերի առաջ: Շքեղ ավտոմոբիլների շոֆերները նրանց վրա դռում են. «է՛, ո՛ւր ես քշում: Զգիտե՛ս թե որտեղից պետք է փողոցն անցնել, ֆելլահ, գեղջիկ ծնունդ»: Եվ այդտեղ օմդեխը հասկանում է, որ գյուղական բռնակալը մի նույնպիսի խղճով չբավոր է, ինչպես ֆելլահները, որոնց նա սարսափի ու հպատակության տակ է պահում, որովհետև փաշաների աչքում օմդեխը միայն մի ֆելլահ է՝ այլ ֆելլահների շարքում: Կամ թերևս այդ գյուղի միջով ինչ-որ երկու ուսանողներ են անցել, այն նոր ուստադեսների թվից, որոնք համալսարանական արձակուրդների ընթացքում ավանից ավան են գնում՝ բնակիչներին պատմելով, թե ինչպես փաշաները համաձայնության են եկել անդլիացիների հետ, որպեսզի ստրկության մեջ պահեն ֆելլահներին ու օմդեխներին, սակայն խորհուրդ տալով շճուսահատվել. չէ՞ որ արդեն գոյություն ունեն այնպիսի երկրներ, որտեղ բամբակի բերքը նրան է պատկանում, ով այն աճեցրել է: Այն գյուղում, ուր մենք կանգ առանք, երկու տարի առաջ հենց այդպիսի ուսանողներ էին եղել:

Օմդեխի օգնականը, որի տունը այդ օրը կեսօրին գնացինք ես ու Քեմալը, քառասուն տարեկանի մոտ բարձրահասակ, նիհար և քիչ կոացած մի մարդ էր: Արտաքնապես նա տիպիկ եզդիպտացի էր, այդ բառի լավագույն իմաստով: Նրա կազմվածքը գեղեցիկ էր, հայացքը ժիր էր և խոհուն, հաճելի ժպիտ ուներ և բարի դեմք: Բարության այդ արտահայտությունը հատկանշական է եզդիպտական շքավորների համար. առանձնապես բարությանը են փայլում երիտասարդների դեմքերը: Այդ արտահայտությունը խորթ չէ նույնիսկ ոստի-

կանների դեմքերի վրա, որոնք, ի դեպ, հենց նույնպիսի չքավորներ են, ինչպես ֆելլահները, ինչքան որ ես կարողացա դիտել իմ ձերբակալության ժամանակ: Այն մարդու մասին, որը արտաքինից առավել վառ կերպով է դրսևորում իր առասպի հատկանշական դժերը, մի ժամանակ ասում էին, որ նրա մոտ զգացվում է «ցեղը», որ նա «ցեղական է», և դա ինչ-որ արտակարգ հպարտ էր հնչում: Օմդեխի մեր օգնականը իրոք վեհ տեսք ուներ իր գալաբիի՝ բամբակյա հյուսվածքից պատրաստված, մինչև կրոնիկները հասնող միակտոր շապիկի միջից, որը եզրատական գլուղացու միակզգեստն է: Արժանապատվությամբ և պարզասրտությամբ կատարված ձեռքի մի շարժումով, վարվելու մի եղանակ, որպիսին հաճախ կարելի է հանդիպել Եգիպտոսում և ընդհանրապես մուսուլմանական ժողովուրդների մոտ, բայց միայն չքավորների շրջանում, նա հրավիրեց մեզ ճաշակել աղավնու մսով փլավ, որ ինքն էր պատրաստել մեզ համար, և չոր խմել կավե սափորից, որը սառը պահելու համար փաթաթված էր թաց սրբիչով:

Ինձ հետ զրուցելու նպատակով նա իր մոտ հրավիրեց մի քանի վարձակալներին: Ահա թե նրանք ինձ ինչ պատմեցին (ի դեպ, այդ բոլորը շարադրված էր այն պետիցիայի մեջ, որ ստորագրել էին իրենց գյուղի ընտանիքների ավագները, և որը նրանք այդ օրն իսկ պատրաստվում էին ուղարկել նագիբին):

Իրենց մշակած հողար հինգ հարյուր հեկտար հողերը պատկանում են մի ընտանիքի, որը ձմեռը կահիրեում է ապրում, ամառը՝ Ալեքսանդրիայում և վեց ամիս՝ Եվրոպայում: Ֆելլահները չեն տեսել իրենց կալվածատիրոջը: Նրանք ճանաչում են միայն նրա կառավարիչին: Այդ հսկայական կալվածքը մշակող գյուղացիները հողամասեր են վարձակալում մեկ հեկտարից մինչև երեք հեկտար չափով, իրենց օգնելու նպատակով նրանք վարձում են գյուղատնտեսական բանվորներ (գյուղատնտեսությունը այստեղ շատ ինտենսիվ է տարվում, բայց մեքենաներ չկան, այդ պատճառով շատ բանուժ է պահանջվում):

Իելտայի արգավանդ հողից կարելի է տարին երեք բերք հավաքել: Ես չեմ մտնում ցանքաշրջանառության մասնորամասնությունների մեջ, որը շափազանց բարդ է և հաշվի է առնված մի քանի տարվա համար: Պարզության համար կասեմ միայն, որ միևնույն հողակտորի վրա աշնանը աճում է բամբակ, գարնան սկզբին՝ անասնակեր, իսկ ամռան սկզբներին՝ հացահատիկային կուլտուրաներ:

Անասնակերը միայն բավականացնում է այն բանի, որ բոմեջները կերակրվեն: Յորենը գնում է հողատիրոջը որպես վարձ՝ գյուղացուն մեկ տարվա ընթացքում նրա փոխ տված սերմի և գյուղատնտեսական ինվենտարի համար, եզրպատացորենը մնում է վարձակալին որպես նրա հիմնական սնունդամթերքը, բամբակը բաշխվում է հետևյալ ձևով. հողատիրոջը հասանելի յուրաքանչյուր երեք ցենտներից մեկ ցենտները վարձակալն է ստանում: Պետք է ասել, որ բամբակը վարձակալի համար եկամտի միակ աղբյուրն է: Այս տարի մի ցենտներ բամբակի առքի դինը տեղում կազմում է 3700 ֆրանկ¹, իսկ մեկ հեկտարը միջին հաշվով տալիս է չորս ցենտներ բամբակ: Այսպիսով, վարձակալները, նայած հողամասի չափերին, տարեկան վաստակում են 8000-ից մինչև 24000 ֆրանկ, այդ փողից էլ նրանք պետք է վճարեն նաև գյուղատնտեսական բանվորներին:

Գյուղատնտեսական բանվորը օրը հարյուր ֆրանկից պակաս է վաստակում և տարին ընդամենը մի քանի ամիս աշխատանք ունի: Այսպիսով, նրա վաստակը հազիվ բավականացնում է, որ սովից շմեռնի: Բայց վարձակալի վիճակն էլ ավելի լավ չէ: Աշխարհի ամենապտղաբեր այգու այգեպանների փորը հաճախ սոված է լինում. ամբողջ Արևմուտքին բամբակ մատակարարող մարդիկ իրենք ցնցոտիներով են ման գալիս:

Նեղոսի հովտի այգիները շատ մարդկանց են հարստացնում՝ եզրպատական հողատերերին, բամբակի հումքը մեծագնողներին ու վաճառականներին, բամբակի գների իջեց-

¹ Յրանտիական մեկ ֆրանկը հավասար է 1 ուրլի 14 կոպեկի:— Սանթ. խմբ.:

մամբ ու բարձրացմամբ խաղացող սպեկուլյանտներին, ման-վածքային և գործվածքային ֆաբրիկաներ կառուցող կապիտալիստներին: Օտեյլի շքեղ մի բնակարանում, ուր լցված են արվեստի ամենաթանկարժեք արտագրանքները, միայնակ ապրում է մի ծերունի. նա հնարավորությու-ն ունի այդպես ապրելու այն բանի շնորհիվ, որ իրեն է պատկա-նում աշխարհի ամենահիանալի այգու պտուղների մի մասը: Անգլիացի գործազուրկի օրական նպաստը հավասար է եզրիպտական հինգ գյուղատնտեսական բանվորի օրավարձին: Դա բացատրվում է նրանով, որ Մեծ Բրիտանիան ամեն տե-սակ արդար ու անարդար միջոցներով կարողանում է մինչև օրս Եգիպտոսից ստանալ Նեղոսի հովտում արտադրվածի մեկ տասներորդ մասը: Հապա այն ծախսը, որ արվում է աստիճանավորներին, ժանդարմներին ու ոստիկանութանը պահելու համար, որոնք հետևում են, որ չլինի՞, թե հան-կարժ ֆելլահների խելքին փչի իրենցից դեմ զցել այդ բարդ կառուցվածքը: Այսպես ուրեմն, եթե այդ ամենը դուրս գանք այգու բերած եկամտից, էլ ի՞նչ բաժին է մնում այգե-պանին:

Եգիպտոսում պեղումներով զբաղվող հնագետները հաս-տատել են, որ մեր թվականությունից առաջ XVIII դարում փարավոնների ստրուկները ավելի լավ են ապրել, քան Եգիպ-տոսի ժամանակակից գյուղացիները: Թեքեի շրջակայքում ապրող հին ֆելլահի ընտանիքն իր տրամադրություն տակ ունեցել է երկուսից երեք սենյակ, իսկ երբեմն նաև գոմ:

Օմդեխի օգնականը, որի մոտ մենք հյուր էինք, մանր պաշտոնական անձի աշխատավարձ է ստանում և, հետևաբար, մի քիչ ավելի լավ պայմանների մեջ է գտնվում, քան մնացած ֆելլահները: Նա ապրում է երեք սենյականոց մի տնակում, քնում է մահճակալի վրա, նա ունի ապակյա դռներով մի բուֆետ, որի ներսում գեղեցիկ տեսքով երևում են ճենապակյա վեց թասեր և մի հախճապակյա ափսե: Բայց նա ազնիվ մարդ է: Նա իր սրտում գորգորանքով պա-հել է հուսադրության այն խոսքերը, որ մի քանի տարի առաջ գյուղ էին բերել երկու պանդուխտ ուսանողներ: Նա

զրքեր է գնում և ստանում է թերթեր, երբեմն նույնիսկ ար-գելվածները: Նա ֆելլահներին պատմում է, թե ինչ է կա-տարվում աշխարհում՝ Արևելքում և Արևմուտքում, — և նրանց նախագգողացնում, որ հեռու չէ այն օրը, երբ շահա-գործողներին անբավարար կթվա ֆելլահների աշխատանքի արդյունքի յուրացումը և կուզենան ֆելլահներին զինվոր դարձնել, որպեսզի նրանց ուղարկեն կովիլու եղբայրական ժողովուրդների դեմ, հօգուտ իրենց տերերի: Նա նրանց սո-վորեցնում է՝ եթե իրենք համարձակութուն ունենան գլուխ բարձրացնելու և բոլորը միասին ասեն՝ «Ո՛ր», ապա նրանք կկարողանան փոխել իրենց գոյության պայմանները, որովհետև իրենք են երկրի իսկական տերերը: Չէ՞ որ, եթե չլինի իրենց աշխատանքը, անապատը ողջ-ողջ կթաղի աշ-խարհի այդ ամենահարաշալի այգին, և այն ժամանակ Նեղոսը կհոսի ավազի օվկիանոսի միջով, ինչպես դա եղել է նախա-պատմական ժամանակներում: Օմդեխի օգնականի նման մարդիկ են ահա, որ փոխում են աշխարհի դեմքը:

Նրբ ֆելլահներին հասավ այն լուրը, թե Յարուկ թագա-վորին քել են, և որ նոր իշխանությունը խոստանում է խոշոր կալվածները¹⁾ բաժանել, օմդեխի օգնականն իսկույն ստեղծեց գյուղացիական կոմիտե, որի շուրջը համախմբվե-ցին գյուղի համարյա բոլոր գյուղացիները: Այնուհետև նա օգնեց կոմիտեին պետիցիա կազմել, որը որոշվել էր ուղար-կել գեներալ Նագիրին: Քեմալն ինձ համար թարգմանեց պետիցիայի բովանդակությունը:

Պետիցիան սկսվում էր գյուղի կյանքի պայմանների նկարագրությամբ, որը ես ուրվադժեցի վերևում: Այնուհետև զալիս էր ռեֆորմի պարզ նախագիծը՝ հողային տարածու-

1) Ագրարային ռեֆորմի մասին գեներալ Նագիրի կառավարության ընդունած օրենքը նախատեսում է բունագրավել և որոշ փրկագնի դիմաց գյուղացիներին բաժանել կալվածատերերի հողային այն տիրույթները, որոնք գերազանցում են երկու հարյուր ֆեդանից (ֆեդան՝ 0,42 հեկ-տար): Այդ ռեֆորմի կիրառման հետևանքով փոքր հողատիրներ կա-րող է ստանալ ֆելլահների մեկ տասնհինգերորդից մինչև մեկ քսաներորդ մասը:— Մանր. խմբ.:

թյունների բաժանում, կոտպերատիվների ստեղծում, ոռոգման մեքենայացում և եզրակացություն մեջ՝ վարձավճարի նվազեցում ու գյուղատնտեսական բանվորների աշխատավարձի բարձրացում: Այնուհետև գալիս են համազգային բնույթի պահանջները՝ Սուեզի ջրանցքի գոտուց օտարերկրյա զորքերի վտարում, Անգլիայի կամ Միացյալ նահանգների հետ ուղղակի դաշինքների մերժում: Պետիցիան վերջանում էր մի շարք լուղունգներով: Ես դրանք մեջ եմ բերում այն տեսքով, ինչպես նրանք կան.

«Կորչի՜ իմպերիալիզմը»

«Կեցցե՛ն գյուղացիական կոմիտեները»

«Կեցցե՛ գինվորների և գյուղացիների դաշինքը»

«Կեցցե՛ գյուղացիների և բանվորների դաշինքը»

«Հողը ֆելլաճներին»

«Կեցցե՛ անկախ եզիպտոսը»

Սակայն ինձ անհանգստացնում էր ֆելլաճների հավատը այն բանին, որ ահա արդեն հեռու չէ այն օրը, երբ լավ ժամանակներ են գալու: Իմպերիալիստները այնքան հեշտություններ չեն համաձայնի թուլացնել ֆելլաճների վզին անցկացրած օղակը: Եզիպտոսը գանձ է նրանց համար. այնտեղ է ավիացիոն բազաներով ցանցապատված անապատը, այդ բազաներին պարենամթերք մատակարարող աշխարհի ամենահիանալի այգին, քաղաքացիական ու ուղղակի կարիքների համար շափազանց էժան բանվորական ուժը և, բացի բոլոր այլ բաներից, հսկայական շահույթները նրանց համար, ովքեր իրենց կապիտալներն արդեն այնտեղ ներդրել են կամ պատրաստվում են ներդնել: Ինչո՞ւ վտանգի ենթարկել այդպիսի բարիքները, մի՞թե ավելի լավ չէ առատորեն վճարել իրենց վարձկաններին, որպեսզի նրանք սանձահարեն գյուղացիական կոմիտեներին: Իսկ տեղական բնակիչներից դուրս եկած վարձկանները, ինչպես պատմությունն է ապացուցում, նմանօրինակ գործերից ավելի լավ են գլուխ հանում, քան ուրիշ որևէ մեկը, նրանք սովորաբար ավելի շատ են իրենց վարկաբեկում և այդ պատճառով էլ «կարգի պահպանմամբ» ավելի շատ են շահագրգռված, քան

իրենց տերերը: Չկա մի այնպիսի դավաճան-միխիստր, որ կրակից շատ չվախենա, թե կհասնի այն ժամը, երբ ինքը հարկադրված կլինի ժողովրդին հաշիվ տալու իր գործունեության մասին, և որը, անքնությունից տանջվելով, գիշերն ամբողջ չմտածի այն մասին, թե Ամերիկա թաշուղ վերջին ինքնաթիռում հանկարծ տեղ չլինի բոլորի համար:

— Մի՞թե դուք իրոք հավատում եք, — հարցրի ես օմդեխի օգնականին, — որ գեներալ Նազիրը և Մինիստրների խորհրդի նախագահ Ալի Մախերը մտադիր են իրագործել իրենց խոստացած ադրաբային ռեֆորմը: Դուք հավատացած եք, որ նրանք դեռևս երկար ժամանակ շարունակելու են հրաժարվել պակտեր ստորագրելուց, թեև այդ ստորագրության զիմաց նրանց խոստանում են տալ սպառազինություն և ինքնաթիռներ, որ այնքան ցանկալի է գինվորականների համար, նրանց պատիվներ են ցույց տալիս, որ նրանց սրտերը հպարտություններ է լցնում, խոստանում են կապիտալներ, որ նրանց հնարավորություն է տալիս ամեն տեսակի շացուցիչ, հնարովի բաներով շեղել Եզիպտոսի ժողովրդի ուշադրությունը իր կենսական շահերից:

— Ես որտեղից կարող եմ իմանալ, — պատասխանեց նա, — թե ինչ է անցնում գեներալի գլխով և ինչ է թաքնված նրա հոգու գաղտնաբանում: Բայց դրա փոխարեն ես գիտեմ, որ Եզիպտոսի պատմության մեջ առաջին անգամ ամբողջ երկրով ստեղծվում են գյուղացիական կոմիտեներ և պահանջների ցուցակներ են կազմվում, որ ֆելլաճը ձայն է բարձրացնում: Ես գիտեմ նաև նաև, որ եթե գեներալ Նազիրը ականջ չդնի ֆելլաճի ձայնին, նա կսրբվի, ինչպես սրբվեց Յարուվը:

Ես արդեն ասացի, որ այդ մարդը վերջին տարիներին շատ էր կարդացել:

— Հիշեցե՛ք, — շարունակեց նա, — ձեր երկրի պատմությունը: Հազար յոթ հարյուր իննսուներեք թվականից մինչև գլխավոր շտապների կողմից պետիցիաների կազմվելը անցավ շորս տարի և քիչ չէին այնպիսիներ, որոնք ռևոլյուցիայի առաջին տարում ցույց էին տալիս, թե ծառայում են

ժողովրդի շահերին, բայց հետո դարձան նրա թշնամիները: Սակայն դա շխանգարեց ֆրանսիական ժողովրդի հաղթանակին:

Օմդեխի օգնականը ուղեկցեց մեզ մինչև ճանապարհը: Մաղկած բամբակենիների և պոմիդորի հակայական դաշտի միջև ընկած գյուղամիջյան ճանապարհով դեպի մեզ էր գալիս սպիտակ էջի վրա նստած, սպիտակ գալաբի հագած, նույնպես սպիտակ գույնի ծոպավոր հովանոցով մի մարդ:

Մարդը դիմեց օմդեխի օգնականին:

— Ես ձեզ մոտ եմ գալիս X գյուղից, — ասաց նա: — Մենք նոր հենց մեզ մոտ գյուղացիական կոմիտե ենք ստեղծել: Մեզ ասացին, որ ձեր գյուղում արդեն պետիցիա են կազմել: Ինչպե՞ս է այդ արվում: Այդտեղ ի՞նչ պետք է գրել:

Օմդեխի օգնականը զրուցող մարդուն նայեց իր անսահման բարի, քնքուշ հայացքով: Նրա աշխույժ, խելացի աչքերում ժպիտ փայլատակեց:

— Մտի՛ր մեր տուն և մի քիչ սպասիր ինձ, — ասաց նա, — պետիցիայում հարկավոր է ասել այն ամենի մասին, ինչ ֆելլահներն են ուզում: Ես քեզ կօգնեմ գրելիս:

Նեղոսի բազուկներից մեկով, որը հարևան դաշտի վրա աճած բարձր եգիպտացորենի պատճառով այտեղից չէր երևում, դանդաղորեն սահեց եռանկյունաձև մի մեծ առագաստ. թվում էր, թե նա շարժվում է ցամաքի վրա, մի կածանով: Սպիտակ աղավնիների, եգիպտական քնքուշ աղավնիների մի երամ թռչում էր ծաղկած բամբակենիների վրայով, օմդեխի օգնականը, ձեռքը դրած սպիտակ էջի գավազին, ունկնդրում էր X գյուղի պատվիրակին: Բարձրահասակ, նիհար, քիչ կոացած, իր երկար գալաբիի մեջ այնքան ազնւրվաբարո աչք մարդը շուտ եկավ դեպի մեզ, նայեց իր արտահայտիչ աչքերով և ձեռքի մի շարժումով մատնացույց արեց ֆելլահին:

Գ. ԱՌԻՆ ԷՆՆՆԵՐՈՐԳ

«ԱՍՅԻ» ՊԱՐՏԻԱՅԻ ԳՍՎԱՌՍԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ

Երեկոն իջնում էր, երբ մենք հասանք Դելտայի վրա տեղավորված պրովինցիաներից մեկի կենտրոնական քաղաք, գյուղատնտեսական արտադրանքների առևտրի խոշոր կենտրոն Ն. քաղաքը:

Քաղաքի բոլոր տղամարդիկ՝ ոմանք իրենց տան առաջ աթոռների վրա նստած, ոմանք փոքրիկ խանութի վաճառասեղանի մոտ, ուրիշներ՝ սրճարանի փոքրիկ սեղանի առաջ, քննարկում էին քաղաքական վերջին դեպքերը: Իսկ դա կատարվում է ահա՛ թե ինչպես. ինչ-որ մեկը՝ ամենից դրագետը, բարձրաձայն կարդում է թերթը. շուրջը խմբված անգրագետները ուշադրությամբ լսում են, ժամանակ առ ժամանակ ընդհատելով ընթերցողին կամ, ավելի ճիշտ, խրախուսում են նրան բացազանչություններով: Ընթերցողի պատասխանատու դերը սովորաբար կատարում է տեղացի քաղաքական լիդերը: Ընթերցումից հետո տաք վեճեր են առաջանում, որոնք տևում են մինչև ուշ գիշեր: Հրապարակային ընթերցմամբ փոխհատուցվում է եգիպտական թերթերի փոքր տիրածը (թերթերից ամենամասսայականը, վաֆղակահանների օրգան «Ալ-Մըսրիհ», լույս է տեսնում ընդամենը միայն 200 հազար օրինակով): Վիճաբանությունները շարունակ խիստ բոբբոբվում են: Եգիպտոսում նոր երևույթ չէ հասարակական կյանքի նկատմամբ ցուցաբերվող հետաքրքրությունը, միայն այդ հետաքրքրությունը մի քիչ մարել էր հունվարի 26-ի անկարգություններից և երկրում ուղմական

գրություն հայտարարվելուց հետո. երբ մարդ գրկվում է հուլիսից և հեռանկարից, դադարում է մտածելուց: Թաղա-վորի անկումից հետո երկրի քաղաքական կյանքը նորից աշխուժացավ:

Ամենատաք վիճաբանությունները տարվում են վար-սավորի մոտ, որի խանութը բաց է մինչև ուշ ժամանակ՝ ճիշտ այնպես, ինչպես «Հազար ու մեկ գիշերներ» հեքիաթ-ներում:

Պատերի վրա դեռևս կարելի է կարդալ անցած աշնանը արված մահադրություններ՝ Սուեզի ջրանցքի գոտում անգ-լիական զավթիչների դեմ զինված պայքարի կոչեր: Կար-մըրադեզով (сурок) արված բազմաթիվ գծադրությունները պատկերում են անգլիացիների կողմից կախված ֆելլահներին. այդ գծադրությունների տակի տեքստը վրեժխնդրության կոչ է անում:

Մեզ ընդունեց Մ.-ն, «Ալաֆր» պարտիայի այստեղի ստո-րին կոմիտեի նախագահ: Նրա նախապարտեզով տնակը նման է մեր դյուղական դատավորների, նոտարների և դա-տապաշտպանների բնակարաններին և կահավորված է միևնույն ճաշակով: Միայն կանանց բացակայությունն է հի-շեցնում, որ մենք գտնվում ենք մուսուլմանական Արևել-քում: Բայց միևնույնը ամբողջապես նույնն է, ինչ Ֆրանսիա-յի մի որևէ դյուղական խուլ վայրում: Մ.-ն 1907 թվակա-նին միանգամայն կարող էր Ռիոմում կամ Մոնտելիմարում լինել ռազիկալ-սոցիալիստական պարտիայի տեղական կոմի-տեի նախագահ: Ողջունելով ինձ, նա հիանալի ֆրանսերենով հիշեցրեց «1789 թվականի ռևոլյուցիայի անմահ սկզբունք-ները»:

Ն. քաղաքում, ինչպես և Եգիպտոսի քաղաքների մեծ մա-սում, «Ալաֆր»-ի կոմիտեները այնքան են, որքան թաղամա-սեր կան: Այդ կոմիտեների անդամները արհեստավորներ են, խանութպաններ կամ ազատ պրոֆեսիայի մարդիկ: Նրանց միավորում է մարզային կոմիտեն, որի մեջ են մտնում մի քանի անվանի քաղաքացիներ, դատապաշտպաններ և ուսու-ցիչներ՝ Մ.-ի գլխավորությամբ: Ոչ մի ընդհանուր ժողով

տեղի չի ունենում, բայց կոմիտեի անդամները հաճախ սրբ-ճարանում կամ որևէ մեկի տանը հանդիպումներ են ունե-նում նրանց հետ, ովքեր իրենց սրտին ավելի մոտ են:

Մ.-ը համառոտակի բացատրում է ինձ «Ալաֆր»-ի գա-վառական կոմիտեի ծրագիրը, ջանադրությամբ ընդգծելով, որ առաջին կետի կատարումը ամբողջապես կախված է այն բանից, թե բանակը արդյոք կհամաձայնվի՞ պաշտպանել մնացած կետերը: Նկատեցեք, Մ.-ն ասում է «բանակ»: Նա ոչ գեներալ Նազիրի, ոչ էլ Ռազմական կոմիտեի անունն է տա-լիս, նա միայն բանակն է ճանաչում: Ահա թե ինչ եմ ես գրել նրա թեկադրությամբ:

«Ն. քաղաքի «Ալաֆր» պարտիայի կոմիտեի 1952 թ. օգոստոսին մշակված ծրագիրը.

1. Աջակցություն բանակին:
2. Երկրում պառլամենտական կյանքի վերականգնում:
3. Ռազմական դրուժյան վերացում:
4. Ջրանցքի գոտում անգլիական զավթիչների դեմ զին-ված պայքարի վերականգնում:
5. Ամեն տեսակի ռազմական պակտերից և դաշինքնե-րից հրաժարում:
6. «Ալաֆր»-ի մասնակցությունը կազմավորման պրոցե-սում գտնվող «ազգային կոմիտեներին», որպեսզի համատեղ ուժերով ձեռք բերվի վերև նշված պահանջների բավարա-րումը»:

«Ազգային կոմիտեները» մեծ կարևորություն ներկայաց-նող նոր երևույթ են Եգիպտոսի քաղաքական կյանքում: Այդպիսի կոմիտեներ ստեղծելու գաղափարը ծագել է 1951 թ. աշնանը, երբ Անգլիայի հետ կնքած պայմանագիրը չեղյալ հայտարարելուց հետո Սուեզի ջրանցքի գոտում չեղյալ պայքար բռնկվեց: Քաղաքական տարբեր պարտիա-ների անդամները և անկազմակերպ հայրենասերները այն ժամանակ խմբվում էին «Ալաֆր»-ի ստորին կոմիտեների շուրջը, որպեսզի նյութական օգնություն ցույց տան պայ-քարի մեջ մտած պարտիզանական ջոկատներին: Խնդիր էր գրված միջոցներ, դեղորայք, զենք հավաքել և կամավորներ

հավարտագրել: Սակայն տեղերում կազմված այդ խմբերը, որոնք սկզբում ամենատարբեր անվանումներ ունեին և հետագայում կոչվեցին «ազգային կոմիտեներ», մի անվանում, որը մամուլի շնորհիվ լայնորեն տարածվեց, շուտով դարձան քաղաքական ակտիվ կյանքի կենտրոններ: Այդ խմբերն էին, որ «Վաֆդ»-ի ղեկավարներին խանդարեցրին զիջումներ անել թագավոր Ֆարուկին և անգլիացիներին:

Ն. քաղաքում «ազգային կոմիտեի» մեջ մտան «Վաֆդ» պարտիայի, սոցիալիստական պարտիայի և պրոգրեսիվ կազմակերպությունների անդամները. ժամանակավորապես նրա մեջ մտան նաև «Մուսուլմանական եղբայրության» ներկայացուցիչները, սաադիստների ուսուցիչները և «անկազմակերպները»: Այդպիսով, ստեղծվեց ազգային լայն ճակատ:

Երկրում ռազմական դրություն մտցվելուց հետո, Ն. քաղաքի «ազգային կոմիտեի» ցրվեց, շատ վաֆդականներ ձերբակալվեցին և մի քանի շաբաթով ուղարկվեցին համակենտրոնացման ճամբարները:

Այժմ, գեներալ Նազիրի և Ալի Մախերի ղեկատարությամբ շաբաթում, «ազգային կոմիտեի» արդեն փաստորեն վերականգնել է իր գոյությունը և կարողացել է նույնիսկ բաց թողնել մի թուղթիկ, որը բացատրում է համատեղ գործողության սկզբունքները: Քաղաքական ուստիկանությունը ցրեց կոմիտեի հիմնադիր ժողովը, արձանագրություն կազմեց և իր հետ տարավ մի քանի մարդկանց, որոնք բողոքել էին նմանօրինակ կամայականության դեմ: Սակայն մի ժամից հետո այդ մարդկանց բաց թողին: Նոր ժողովը նշանակվեց հաջորդ օրը. այժմ արդեն ոչ ոք արգելք չէր լինում այդ ժողովի մասին ակդարարող թուղթիկի տարածմանը: Ես Մ.-ին հարցրի, թե մի՞թե նա վախ չունի, որ գեներալ Նազիրը շուտով կարող է վերջ դնել ռազմական դրության խստության այդօրինակ թուլացմանը: Նա ինձ պատասխանեց նույն այն ոգով, ինչպես օմդեխի օգնականը.

— Ես որտեղի՞ց իմանամ գեներալ Նազիրի պլանները՞ Այն էլ զեռ հարց է, թե նա ունի՞ արդյոք այդպիսիք: Մի՞թե

գեներալները երբեք մի որևէ բան ունեցել են իրենց գլխում: (Նկատեցե՛ք, դատապաշտպանը Ֆելլահից շատ ավելի «հակամիլիտարիստական» է): Բայց ես գիտեմ, որ եթե գեներալ Նազիրը ժողովրդական կամքին չենթարկվի, նա կարբվի, ինչպես սրբվեց թագավորը: Առայժմ մենք շատ շնորհակալ ենք բանակից այն ծառայության համար, որ նա ցույց տվեց ժողովրդին՝ թագավորին քշելով: Եթե ժողովրդի այժմյան ծառաները դավաճանեն նրա շահերը, ժողովուրդը կկարողանա նորերը գտնել:

«Ազգային կոմիտեներն» իրենց հիմքում կարծես թե կրկնում են այն շարժումը, որից առաջացավ «Վաֆդ» պարտիան: «Վաֆդ» արաբերեն նշանակում է «գեղեգացի»: Այսպես էին կոչվում Եգիպտոսի բոլոր պարտիաների այն ղեկավարները, որոնք առաջին համաշխարհային պատերազմի վերջում կոնֆերենցիայի էին գնացել Լոնդոն, որտեղ գեղեգացիան անկախություն էր պահանջում իր երկրի համար: Այդ օրվանից առանձին դասակարգերի միջև եղած ընդհարումները (դասակարգեր, որոնց արտահայտիչները եգիպտական հին պարտիաներ էին), ժամանակ առ ժամանակ իրենց զգացնել էին տալիս «Վաֆդ» պարտիայի մեջ, որի հետևանքով նրա շարքերից դուրս էին գալիս խմբեր, որոնցից հետագայում կազմվեցին Եգիպտոսում ներկայումս գոյություն ունեցող պարտիաների մեծ մասը: Շարունակ բախումներ էին առաջանում «Վաֆդ» պարտիայի ղեկավար կոմիտեի խոշոր կալվածատեր-ֆեոդալների, ստորին կոմիտեների մանր և միջին բուրժուազիայի և ընտրողների գլուղացիական մասսայի միջև:

Ահա թե ինչու կաշատակերություն և կորուստի պայմաններում կամպանիան և «մաքրագործման» վերաբերյալ դեկրետները շատ չէին վախեցնում Մ.-ին, չնայած այն բանին, որ դրանք ակնհայտ կերպով պառլամենտի անդամների և ամենից առաջ վաֆդականների դեմ են ուղղված: Նա, ինչպես երևում է, դեմ չէ, որ այդ կամպանիան իր պարտիայի ղեկավար կոմիտեի անդամներից մեկն ու մեկի պատվին է

կալում: Իրենց մոտ՝ տեղում, «մաքրագործումը» նրան թույլ տվեց ազատվելու ղեկավար կոմիտեի իր մի ախոջանից:

— Բանից պարզվեց, որ նա գող էր,— բացատրեց Մ-ն:

— Գարշելի՛ վաշխատու, վերաբնորդ,— ավելացրեց ներկաներից մեկը:

— Բարդավի փաշայի գործակիցը,— հարեց երրորդը:

— Ասա՛ Աշուր Բաղրավի, չէ՞ որ այժմ փաշաներ չկան:

— Փաշա է, թե ոչ, միևնույն է, նա շուն է, շուն էլ կմնա:

Այսպես էր խոսակցության տոնը: Նկատենք, որ Աշուր Բաղրավին «Վաֆր» պարտիայի գլխավոր քարտուղար Սիրազ էդ-Դինի փեսան է, իսկ մեր խոսակցության բոլոր ներկա եղողները այդ պարտիայի անդամներ էին: «Վաֆր»-ի մեջ մտած բուրժուազիան, հենվելով գյուղացիական մասսայի վրա և բանակի աջակցությամբ, նույնիսկ առանց նրան, հիմիկվանից մտադիր է միայնակ կառավարել թե՛ երկիրը, թե՛ պարտիան: Այդ է «աղբային կոմիտեների» ստեղծման իմաստը, կոմիտեներ, որոնք հավանաբար եզրիպտոսում նույն դերն են խաղալու, որպիսին խաղացին մեծ ակումբները ֆրանսիական ռևոլյուցիայի ընթացքում: Դրանով էլ բացատրվում է այն, թե ինչու «Վաֆր»-ի ստորին կոմիտեների ղեկավարները այնքան հաճախ են վերհիշում մեր ռևոլյուցիան, որի ընթացքում ֆրանսիական բուրժուազիան իշխանությունը վերցրեց իր ձեռքը: Վերջապես, հենց դրանով են բացատրվում նաև դենեբալ Նագիրի գործողությունները, Նագիրի, որը մի քանի շաբաթ անց «Վաֆր»-ի մի խումբ ղեկավարներին ձերբակալելու հրաման տվեց: Միաժամանակ նա փորձ արեց ստանալ «Վաֆր»-ի մեջ մտնող բուրժուազիայի աջակցությունը, իր նշանաբանը հայտարարելով. «Ազատություն, հավասարություն, եղբայրություն» լողունով:

Խոսակցությունը, ինչպես այդ սովորական էր դարձել եզրիպտոսի համար 1952 թվականի օգոստոսին, արագորեն անցավ ազգաբային ռեֆորմին: Ամեն մեկը հաղորդում էր այն, ինչ իրեն հայտնի էր գյուղացիների միջավայրում տե-

ղի ունեցող շարժման մասին: Այդ պրովինցիայի ամենախոշոր հողատեր Աշուր Բաղրավի (որի մասին մենք հիշատակեցինք վերևում) վարձակալները մտել են այն շարժման մեջ, որ սկիզբ է առել Դելտայի մյուս ծայրում. նրանք հայտարարել են, որ մտադիր չեն վճարելու վարձավճարը, որի ժամկետն անցել է օգոստոսի վերջին: Թագավորական կալվածքներից մեկի ֆելլահները հրավիրել են հողաշափին, որ նա նշի հողերի բաժանումը, որ նրանք վճռել էին կիրառել բամբակահավաքից հետո:

Այդ տեղեկությունները փոթորկալի խանդավառություն էին առաջացնում մեր տան տիրոջ և նրա ընկերների մեջ: Ինձ հետաքրքրում էր, թե ո՞վ է ներկաներից այն մեկը, որը այսպես մոլեռանդորեն մարանչում էր նոր կարգի համար, և ես այդ մասին հարցրի:— Նա ոստիկանական սպա է,— պատասխանեցին ինձ: Ի՞նչ միամիտ մարդ եմ ես: Հետագա խոսակցություններն ու հաջորդ օրվա դեպքերը ապացուցեցին, որ ժանդարմական այդ սպան, (միայն թե մի՛ շփոթեք քաղաքական ոստիկանության հետ, որովհետև ժանդարմերիայում կատարվում է նույնպիսի հավաքագրում, ինչպես բանակում և կարելի է փրկագնվել ինչպես նրան ծառայելուց, այնպես էլ բանակում ծառայելուց), բանից պարզվում է, իսկական ղեմնկրատ էր, ոգով հարազատ ֆրանսիական այն զվարդիականներին, որոնք Փարիզի բնակչությանն օգնեցին Բաստիլիան վերցնելու: Եվ այդ սպան բացառություն չէ եզրիպտական ժանդարմների և զորքի բոլոր տեսակների սպանների մեջ: Իսկ դա, անկասկած, իր դերը կխաղա երկրում ուժերի փոխհարաբերությունը որոշելիս:

Քեմալի հետ մենք որոշել էինք այդ երեկոն անցկացնել ֆրանսերենի թարգմանելով իր պոեմներից մեկը: Բայց ստացվեց այնպես, որ մինչև ուշ գիշեր մենք զբաղվեցինք «քաղաքական իրադրության վերլուծմամբ», ելնելով այն բանից, ինչ տեսել և լսել էինք: Քեմալը գանգատվեց, որ իր հետ միշտ այդպես է պատահում. քաղաքական աշխատանքը

խլում է իր ամբողջ ժամանակը՝ նույնիսկ այն ժամանակ,
երբ բանտում է նստած:

— Բայց բանտում կամ համակենտրոնացման ճամբարում համեմայն դեպս դու արդեն կկարողանայիր փոքր ժամանակ որսալ և գրել:

— Դա շատ ավելի գժվար է, քան թվում է:

— Մի՞թե եզրպտական բանտերում արգելում են գրել:

— Երբեմն: Սակայն գլխավորը դա չէ. ոտանավորը միշտ կարելի է հիշողության մեջ պահել: Միայն թե բանտում մարդը ավելի շատ է զբաղված լինում, քան կարելի է ենթադրել...

Ես դրանում համոզվեցի հենց հաջորդ օրը:

Պ.ՈՒՆՆ ՎԵՅՆՐԱՐԴ

ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ԾԱՂԻԿԸ

Ն. քաղաքում ավտոբուսից իջնելու ժամանակ մեզ սպասում էին Ալ-Ազխար համալսարանի երկու ուսանողներ՝ Նուր էդ-Դինը և Մարխազը, որոնք իրենց ծնողների մոտ էին եկել արձակուրդին. ծնողները մանր հողատերեր են և իրենք են մշակում իրենց հողը:

Կահիրեի Ալ-Ազխար համալսարանը աշխարհի ամենախոշոր մուսուլմանական համալսարանն է, իսլամական կուլտուրայի կենտրոնը: Այնտեղ ամենից առաջ դասավանդում են աստվածաբանություն և մուսուլմանական սովորույթների իրավունք, բացի այդ, արաբական քերականություն և ճշգրիտ գիտություններից որոշ բաներ: 1947 թ., երբ ես առաջին անգամ այցելեցի Ալ-Ազխար, մեծ նորամուծություն համարվեց ներքին հեռախոսի անցկացումը, որը ֆիզիկայի լսարանը կապում էր ռեկտորի կարիներտի հետ: Այդ հեռախոսը ուսանողների համար ծառայելու էր որպես ժամանակակից տեխնիկայի բարձր մակարդակի ակնառու մի ապացույց: Ռեկտորը պնդեց, որ ես անպայման փորձեմ ապարատը: Մենք զանգահարեցինք ֆիզիկայի պրոֆեսորին, նա պատասխանեց: Ապարատը աշխատում էր: Ահա քեզ հրա՛շք...

Ուսանողները, որոնց թիվը, նայած հավաքագրմանը, տատանվում է քսանից մինչև երեսուն հազարի միջև, այնտեղ են գալիս իսլամի բոլոր երկրներից: Նրանք ապրում են համալսարանին անմիջապես մոտիկ, բնակվելով ազգային հատկանիշով: 1947 թ. ես շատ օրեր եմ անցկացրել տնից

տուն մտնելով. մեկում մարտկոցիներ են ապրում, մյուսում՝ ինդոնեզցիներ, երրորդում՝ իրանցիներ, իսկ ավելի այն կողմը՝ էրիտրեյցիներ, իրաքցիներ, պակիստանցիներ, շինացիներ, թունիսցիներ, թյուրքեր, ալբանացիներ, անգլո-հորդանանցիներ, ավղաններ և այլն. երկրագնդի բնակչության կեսը ներկայացված է Ալ-Ազխարի համալսարանում:

Ալ-Ազխարում սովորող երիտասարդության ճնշող մեծամասնությունը պատկանում է բնակչության ամենաչքավոր շերտերին: Խոշոր ֆեոդալները իրենց որդիներին ուղարկում են Լոնդոնի, Փարիզի, Բեռլինի, Ամերիկայի համալսարաններ: Բուրժուազիան իր հետնորդներին նպաստում է ժամանակակից բարձրագույն ուսումնական հաստատություններում է գրանցում: Ազխարականը, դա, որպես կանոն, գյուղացու որդի է, որին իր գյուղի հողերը համայնքը միջոցներ է տվել, որպեսզի նա կարողանա աստվածային իմաստության հասնել և վերադարձին դառնալ շեյխ¹, այլ խոսքով ասած՝ սուրբ:

Մայրաքաղաքի փողոցների տեսքը և այն սուր կոնտրաստները, որ նրանց վրա նկատելի է, իսկույն այն ուսանողի աչքին են խփում, որ աստվածաբանություն սովորելու է եկել և մինչ այդ ոչ մի անգամ իր գյուղից չի հեռացել: Նրա ունեցած փողը բավականացնում է միայն այն բանի, որ իր փորը լցնի թյուրքական սիսեռով, իսկ տոն օրերին ուտի լոբի. իսկ դա էլ դեռ համարվում է մեծագույն շուայլություն: Նա թերասնվում է և այդ պատճառով ենթակա է աչքի հիվանդության՝ Արևելքի այդ արհավիրքին. Ալ-Ազխարում կուլրերի թիվը այնքան մեծ է, ինչպես Հնդկաստանի ամենասովյալ շրջաններում: Առաջին բանը, որ ուսանողն իմանում է Կահիրեում, դա դասակարգային անհավասարության գոյությունն է: Իր ուսանող ընկերները, որոնք այդտեղ են եկել տարբեր երկրներից, նրա աչքերը բաց են անում

այն բանում, որ նմանօրինակ անարգարություն է թագավորում ամենուրեք՝ թե՛ կիսանկախ երկրներում, ինչպես Պակիստանը և Եգիպտոսը, թե՛ այն երկրներում, որոնք Ֆրանսիայի և Անգլիայի գաղութներն են հանդիսանում, — և որ ամեն տեղ խոշոր սեփականատերերը գործում են օտար-երկրացիների հետ դաշինք կնքած: Այսպիսով, երիտասարդ գյուղացին իմանում է միաժամանակ այն, որ գոյություն ունի դասակարգային պայքար և այն, որ տեղական խոշոր բուրժուազիան ի վնաս իր երկրի շահերի գործարք է կնքում օտարերկրյա իմպերիալիստների հետ:

Այն սենյակներում, ուր ուսանողներն են պարսպում և քնում, (նրանք ապրում են երեքով, չորսով, ինչպես Փարիզի Ուլմ փողոցի վրա գտնվող Բարձրագույն Նորմալ դպրոցի հանրակացարանում), բորբոքվում են տաք վիճարանություններ: Մուսուլմանական կրոնը, որը չունի այնպիսի բարդ հիերարխիա, ինչպես հռոմեական կաթոլիկ եկեղեցին, մեծ հնարավորություն է տալիս գաղափարների դարգացման և կարծիքների ազատ փոխանակման համար: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտումից սկսած Ալ-Ազխարի ուսանողության մեջ ընդլայնվում և աճում է պրոգրեսիվ հայրենասիրական շարժումը, որը տարեցտարի գնալով մեծ թափ է ստանում:

Կահիրեի աշխարհիկ բարձրագույն ուսումնական հաստատությունները, որոնք երկար ժամանակ հանուն դեմոկրատիայի մղվող պայքարի առաջին շարքերումն էին, այսօր առաջնության դասին զիջում են Ալ-Ազխարին, որը վերջին տարիներս դարձել է մի կենտրոն, որի շուրջն է համախմբվել թագավորական կարգի դեմ դուրս եկած ամբողջ ինտելիգենցիան: «Մուսուլմանական եղբայրություն» ընկերությունը, որի առևտրական մանր բուրժուազիայի հետ ունեցած կապերի մասին խոսվել է վերևում, սոսկ աննշան ազդեցություն ունի Ալ-Ազխարի մուսուլմանական համալսարանի ուսանողների մեջ, դրա փոխարեն նա համարյա թե գլխավորող դեր է խաղում այս բարձրագույն ուսումնական հաստատություններում:

¹ Արաբերեն շեյխ նշանակում է «ավագ», «իմաստուն»: Շեյխերը մուսուլմանական հողերը դպրոցների, սեկտերի, համայնքների պետեր են, վանքերի վանահայրեր:— Մանթ. խմբ.:

Նուր էդ-Ռինը մեզ տարավ իր ծնողների մոտ, որոնք աղքատիկ տնակում էին ապրում: Նրա հայրն ունի երկու հեկտարից պակաս հող, որն ինքն է մշակում, և այնուամենայնիվ, դրա շնորհիվ նա արտոնյալ գրուվյան մեջ է իր համայնքի գյուղացիների շրջանում:

X-ում, ի տարբերություն այն գյուղերի, որտեղ մենք այցելեցինք նախորդ օրը, հողը մի որևէ առանձին կալվածատիրոջ չի պատկանում: Վեց հարյուր հեկտարից երեք հարյուրը պատկանում են համայնքի հետ ոչ մի հարաբերություն չունեցող չորս սեփականատերերի, երկու հարյուրը՝ դյուղում ապրող չորս ընտանիքների, մնացած հարյուր հեկտարը բաժանված է երեք հարյուր ընտանիքների միջև: Համայնքում հաշվվում է ավելի քան 10 հազար բնակիչ: Մանածագործական ֆաբրիկայում հազար մարդ էր աշխատում, որոնք այժմ գործազուրկ են մնացել:

Նուր էդ-Ռինը, որ առաջին երկու տարիները աստվածաբանություն է սովորել Ալ-Ազխարում, այժմ զբաղվում է ոչ այնքան երկնային գործերով, որքան երկրային: Սակայն նրա մեջ պահպանվել է ներքին այն կրակը, որը առիթ է հանդիսացել իր գյուղի հավատացյալներին հատկապես նրան ընտրելու և ուղարկելու Կահիրե՝ սուրբ հայրերի, գիտությունների դոկտորների մոտ սովորելու: Նուր էդ-Ռինի ճառագայթնու աչքերը առանձին փայլ են տալիս նրա դեմքին. նրա հայացքը հանգստացնում է մարդուն, իսկ նրա ժպիտի մեջ այնքան բարություն կա, որ նրան նայելիս ինքզինքդ կորցնում ես. այդպիսի ճաճանշափայլ գեղեցկությունք են աչքի ընկել այն երիտասարդները, որոնք երգվել են արաբ բանաստեղծների կողմից: Մարխազը, որ նրանից կրտսեր է, բայց նրա հետ է սովորում, նման է մարգարիի աշակերտի. նա ունի հազիվ նկատելի, լուսավոր, փոքր մորուք, և հայացքը այնքան անխոռվ չէ, ինչպիսին իր ընկերոջն է, երբեմն նույնիսկ հուզումնալի է: Իրենց երկար, անբասիր կերպով սպիտակ գալաբիներով, որ խստաշունչ են և ձգված, նրանք հիշեցնում են XV դարի կրոնական պատկերների սրբերին: Նուր էդ-Ռինը իսկական Հովհաննես Մկրտիչ է, իսկ Մար-

խազը՝ Քրիստոսի նորադարձ հետևորդը, ամոթխած և խանդավառ:

Թագավորի հրաժարման օրը Նուր էդ-Ռինն ու Մարխազը իրենց գյուղում ընդհանուր ժողով են հրավիրել, որին ներկա էին հազարից ավելի մարդ: Ուսանողները ստորագրություններ են հավաքել չորս կետերից բաղկացած պետիցիայի համար: Պետիցիայում նրանք պահանջել են երկրում ռազմական գրուվյան վերացում, խոշոր կալվածքների բաժանում, վարձավճարի իջեցում, Մեծ Բրիտանիայի դեմ մղվող զինված պայքարի վերականգնում: Այդ գյուղի տասներեք բնակիչները ժողովում ելույթ են ունեցել:

Հաջորդ օրերում ստեղծվել է գյուղացիական կոմիտե: «Մուսուլմանական եղբայրություն» ընկերության անդամները հրաժարվել են այդ ժողովին մասնակցելուց և մեր երկու բարեկամներին մատնել օմդեխին, հայտարարելով, թե նրանք անաստվածներ են և պղտորում են ժողովրդի միտքը: Օմդեխը հրաժարվել է միջամտել այդ գործին:

— Բայց մենք բոլոր ծեսերը ավելի խստությունք ենք կատարում, քան նրանք, — հայտարարեցին իրենց պատմության վերջում Նուր էդ-Ռինն ու Մարխազը, անաստվածության մեջ մեղադրվելուց վրդովված:

Ինչքան ես հասկանում եմ, դասակարգային հակասություններին խառնվում են կրոնական կարգի տարածայնություններ (իսկ այստեղ «Մուսուլմանական եղբայրության» մեջ մտնում են հարուստ գյուղացիները՝ այն չորս հոգին, որոնց պատկանում է երկու հարյուր հեկտար հող, մի ջալացպան և այդ ընտանիքներից կախում ունեցող վերագնորդները): Պետք է ասել, որ այժմ ամբողջ Եգիպտոսով մեկ Ալ-Ազխարի ուսանողներն ու «Մուսուլմանական եղբայրության» անդամները իրար դեմ մարտնչում են ծեսերի կատարման հարցերի շուրջը: Այդ տարածայնությունները, ինչպես երևում է, կրոնի նկատմամբ երկու տեսակիտ են արտահայտում. զգիսարականները գտնում են, որ կրոնը պետք է հեռու մնա աշխարհիկ կյանքից, իսկ «Մուսուլմանական եղբայրության» անդամները կրոնը ուզում են դարձնել քա-

կարական կյանքի հիմք և այդ հիմքի վրա կառուցել «իս-
լամական պետություն»: Հենց Նեղոսի դելտայի գյուղերում
ես հայտնաբերեցի մուսուլմանների միջև գոյություն ունեցող
այն կոնֆլիկտը, որը համանման է մեր դարի սկզբից կա-
թոլիկներին գզգզող կոնֆլիկտին:

Նուր էդ-Դինն ու Մարխազը որոշեցին մեզ ցույց տալ
հարևան գյուղը, որտեղ, նրանց ասելով, մարդիկ ավելի վատ
են ապրում, քան Մ-ում: Նրանք առաջուց իրենց բարեկամ-
ներից մեկին այնտեղ ուղարկեցին, որպեսզի նա հավաքի
մի քանի ֆելլահների, որոնց հետ ես կարողանայի զրուցել:

Մենք Նեղոսի բազուկներից մեկի երկայնքով ձգված
ծովապատնեշի վրայով գնացինք հետիտուն: Վերջապես իմ
հայացքի առաջ բացվեց լայն հորիզոն, և ես տեսա, թե ինչ
բան է Դելտան: Մինչ այդ ես տեսնում էի միայն մերձակա
դաշտերը, իսկ հեռուն՝ ոչինչ: Իսկ այժմ իմ առաջ բացվում
էին հրաշալի վայրեր, դեղահորաշ, ինչպես ծաղկած այգի,
բայց ֆրանսիական կրոնավորների այգիների նման կողմ-
նակի աչքից հավիտյան թաքուն:

Ամեն տեղ, ուր աչք ես գցում, մարդիկ պեղզաժի ան-
խզելի, ամենակարևոր մասն են: Մեծ գյուղերը մեկը մյուսին
այնքան մոտ են, որ միանգամից ավելի քան տասը գյուղ ես
տեսնում: Զրանցքները տամայի տախտակի նման տեղանքը
բաժանում են հավասար քառակուսիների. այս և այն տեղ
ֆելլահների խմբեր են աշխատում: Նեղոսի վրայով ծանր
բեռնված գետնավեր են ստհում. բարձրացնելով շերեփի-
ները, ճռնչում են անիվները: Զուրը կարկաչելով հոսում է
դաշտերի վրա, որոնց գույները բոլորովին նման շեն վայ-
րենի բնության գույներին. այդպիսի գույներ կարող են
ունենալ միայն մշակվող բույսերը. այստեղ կա և՛ բրնձի
ծիլերի քնքուշ կանաչը, և՛ բամբակենու խոշոր ծաղիկների
վառ դեղնագույնը, և՛ շաքարեղեգի պլանտացիաների մթա-
գույն թավիշը, իսկ Նեղոսում և ջրանցքներում ջուրը նույն-
պես մուգ-դարչնագույն է, ինչպես Սուդանի և Նուբիայի
բնակիչները, որոնք լողանում են նրա վերին հոսանքում:

Բայց ոչ մի երգ չի լսվում դաշտերում, ուր գյուղացի-

ների խմբերն են աշխատում, գյուղացիներ, որոնք հրաշքով
կենդանություն են տվել այդ հողին և շեն դադարում ամեն
օր նրա դեմքը փոխելուց: Ահա ժամանակավորապես շորա-
ցած ջրանցքի հատակում ծանրորեն շարժվում են կողովնե-
րով թանկարժեք տիղմ տանող մի քանի գյուղացիներ.
Նրանք ամեն քայլափոխին սայթաքում են, մահացու հոգ-
նածություն է գծագրված նրանց դեմքերի վրա. նրանց տես-
նելուն պես ես հիշեցի «գոմբ»-երին՝ անթիլյան առասպել-
ների կենդանի մեղեղներին: Հիրավի, ահա թե ինչու Դելտա-
յի ապրած այս գործունյա կյանքի տեսքը ավելի շուտ
մոայլում է մարդու հոգին, քան թե ուրախացնում:

Սակայն այն առավոտ, երբ մենք՝ ես ու Քեմալը, Նուր
էդ-Դինի և Մարխազի առաջնորդությամբ գնում էինք ծովա-
պատնեշի վրայով, մեր հոգին թեթև էր և լավ էինք զգում
մեզ: Դելտայի պտղաբերության առիթով առաջացած իմ
հիացումները անկեղծ բավականություն էին պատճառում
Քեմալին: Իսկ նա նախորդ օրվա նման շարունակ կրկը-
նում էր.

— Ինչքան գեղեցիկ է իմ երկիրը:

Իսկ ես նրան կրկնում էի.

— Այո՛, քո երկիրը իսկապես որ գեղեցիկ է:

Ես փորձում էի պատկերացնել և իսկույն Քեմալի հետ
բաժանում իմ մտքերը, թե ինչքան մեծ կլինեի իմ հայրենի
Բյուժեի մի որևէ լեռնականի կամ նույնիսկ Բոսի մի ֆերմե-
րի գարմանքը տեսնելով այս անծայրածիր տարածությունը,
որի վրա տարվա ամեն եղանակին արևը հավասարապես
լույս է թափում ու տոչորում, — այս հողերը, որոնց բնական
պարարտացումով հագեցած ջուրն է խոնավացնում և որոնք
տարին երեք բերք են տալիս, բոլորին ու ամեն մեկին ի
սպաս դրված իսկական ջերմոցներ են բաց երկնքի տակ:
Բայց չէ՞ որ այդպես կլինի ամենուրեք, ողջ երկրագնդի վրա,
երբ մարդը վերափոխի բնությունն ու կլիման, ինչպես այդ
պատրաստվում են անել մերձվուլգյան տափաստաններում:

Քեմալը մտավ դաշտի մեջ և ինձ համար բամբակենու
մի ծաղիկ քաղեց, որն իսկույն ես թաքցրի պորտֆելում:

որոշեցինք միասին բանաստեղծութիւնն գրել՝ նա՛ արաբերեն, ես ֆրանսերեն, և գովերգել նրա երկիրը: Այդ բանաստեղծութիւնը երկու լեզվով էլ կոչվելու էր «Նեղոսի հովիտը մի այգի է...»:

Այն գյուղում, ուր մենք հասանք, Նուր էդ-Դինի քաղաքում մի ունեւոր տան մեջ հավաքել էր տասնհինգ մարդ: Այստեղ՝ հատակին, գորգ էր փռած, հյուրերին հատկացված սենյակում գրված էր մի բազմոց և երկու բազկաթոռ, և, օմդեխի օգնականի տան նման, որտեղ մենք նախորդ օրն էինք եղել, կար ապակյա դռնակներով մի բուֆետ:

Ես և Քեմալը նստեցինք բազմոցի վրա, Նուր էդ-Դինն ու Մարխազը՝ բազկաթոռների վրա. մյուսները, ոտները խաշած Ժալելով, տեղավորվեցին ուղղակի գորգի վրա: Տանտերը փոքրիկ թասիկներով սև սուրճ բերեց. շորջանակի, ձեռք ձեռք էին անցնում ջրով լիքը փայտե մեծ ամաններ, որ խմում են ուղղակի նրանց շրթներին: Ներկաների մեջ ոչ մի կին չկար. կարգն այդպես է այն գյուղերում, որտեղ իսլամին են դավանում:

Ինձ ներկայացրին հրավիրվածներին, հայտնելով նրանց պրոֆեսիաները: Այդտեղ կային՝ գալաբի հագած մի գյուղական դատապաշտպան, եվրոպական շորերով մի պատմության դասատու, որը կարճ ժամանակվա համար հայրենի տուն էր եկել, երկու սափրիչներ և մի խանութպան. մնացածները վարձակալներ էին կամ գյուղատնտեսական բանվորներ:

Ես սկսեցի զրույցը: Քեմալը թարգմանում էր հարցումներն ու պատասխանները: Դրանք ես զրի էի առնում ծոցատետրում:

Բնակչությունը՝ 5 հազար: Մշակելի հողի տարածությունը՝ 275 հեկտար, որից 200 հեկտարը շորս հողատերերի ձեռքին է: Մնացած բոլորն ունեն կեսից մինչև մի քառորդ կամ մեկ ութերորդ հեկտարի չափով հողաբաժիններ: Երկու հազար հինգ հարյուր մարդ ընդհանրապես հող չունեն: Գյուղատնտեսական քանվորները վաստակում են օրը տասը

պիստոր (հարյուր ֆրանկ), բայց նրանք տարին միայն երեք ամիս են աշխատում: Գյուղացիական կոմիտեն...

Այդ ժամանակ լավեց բուռնցքով դռանը խփվող ուժեղ հարվածի ձայն: Սենյակում տիրեց լուռություն: Նորից սկսեցին դուռը թմբկահարել: Պատասխանը՝ մեռելային լուռություն: Դռան հետևից մի ինչ-որ ձայն կոպտաբար բղավեց, և սկսեցին դուռը նոր ուժով թմբկահարել: Ես Քեմալին հարցրի, թե դա ի՞նչ է նշանակում:

— Ոստիկանություն է, — պատասխանեց նա:

Տանտերը դուռը բաց արեց: Սենյակ մտավ եվրոպական պզեստով և ֆեսով, փոքրամարմին, գեր մի մարդուկ. նրան հետևում էին գալաբիներ հագած, ձեռքներին մահակներով դաշտային շորս պահակներ: Մարդուկը զայրացած տոնով ինչ-որ բղավում էր երկար. դատապաշտպանը նրան պատասխանեց է՛լ ավելի տաքացած: Նուր էդ-Դինը արտաբերեց մի քանի մեղուկի խոսքեր, թեթևակի ժպտալով իր անտարբեր և միաժամանակ բարյացակամ ժպիտով: Քեմալը մի քանի հակիրճ, սուր խոսքերով փորձեց, ինչպես երևում է, պարզություն մտցնել գործում: Այդ բոլորից ես բացարձակապես ոչինչ չէի հասկանում, քանի որ խոսակցությունն արաբերեն էր:

Նրանք ընդդիմախոսեցին լրիվ երկու ժամ: Առաջին ժամն անցնելուց հետո, Քեմալն ինձ ասաց.

— Նուր էդ-Դինի թշնամիները, որոնք նրա հետ վիճել են ձեռքը պահելու վերաբերյալ հարցերով, մեզ վրա մատնություն են արել: Նրանք մեզ մեղադրում են այն բանում, որ մենք կոմունիստների ժողով ենք գումարել և այդ ժողովին օտարերկրացի մի ագիտատոր ենք բերել:

Երկրորդ ժամն անցնելուց հետո, նա ասաց.

— Մենք ձերբակալված ենք:

Մենք մնացել էինք տասնչորս հոգի: Ֆելլահների ոմանք, օգտվելով այն առիթից, որ թե՛ Վիճաբանության բռնված ոստիկանը իրենց վրա ուղադրություն չի դարձնում, հետևի դռնից անհետացան՝ ոչ առանց դաշտային պահակների օգնության, ինչպես ինձ է թվում: Այն լուսամուտից.

որի շափաղանց բարձր լինելու պատճառով հնարավոր չէր տեսնել, թե փողոցում ինչ է կատարվում, մեր լսողութեանն էին հասնում տան առաջ հավաքված բազմութեան աղմկալի ձայները:

Մարդուկը խուզարկեց մեզ: Քեմալի միջոցով ես փորձ արի բողոքել:

— Ես ժողովուրդիս եմ: Ես ի պաշտոնե եմ գտնվում այստեղ. նյութեր եմ հավաքում: Ես պահանջում եմ հարգել միջազգային օրենքները: Դուք պարտավոր եք ինձ անհապաղ բաց թողնել... և այլն, և այլն:

Մարդուկը պատասխանեց, որ ինքը կատարում է հեռախոսով դատախազից ստացած հրամանը, և թե դատախազը ինքը կարծես թե ամեն ինչից հասկանում է:

Քուրթը նորից սկսեցին խոսել, և ընդդիմախոսությունը շարունակվեց էլի մի ամբողջ ժամ: Այդ ժամանակ հայտնվեց մի նոր օտար մարդ՝ եվրոպական զգեստով և ֆեսով. նրա դեմքի գույնը հիվանդագին էր, դեղնած աչքերը այս ու այն կողմ էին դառնում: Ես իսկույն մտածեցի, որ նա պետք է քաղաքական ոստիկանությունից լինի. այդ մարդիկ ամենուր ասես հատուկ դրոշմով են նշված: Քեմալն իսկույն հաստատեց իմ գուշակությունը:

Քաղաքական ոստիկանության ոստիկանը, իր հերթին, խուզարկեց մեզ: Նա փոքր ինչ ֆրանսերեն հասկանում էր, և ես նրան կրկնեցի իմ բողոքը: Պատասխանը եղավ նույնը: Նա ուշադրությամբ նայեց իմ ծոցատետրին և ետ վերադարձրեց ինձ: Իսկ Քեմալի և պատմության դասատուի թղթապանակները, այլև այն թղթերը, որ նա գտավ նրանց գրպանում, իսկույն վերցրեց:

Նրա հետ միաժամանակ շենքից ներս մտան խակի գուլնի համազգեստով և կարմիր ֆեսերով ոստիկանները. նրանցից յուրաքանչյուրն ուներ մեկական հրացան: Նրանք մեզ հրելով փողոց տարան: Այլ ոստիկաններ շղթա կազմեցին և մեզ ընկնելու դեպի բեռնատար ավտոմոբիլը:

Տան առաջ հավաքվել էր ֆելլահների մի բազմություն. ոմանք խոնկել էին նեղլիկ փողոցում, ուրիշները հավաքվել

էին լուսամուտների գոգին և նույնիսկ կտուրների վրա: Ծատերի ձեռքին մահակներ կային: Նրանք մեզ ողջունում էին աղաղակներով և ծափահարությամբ, իսկ ոստիկաններին ինչով ասես հայհոյում էին և, վերջապես, արգելակում բեռնատար մեքենայի ճանապարհը, այն մեքենայի, որով մեզ էին տանելու:

Ոստիկանական կապիտանը զինվորներին հրամայեց վեր քաշել հրացանների հրահանները:

Այնժամ Քեմալը ֆելլահներին կոչ արեց լուռ մնալ և սկսեց հորդորել՝ չի կարելի թույլ տալ, որ ինչ-որ գյուղում բռնկված բռնուրդ կառավարությանը առիթ ծառայի, ընդհանրապես գյուղացիական կոմիտեների դեմ արշավանք կազմակերպելու: Բացի այդ, իմ ներկայությունը ճշմարտանմանություն երևույթ կտար ոստիկանության հերյուրանքներին, ոստիկանություն, որը պնդում էր, թե օտարերկրացի ազիտատորներն են պղտորում ժողովրդի միտքը:

— Կեցցե՛ն գյուղացիական կոմիտեները, — բացազանչեց Քեմալը իր հակիրճ ձառի վերջում:

— Կեցցե՛ն գյուղացիական կոմիտեները, — կրկնեց ֆելլահների բազմությունը:

— Կեցցե՛ գյուղացիների և զինվորների դաշինքը, — բացազանչեց Քեմալը:

— Կեցցե՛ գյուղացիների և զինվորների դաշինքը, — կրկնեցին ֆելլահները:

Արաբական լեզուն, որով խոսում են Եգիպտոսում, շատ կոկորդային է հնչում, և քանի որ յուրաքանչյուր ֆելլահ բղավում էր ինչքան ուժ ուներ, այդ բացազանչությունները միախառնվելով՝ դառնում էին խլացուցիչ մի աղմուկ:

— Կեցցե՛ գյուղացիների և բանվորների դաշինքը:

— Կեցցե՛ ժողովրդական բանակը: Կորչի ոստիկանությունը:

— Կորչի՛ իմպերիալիզմը:

— Կորչի Անգլիան, կորչի՛ Ամերիկան, կորչի՛ Ֆրանսիան:

— Կեցցե՛ք ֆրանսիական ժողովուրդը:— Եվ Քեմալը,
ձեռքի շարժումով, բազմությանը մատնացույց արեց ինձ:

— Կլինի՞ հողերի բաժանում:

Բազմությունը ամեն լուրենգ աղաղակում էր ավելի ու
ավելի բարձրաձայն ու ավելի կոկորդային: Խմբական ձայ-
ները հնչում էին ավելի ու ավելի միահամուտ, — թվում էր,
թե հզոր պայթյուններ են ցնցում օդը:

Բևոնատար մեքենան դանդաղորեն ճանապարհ ընկավ՝
տանկով մեզ բոլորիս:

— Կեցցե՛ն գյուղացիական կոմիտեները, — աղաղակեց
Քեմալը մի վերջին անգամ:

— Կեցցե՛ն գյուղացիական կոմիտեները, — բազմիցս
կրկնեց ֆելահների բազմությունը նրանից հետո:

ԳՂՈՒՆ ՏՈՅՆԵՐՈՐԴ

ԱՆՆԵԹԵԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Երբ մենք հասանք Ֆարիսկուր և կանգ առանք ոստիկա-
նական զորանոցի մոտ, մեզ նորից խուզարկեցին:

Ինձնից վերցրին իմ ծոցաառարը, Իրանի զանազան
գործիչներին ուղղված մի քանի հանձնարարական նամակները
(Եգիպտոսից հետո ես պետք է գնայի Իրան) և «Հանուն խա-
ղաղության պաշտպանության» ժողնալի գործուղման վկա-
յականը, որտեղ նշվում էր, որ ռեպորտաժի համար ինձ
հանձնարարված էր Եգիպտոսում և Իրանում հավաքել «կու-
տուրական, տնտեսական և քաղաքական հարցերը» լուսա-
բանող նյութեր: Վերցրին նաև բամբակենու ծաղիկը, որ ես
պորտֆելի մեջ էի դրել:

— Ա՛հ, այդպե՛ս, — վրդովված նկատեց Քեմալը:—
Այդ ծաղիկը խոսում է Եգիպտոսի և բամբակ աճեցնող
եգիպտական ժողովրդի նկատմամբ Ռոժե Վայանի տածած
սիրո մասին, իսկ դուք այն վերցնում եք: Նշանակում է, որ
դուք ընդունում եք, որ հենց դա է նրա հանցանքը:

Ի զարմանս իմ, այս փաստարկները, թվում էր, հարկա-
դրեցին ոստիկաններին տարակուսել իրենց գործողություն-
ների ճշտությանը: Սակայն բամբակենու ծաղիկը այդպես
էլ ինձ չվերադարձվեց:

Մեզ բոլորիս միասին փակեցին լայնատարած մի մեծ
սենյակում, որը շատ մաքուր էր և լուսավոր, ուներ հաստ
ձաղերով ծածկված մի լայն լուսամուտ. լուսամուտը բաց-

վում էր մի փոքրիկ բակի վրա, հետևում երևում էին բամբակենու և եգիպտացորենի դաշտերը և ճայերի թևերի նման վող բարձր ու սպիտակ առագաստները անտեսանելի գետանավերի, որոնք սահում էին Նեղոսի բազուկներից մեկի վրայով:

— Ինչքան գեղեցիկ է քո երկիրը, — ասացի ես Քեմալին:

— Մենք հաճելի ուղևորություն կատարեցինք, — ասաց նա ինձ, առանց դառնություն և համարյա առանց հեղնանքի: — Սակայն այս օրերին Եգիպտոսում բոլոր ճանապարհները տանում են դեպի ոստիկանական տեղամաս:

Ես հիշեցի Փարիզի մայիսյան և հունիսյան օրերը, բարեկամների պատմածները՝ «հակամարտության գործողություններ հետաքննող հանձնաժողովի» հետաքննությունների մասին, ևի Սին Մանի հայտարարությունները. հիշեցի այդ գամփոխն՝ Փարիզի ոստիկանապետ Բեյլոնին, Ֆրանկոյին, հունական գեներալներին, Ռիչուեյ-ժանտախտին:

— Դրությունն այսպես է ոչ միայն քո Եգիպտոսում, — ասացի ես Քեմալին: — Ամբողջ աշխարհը, մարդկության ողջ պատմությունը կարող են դժոխքի ծոցը գնալ ոստիկանական այս խելագար հարցաքննություններից, շարշարանքների այս խցերից և մանրեններով լցված ումբերից:

Սակայն պետք է ասել, որ ոստիկանական համազգեստով մեր պահակությունը մեզ հետ վերաբերվում էր արդեն ոչ այնքան վատ: Համեստ վարձատրությունը նրանք մեզ բերում էին թեյ և եգիպտացորենի ալյուրից ու քաղցր խոտրիզով պատրաստած բլիթներ, որոնք իսկական քաղցրեղեն էին թվում մեզ հետ նստած ֆելլահների համար: Զուգարան գնալիս, անփոփոխ կերպով մեզ ուղեկցող զինվորները, որոնք գորանոցի մյուս ծայրումն էին գտնվում, չէին առարկում, եթե մենք մեր սենյակը վերադառնալիք ամեն տեսակ ոլորապտույտ ճանապարհներով, ցանկանալով ծանոթանալ այդ վայրերի տեղադրությանը: Ֆարիսկուրում ապրող բարեկամներից մեկը, որն իմացել էր մեր ձերբակալման մասին, առանց որևէ դժվարություն եկավ մեզ մոտ՝ ըսվել և վանդա-

կորմից խոսեց մեզ հետ: Մենք նրան խնդրեցինք հեռախոսով նախազգուշացնել կահիրեցիներից ոմանց, մեր պահակները այնպես ցույց տվին, որ իբր թե ոչինչ չեն լսել և չեն նկատել:

Ֆելլահները ծալապատիկ նստել էին հատակին: Նուր եղ-Ռինը շշուկով պարզաբանում էր նրանց, որ գյուղացիական կոմիտեները ի վիճակի են փոխելու Եգիպտոսի գեմբը և ֆելլահների վիճակը: Պատմության դասատուն քնել էր հատակին՝ իր փոսած թերթերի վրա ձգված: Քեմալն ու դատապաշտպանը քննարկում էին այն կոնկրետ պրոբլեմները, որ առաջադրում էր ժողովրդագրեմոկրատական շարժման կազմակերպությունը: Մենք թեյ էինք խմում, բլիթներ ուտում և դիտում հորիզոնի վրա լողացող առագաստները: մի խոսքով դա մի պիկնիկ (գրոսսախնձույթ) էր բանտում: Ես որոշեցի այլևս հարցեր չտալ, որովհետև Քեմալը միանգամից ինձ սպառիչ պատասխան տվեց այն ամենի մասին, ինչի մասին որ ես կարող էի նրան հարցնել: Նա ասաց, թե քանի որ մենք ոստիկանության ձեռքն ենք ընկել, այժմ արդեն չի կարելի նախազուշակել, թե երբ ենք մենք ազատվելու այստեղից. որ ավելի լավ է ձեռնպահ մնալ կանխորոշումներից, որոնք հիասթափությունից բացի, ուրիշ բան չեն կարող բերել. որ հարկավոր է նախապատրաստվել կատարելու այն, ինչին մեր համոզմունքների տեր մարդը պարտավոր է հետևել ամենուրեք՝ նույնիսկ բանտում, — իսկ այժմ հարկավոր է մտածել մի օրևէ այլ բանի մասին:

Երեկոյան դեմ եկան Ֆարիսկուրի դատախազության չինովիկները և դատական օկրուզի կենտրոն՝ էլ-Մանսուրի դատախազը: Սկսվեց հարցաքննությունը: Մեզ հարցաքննության էին տանում հերթով. առաջինը ֆելլահներին կանչեցին. յուրաքանչյուր հարցաքննվող վերադառնում էր կես ժամից, երբեմն էլ մի ժամից հետո և հանգստությունը պատմում էր, թե իրեն ինչ հարցեր են տվել և ինքն ինչ է պատասխանել, ապա պառկում էր և ննջում: Հարցաքննությունը տեղի էր ունենում առանց բռնություն կիրառելու: Ինձ կանչեցին վերջինը, արդեն առավոտյան դեմ:

Ֆրանսերենով կանոնավոր խոսում էր շինովնիկներից միայն մեկը, և այն էլ, ինչպես ինձ թվաց, երկրորդական աստիճան ունեցողներից մեկը: Գատախազը, ըստ երևույթի, հասկանում էր ֆրանսերեն լեզուն, բայց բացատրվում էր զմիարույթյամբ: Ես հրաժարվեցի անգլերեն խոսելուց: Զրույցին ներկա էր մի ոստիկանական փոխ-գնդապետ: Նա անհավատալի գեր էր, և, երբ եկավ նրա մեկնելու ժամը, դինվորները հարկադրվեցին նրան բարձրացնելով նստեցնել ամերիկյան մի մեծ ավտոմոբիլի մեջ: Եգիպտական ոստիկանական սպան ինչքան ավելի բարձր է աստիճանով, այնքան ավելի շաղ է լինում. նա ուտում է անզաղար, ամբողջ օրը, որպեսզի հատուցի այն սովածության և զրկանքների համար, որ նա տարել է լեյտենանտ եղած ժամանակ:

Ես բաց եմ թողնում այն ապարդյուն բողոքները, որոնցով ես դիմեցի դատախազին: Ինձ տրված հարցերը պտտվում էին զխաղաղապես եգիպտական այն գործիչների ազգանունների շուրջը, որոնք տեղ են գտել իմ ռեպորտյորական ծոցատետրում: Օրինակ, ինչո՞ւ համար իմ մի էջի վրա գրված է՝ «Մախեր-Նագիր, Նահաս, Սիրագ էդ-Դին, Աբդել Սանխուրի Ռագեկ, պետական խորհրդի նախագահ և այլն, և այլն», այլ խոսքով՝ այն մարդկանց ցուցակը, որոնց հետ ես մտադիր էի ինտերվյու ունենալ, իսկ մի ուրիշ էջում՝ «Շեքրիֆ Սաբրի—Բագրավի Աշուր և այլն, և այլն», այսինքն՝ խոշոր ֆեոդալներ, հողատերեր, որոնց մասին ինձ պատմել էին Ալեքսանդրիայում և այլ վայրերում, և որոնց մասին այդ ժամանակ ողջ եգիպտոսն էր խոսում: Այնուհետև, թե՛ իրոք ի՞նչ պետք է հասկանալ «կուլտուրական, տնտեսական և քաղաքական հարցեր» ասելով, որ ինձ հանձնարարել էր ուտում-նասիրել «Հանուն խաղաղության պաշտպանության» ժուռնալը: Եվ, վերջապես, ինչո՞ւ համար եմ ես այսպես հոգածություններ արտաֆելիս մեջ պահել բամբակենու ծաղիկը: Ինձ թվաց, որ ես հասկացա, թե բանն ինչումն է. ինչպես երևում է նրանք սխալ են մեկնաբանել «կուլտուրական հարցեր» արտահայտությունը, դրա համար ես փորձ արի բացատրել, որ կուլտուրա ասելով միայն գյուղատնտեսական կուլտուրաները

չեն հասկացվում: Ո՛չ, ո՛չ, «Հանուն խաղաղության պաշտպանության» ժուռնալը ինձ բնավ չի ուղարկել իմանալու, թե Դեյտայում ինչպիսի մեթոդներով են աճեցնում բամբակը:

Արշալույսին վերադառնալով մեր ընդհանուր խոսքը, Քեմալի հետ միասին ես վերլուծեցի ստեղծված դրությունը, որը կարելի է համարել և՛ լուրջ, և՛ ոչ լուրջ: Կուրջ մեղադրանքի պատճառներ չկային. եգիպտական օրենքները ժողովրդի ստեղծելիքն էին արգելում գյուղացիներին հարցում փորձ անելու այն մասին, թե ինչպես են գնում գյուղի գործերը, կամ չեն արգելում բանաստեղծին որպես ուղեցույց և թարգմանիչ ծառայելու ժողովրդին: Բայց երբ երկրում սակավաթիվ գյուղացիներն է, հետաքննությունը տարվում է գաղտնի, դատապաշտպանը չի կարող հանդիպել իր պաշտպանյալին կամ ծանոթանալ նյութերի հետ՝ մինչև դատական պրոցեսն սկսվելը, իսկ դատավարությունը տեղի է ունենում փակ դռների հետևում, ըստ որում՝ գործը վարում են սակավաթիվ տրիբունալի դատավորները: Այսպիսով, կառավարությունը, եթե անհրաժեշտ գտնի, կարող է շնչին բանից մի ամբողջ «գործ» սարքել: Թե սովյալ պահին Ալի Մախեր—Նագիրի կառավարության շահերին ամենից ավելի ի՞նչն էր համապատասխանում, դրանից էլ կախված էր մեր բախաբ:

Ալի Մախերի ամբողջ քաղաքականությունը այն պահին, երբ բանակի հետ ունեցած նրա կոնֆլիկտը տուժանդամապես սրվել էր, ուղղված էր այն բանին, որպեսզի որոշակի պայմաններում իրեն աշակցություն ցույց տված ժողովրդական մասսաներին լարի Ռազմական կոմիտեի դեմ և վերջինիս հարկադրի կիրառել եգիպտական խոշոր բուրժուազիայի և ամերիկացիների կամքը, որոնց շահերն էլ հենց ներկայացնում էր Ալի Մախերը: Անցյալ շաբաթ բանվորները Կաֆր-էդ Դավարում, քաղաքական օստիկանության կողմից պրովոկացիայի ենթարկվելով, քարուքանդ էին արել մի քանի արհեստանոցներ: Զինվորներ էին բերվել, փոխհրաձգություն էր սկսվել: Զինվորների և բանվորների մեջ եղել են սպանվածներ. հետևանքը եղել է այն, որ երկու

բանվորների մահվան են դատապարտել: Ահա թե ինչպես են բանակն ու բանվոր դասակարգն իրար դեմ լարում: Չլինի՞ հանկարծ մեր գործը պատրվակ գառնա մի նոր պրովոկացիայի, որն այս անգամ ուղղվի այն բանին, որ սեպ խրվի բանակի և ֆելլահների միջև: Այժմյան կառավարության հետ օպոզիցիայի մեջ գտնվող խոշոր հողատերերը այնքան են վախեցած ու ֆոբոս կիրառելու ձգտող գյուղացիական շարժման հանկարծակի բռնկումից, որ, իհարկե, չեն բողոքելու գյուղացիների հետ դատաստան տեսնելու դեմ: Ռազմական կոմիտեի այ թևը նույնպես դրան արգելք չի լինելու, հաշվելով, որ դրանով որոշ օգուտ ձեռք կբերի: Աչքերի հաշիվներով, կոմիտեն ինչքան ավելի նվազ աշակցություն ստանա գյուղացիներից, այնքան ավելի մեծ շահով կախման մեջ է ընկնելու «Մուսուլմանական եղբայրությունից»: Այդպիսով, մեր կողմը կլինի միայն Ռազմական կոմիտեի գեմոկրատական փոքրամասնությունը:

Գործը արագ կերպով կարճելու օգտին էին խոսում այն շնչին փաստերը, որոնցից դժվար էր աղմկալից դատավարություն սարքել (չէ՞ որ տվյալ դեպքում նույնիսկ ոչ ոք վիրավորված չէր). այն բողոքը, որն առաջանալու էր Եգիպտոսում, նույնիսկ ողջ Եվրոպայում, այն բանի համար, որ առանց որևէ հիմունքի երկու գրողներ դատի են տրվել. մագմական կոմիտեի գեմոկրատականորեն տրամադրված անդամների հնարավոր աշակցությունը: Գյուղական սկանդալը, քաղաքական ոստիկանության ջանքերով, պետության ներքին անվտանգության դեմ ուղղված օտարերկրյա պետությունների մի դավադրության փոխելու օգտին էր խոսում այն, որ ես օտարերկրյա կոմունիստական պարտիայի անդամ եմ, և որ Քեմալը, Նուր էդ-Դինը և ֆելլահներից մեկը բազմիցս արդեն դատի են ենթարկվել այսպես կոչված «կոմունիստական խնտրիզների» պատճառով: Արդեն խիստ հրապուրիչ բան կլինեն փակ դռների հետևում տարվող դատավարության օգնությամբ ապացուցել՝ եգիպտացի կոմունիստների և խորհրդավոր «կոմունիստական ինտերնացիոնալի» միջև եղած համաձայնությունը, մի խրտվիլակ, որը լայնու-

րեն օգտագործվում է սեպիցիոն մամուլի կողմից: Բացի այդ, ես Փարիզում՝ ամերիկացիների ցուցումով արգելված հակամեթրիկյան մի պիեսի հեղինակ եմ: Այսպիսով, իմ դատավարությունը ամերիկացիներին միայն բավականություն կարող էր պատճառել:

Բոլոր «թեյ» ու «գեմ»-երը երկար կշռել-չափելուց հետո, մենք որոշեցինք, որ մեր փրկության ամենահաստատ երաշխիքը կարող է լինել բողոքի շարժման լայն թափը, ինչպես հենց եգիպտոսում, այնպես էլ արտասահմանում, հատկապես այժմ, երբ Նազիր—Ալի Մախերի իշխանությունը, որը դեռևս բավականաչափ ամրացված չէ, նույնիսկ թուլացած է ներքին հակասություններով, ձգտում է եգիպտական և միջազգային հասարակական կարծիքի հնարավորին չափ ավելի լայն աշակցությունը ապահովել: Անհրաժեշտ էր ինչքան հնարավոր է շտապ կարգով Կահիրեի մեր բարեկամներին՝ նախազգուշացնել սեղի ունեցածի մասին: Այդ բանը Քեմալն իր վրա վերցրեց: Արաբներն լեզուն չիմանալը ինձ անգործության էր դատապարտում, բայց դրա փոխարեն ազատում ոստիկանության և դատական շինությունների ավելուրդ քաշքշուկներից:

Դրսում արդեն բոլորովին լուսացել էր, իսկ դատախազության աստիճանավորները դեռևս նիստ էին գումարում: Վա՛տ նախագուշակություն: Թերևս Կահիրեից կարգադրության էին սպասում, որ որոշեն, թե հիմք կա՞ արդյոք մեզ դատի տալու Նուր էդ-Դինը հատակի վրա փռված քնկ էր. նրա շրթերին խաղում էր մի ժպիտ, որը նրա դեմքին տալիս էր իսկական հրեշտակային արտահայտություն:

Հարցաքննությունները վերսկսվեցին առավոտյան ժամը տասին: Այս անգամ բանտային մեր ընկերները հարցաքննությունից հետո չվերադարձան ընդհանուր խուցը: Նրանք, մեկը մյուսի հետևից անհայտացան: Ինձ և Քեմալին կանչեցին վերջում, ինձ՝ ամենավերջինը. ինձ մոտ մնացել է տանջագին հիշողություն այն մի ժամի մասին, որ ես անցկացրի մենակ:

Թարգմանիչը միշտ նույն շինությունն էր: Նա երիտասարդ

մարդու տպավորություն էր թողնում: Նրա դեմքը ամբողջապես ծածկված էր բշտիկներով, և նա անդադար շփում էր կեղտոտ ձեռքերը: Նա հայտարարեց, որ ինձ, իմ տասներեք համադորձակիցների հետ, մեղադրում են «պետություն հիմքերը քայքայելու ձգտող գործողությունների» մեջ:

— Դա հանցագործություն է, — ավելացրեց նա:

Նրա դեմքի վրա կարդացվում էր ամենամեծ ուրախությունը. հավանաբար, այդ երիտասարդ շինովնիկին դեռևս երբեք առիթ չէր եղել քննելու այդքան հետաքրքիր մի գործ:

Դրան հաջորդող հարցաքննությունը՝ թշնամու հետ առաջին հանդիպումը, շարունակվեց ընդամենը մի ժամ: Այժմ արդեն խոսքը բամբակենու ծաղկին չէր վերաբերում. հավանաբար Կահիրեի իշխանությունները գտել էին, որ Ֆարիսկուրի դատական շինովնիկներն արդեն շատ հեռու են գնացել «կուլտուրական» քրտեսություն պատմության օգնությունը գավառական անհայտությունից դուրս գալու իրենց ջանասիրության ու ցանկության մեջ: Այդ պատճառով մեղադրանքը այժմվանից կառուցվում էր հետևյալի վրա. «Հանուն խաղաղության պաշտպանության» ժողովարի վկայականը դա մի ցուցակ է այն հարցերի, որոնք հետաքրքրում են արտասահմանին. ժողովարիստությունը՝ դա միայն «քող» է. ինձ Կոմիսիոնըն է այստեղ ուղարկել՝ նգրիպտոսում անկարգություններ առաջացնելու նպատակով. ես հանցանքի մեջ եմ բռնվել այն պահին, երբ պատրաստվել եմ հրահանգներ տալ կոմունիստների մի խմբի. իմ ծոցատետրում եղել է ցուցակը այն քաղաքական գործիչների և հողային խոշոր սեփականատերերի, որոնց ոչնչացնելու հրաման եմ ունեցել ես:

Հարցաքննությունը առանց խոչընդոտների չէր կատարվում: Թարգմանիչը միանգամայն միջակ գիտեր ֆրանսերեն և ամեն խոսքին սայթաբում էր: Ես առավելագույն չկամություն էի ցուցաբերում հեռաքննությանն օգնելու գործում, սահմանափակվելով խոսափանքներով և նույնիսկ պրոֆեսիոնալ կարգի բացատրությունների օգնությամբ ամեն կերպ հրաժարվելով մասնակցություն ցույց տալու այն անհեթեթ

լուսից, որի մեջ ուզում էին ինձ քաշ տալ. «Ես չեմ հասկանում, թե դուք ի՞նչ եք ուզում ասել» — պատասխանում էի ես ամենից հաճախ:

Երիտասարդ շինովնիկը, վերջապես, ժպտաց իր կուրգաներին և, հասկացողի տեսքով ինձ աչքով անելով, ասաց.

— Ես շատ լավ գիտեմ, թե ձեզ ձեռնտու է, որ մենք հավատալիք, թե իբր դուք արաբերեն չգիտեք: Բայց դուք պետք է, որ հասկանաք, թե ինչքան էլ դուք կայուն մնաք, մենք վերջ ի վերջո կհարկադրենք ձեզ խոստովանել սուտը: Այսպես ուրեմն, եկե՛ք սիրալիք համաձայնություն կնքենք. մենք ընդունում ենք, որ դուք արաբերեն վատ եք խոսում, դուք էլ ընդունեցեք, որ հիանալի հասկանում եք արաբերեն: Ես ձեզ հարցեր կտամ արաբերեն, իսկ դուք կպատասխանեք ֆրանսերեն...

Եվ նա անցավ արաբերեն լեզվին:

Նախորդ բոլոր մեղադրանքները աչքի էին ընկնում ակնհայտ անբարեխղճությունը: Բայց համոզել հակառակորդին այն բանում, որ նա անբարեխիղճ է, անհնար է: Այդ պատճառով, եթե հարցի քննարկումը այնուամենայնիվ շարունակվում է, իսկ դատավորների առաջ կանգնած մեղադրյալը չի կարող դադարեցնել հարցաքննությունը, — ապա հարկավոր է միայն ջանադրությամբ հետևել, որպեսզի շասես մի այնպիսի բան, որը կարողանար հակառակորդին նյութ տալ նրա անբարեխիղճ հերքուրանքների համար:

Սակայն նոր մեղադրանքը փոքր ինչ այլ կարգի էր: Թերես այդ մարդիկ պարզապես ուզում էին մի ավելորդ անգամ ստուգել՝ խոսո՞ւմ եմ ես արաբերեն, թե ոչ: Կամ գուցե, նրանք ունեին ինձ անհայտ հիմքեր՝ կարծելու, որ ես արաբերեն հասկանում եմ: Հենց նրանց ձեռնարկած ստուգման փաստը ապացուցում էր, որ նրանք պատճառներ ունեին ենթադրելու, որ իբր ես գիտեմ այդ լեզուն: Այլապես հանուն ինչի՞ էին նրանք ժամանակ կորցնում ստուգման համար: Բայց ինչպե՞ս ապացուցել, որ ես արաբերեն չեմ հասկանում: Եթե նրանք ունեն այնպիսի հիմքեր, որը նրանց բա-

վականին ծանրակշիռ է թվում ենթադրելու, թե ես արաբե-
րեն գիտեմ,— ինչքան էլ ես ջանալի իմ ամբողջ տեսքով
ապացուցեի, թե ես չեմ հասկանում՝ ինչի մասին են նրանք
խոսում, դա միայն նրանց համոզելու էր այն բանում, որ
ես «շատ կայուն» եմ, ինչպես ասաց երիտասարդ չինով-
նիկը:

Մինչ այդ գրությունը գզվելի էր: Այժմ այն դառնում էր
անհեթեթ: Ավելի անհեթեթ ու անճոռնի բան չես կարող
հնարել. ձեռքի ոչ մի շարժում չես կարող անել, որովհետև
ամեն մի շարժում կարող է մեկնաբանվել որպես ռեակցիա
այն բանի, ինչ ինձ ասում են, որը, սակայն, չիմ հասկա-
նում, և անհեթեթ քննությունը շարունակվելու է անվերջ:
Այդ պատճառով ես աշխատում էի շարժվել:

Երիտասարդ չինովնիկը, շարունակ աչքով անելով,
սկսեց ինձ հետ արաբերեն խոսել: Ժամանակ առ ժամանակ
նա դեմքը շուտ էր տալիս իր կուլեղաներին, կարծես նրանց
վկա էր կանչում: Բոլորի հայացքները ինձ վրա էին մեխվել:
Բավական ժողովուրդ կար՝ մի քսան դատական չինովնիկ-
ներ ու քաղաքացիական զգեստով ոստիկաններ:

Իմ հետևում նստած երկու ոստիկանները իրենց հերթին
սկսեցին ինչ-որ բանի մասին ինձ հարցնելու արաբերեն:
Գեր զնդապետը իր լեզվով ինչ-որ բան բղավեց ինձ: Բոլորը
հռհռացին: Անգլիական կապույտ կարարդիներից կարված
կոստյումով և շատ էլեգանտ տեսք ունեցող դատախազը
միայն ժպտաց,— նա հուզված տեսք ուներ:

Երկու ուրիշ ոստիկաններ մտեցան և նստեցին իմ
առջև՝ իմ աթոռի և այն սեղանի միջև, որի մոտ դատական
չինովնիկներն էին բազմել,— և սկսեցին արաբերենով խո-
սակցել իմ հետևում նստած երկու ոստիկանների հետ:
Թվում էր, թե նրանց խոսակցությանը վերջ չի լինելու: Ժամա-
նակ առ ժամանակ ինչ-որ մի խոսք ծիծաղ էր առաջացնում
բոլոր ներկաների մեջ. զնդապետը կշկչաց. նա շնչասպառ
էր լինում, և նրան մի բաժակ ջուր բերին:

Նա առաջվա նման նստել էի անշարժ, որովհետև ոչինչ
չէի հասկանում: Այդ վիճակը ինձ հիշեցրեց վաղուց անցած

օրերը, երբ մի խանդոտ կին ինձ համար «տեսարաններ»
սարքեց միանգամայն տրամաբանական հիմունքներով և,
թվում էր, դեպքերի ամբողջ ընթացքով ապացուցված եզրա-
կացություններով, որ նա անում էր ելնելով միանգամայն
սխալ, բայց, ընդհանրապես ասած, հնարավոր ենթադրու-
թյուններից: Եվ ահա ես նորից ընկել էի հենց այդպիսի ան-
հեթեթ դրության մեջ և նորից իմ առաջնագույն մտահոգու-
թյունն էր զսպել իմ կրծքի տակ ինչ-որ խոր տեղ ծնվող և,
եւթ չգտնելով, ինձ խեղդող անուժ ցատումը: Կատաղությունը,
որն առաջանում է ամեն տեսակի անհեթեթությունից, վեր-
ջին հաշվով, կարող է խեղդել մարդուն: Եվ, ինչպես այդ ժա-
մանակ, ես ամեն ջանք թափեցի, որպեսզի ընդմիջումներով
չշնչեմ և բռունցքներս չսեղմեմ:

Յուրաքանչյուր սեպտիկային ոստիկանների ծիծաղը
դառնում էր ավելի բարձրաձայն, ավելի լպիրշ. ժամանակ
առ ժամանակ գեր զնդապետը մի խոսք էր գցում, և ներկա-
ները թուլանում էին հռհռալուց:

Վերջապես, ոստիկանները, ետանդով համակվելով և
որոշելով ինչ գնով ուզում է լինի հարկադրել ինձ, որ ան-
տարբեր չլինեմ կատարվածի հանդեպ և դուրս գամ լուսնա-
նից ու անշարժությունից, սկսեցին իրենց խոսքերը լրացնել
շարժումներով: Խոսակցելիս, նրանք այնպես էին ցույց տա-
լիս, որ իբր մեկին կապկպում են, ուրոտում ձեռները, կոխո-
տում, խեղում, խեղդում, դեն են շարտում, վերածում են հա-
վերի կերի, ամենամանր կտորների, որոնք հետո շարտվում
են տարբեր կողմեր, այնպես որ հետք անգամ չմնա: Բոլորի
հայացքները ինձ վրա էին մեխված:

Իսկ ես անզաղար նայում էի դատախազին, որի դեմքը
րոպե առ րոպե դառնում էր ավելի ու ավելի շփոթված: Վեր-
ջապես, նա ոտքի կանգնեց և մնացածներին նշան արեց
հետևել իրեն, դրանով վերջ դնելով լեզվագիտական քննու-
թյանը, որը շարունակվեց այնքան, որքան հարցաքննությու-
նը, այսինքն՝ մի ամբողջ ժամ:

Նա նիստերի դահլիճում մնացի ուղմական ոստիկա-
նության գինվորի հսկողության տակ: Նա ինձ ժպտաց բար-

յայտկամութեամբ, հետո ձեռներով դանդաղ մի շարժում արեց, որ ես մեկնարանեցի որպէս ճակատագրին հնազանդ-վելու հրովեր:

Շուտով եկան երկու այլ զինվորներ՝ բերելով ձեռնաշղթաներ, որ հաղցրին իմ ձեռքերին:

Քարշայակամ զինվորը սկսեց մատը ցցել ձեռնաշղթաների ապարանջանների վրա՝ համառորեն իմ ուշադրութեանը հրովիրելով նրա վրա փորագրված «Made in England» [«Պատրաստված է Անգլիայում»] — Խմբ.] մակագրութեանը: Հետո նա ցավակցաբար շարժեց գլուխը և ձեռքի ափով թեթևակի խփեց իմ ուսին, ինչպէս ձիուն են խփում, — անշուշտ, քաջալերելու համար:

Երկու այլ զինվորներ ինձ դեպի դուռը հրելով բազ տարան, որտեղ ես տեսա կալանավորութեան իմ ընկերներին մեծ մասին, որոնք կանգնած էին բեռնատար ավտոմոբիլների թափքի մեջ: Ես նրանց ողջունեցի, գլխից վերև բարձրացնելով շղթայված ձեռքերս: Նրանք ինձ պատասխանեցին միեռնուցն ձևով:

— Արիացի՛ր, Ռոժե՛, — բացազանչեց Քեմալը, — մեզ Կահիրե են տանում:

Գ. ԱՆԻՆ ԱՆԹՈՆԻՐՈՒԿ

ԳԻՇՆԵՐԱՅԻՆ ՌԻՐՎԱԿԱՆՆԵՐԸ

Ինձ տարան ոչ թե բեռնատար մեքենայի մոտ, որի վրա ուսուսի տված կանգնած էր կալանավորութեան իմ ընկերների մեծ մասը, այլ մի պիկապի մոտ, որի վրա էլ ես բարձրացա մեզ հետ միաժամանակ կալանավորված երկու ֆելլահների հետ:

Այդտեղ ինձ շղթայեցին խաշաձև՝ իմ աջ ձեռքը կապեցին իմ ձախ կողմը նստած զինվորի աջ ձեռքին, իսկ ձախը՝ աջ կողմում նստած զինվորի ձախ ձեռքին: Պիկապի հակադիր նստարանի վրա, այնքան մոտ, որ մեր ծնկները իրար էին կպչում, նստել էին երկու ֆելլահներ, որոնք նույն ձևով շղթայված էին նրանց ուղեկցող երեք զինվորների հետ, այնպէս որ բոլոր հինգ հոգին միասին էին շղթայված, ճիշտ նույն այն ձևով, ինչպէս մենք երեքս՝ ես ու ինձ ուղեկցող երկու զինվորներն էինք շղթայված: Առաջակողմի նստոցի վրա, շոֆերի հետ միասին, նստել էր սատիկանական լեյտենանտը:

Բեռնատար մեքենան, որի վրա իրենց ուղեկցորդներին կապտոված իմ ընկերներն էին, ճանապարհ ընկավ առաջից: Պիկապը՝ նրա հետևից: Մեր հետևից գալիս էր ամբրիկյան մի մեծ ավտոմոբիլ, որտեղ բազմել էին շաղ գնդապետը և երկու այլ սպաներ: Այդ ավտոմոբիլը մեզ ուղեկցեց միայն մինչև Ֆարիսկուրի իրավասութեանը ենթակա դատական օկուզի սահմանը:

Ոստիկանական զորանոցների առաջ հավաքվել էին հի-

սուսի շափ Ֆելլաճներ: Այդ բազմութիւնը կանգնել էր մեր ճանապարհի վրա, և մեքենաները հարկազրկած էին դանդաղեցնել ընթացքը: Այդ ժամանակ բեռնատարով գնացող կալանավորութեան իմ ընկերները իրենց կոկորդաշին լեզվով սկսեցին ինչ-որ վանկաչափ ձայներ արձակել. ես եզրակացրի, որ զրանք պետք է լինեն այն նույն լողունները, որ նրանք գոչում էին մեր ձերբակալութեան պահին: Զորանոցների պատերի մոտ խմբված Ֆելլաճները ծափահարում էին: Բեռնատար մեքենայի վրայի իմ ընկերները սկսեցին գոչել է՛լ ավելի բարձրաձայն՝ միահամուռ ու ներզաշնակ: Նրանք լողուններ էին բացազանշում, զրանց մեջ գնելով իրենց ողջ հոգին: Այդ ընդհանուր խմբական ձայների միջից առանձնապէս ջոկվում էր դատապաշտպանի ցածր ձայնը: Ֆելլաճները ծափահարում էին է՛լ ավելի ուժեղ: Ես արտասուելու շափ հուզվեցի:

Այնուհետև սկսվեց ամբողջ շորս ժամ տևող ճանապարհորդութիւնը: Պիկապը գնում էր բեռնատարի հետևից, որը փոշու ամպեր էր բարձրացնում: Ապակեպատ կաբինում նստած շոֆերն ու ոստիկանական սպան համեմատաբար պաշտպանված էին այդ փորձանքից, իսկ Ֆելլաճները, մեր պահակներն ու ես շուտով գլխից մինչև ոտները ծածկվեցինք դարչնագույն փոշու թանձր շերտով. այդ փոշին գոյանում է այն տղմից, որը Նեղոսի վարարումից հետո մնում է դաշտերի վրա, իսկ երբ դուրը շինում է նրա միջի ջուրը, ապա նա շորանում և տրոհվում է ամենամանր մասնիկների: Շուտով մենք մեծ դժվարութեամբ էինք կարողանում բացել մեր աչքերը, իսկ մեր շրթները կարծես սոսնձվում էին դառնահամ ցեմենտով:

Ճանապարհի ընթացքում մեր «քարավանը» մի քանի անգամ կանգ առավ փոքր գյուղերում՝ շրջիկ առևտրականների արկղների առջև, առևտրականներ, որոնք Նզիպտոսով մեկ վաճառում են մրգեր և զովացուցիչ ըմպելիքներ: Մպաները մեքենաներից իջնում էին մի-մի բաժակ կոկա-կոլա խմելու: Եվ ամեն անգամ, չգիտես որտեղից, իսկույն հայտնվում էին կանայք ու երեխաներ և փայտե ամանների մեջ

լցված թարմ ջուր էին տալիս կալանավորներին և պահակախմբին: Եվ հենց որ ավարտում էին մեր ծարավը հագեցնելը, սկսում էին հարցուփորձ անել: Նրանք շղթայված մարդկանց կարեկցում էին պարզապէս այն բանի համար, որ այդ մարդիկ շղթայված են: Հասարակ մարդկանց կարեկցութիւնը իմ ձերբակալութիւնների ամբողջ ընթացքում խորապէս հուզել է ինձ: Նզիպտոսում կալանավորները սարսափ չեն առաջացնում. նույնիսկ քրեական հանցագործները ո՛չ քամահրանք են ներշնչում, ո՛չ երկյուղ: Մարդիկ հենց սկզբից նրանց համարում են իշխանութեան զոհեր, որոնք նույն շափով կարեկցութեան և օգնութեան են արժանի, ինչպէս ուղեկցորդ պահակը, որ հանցագործի հետ միևնույն շղթայով է կապված և երբեք (ինչքան որ ես կարողացա նկատել) նրան ձեռ չի առնում, այլ, ընդհակառակը, ինքն է համբերութեամբ տանում սպանների ամեն տեսակ ծաղրը, — մի խոսքով, նույնպիսի մերժված, լքված մի անձ է, ինչպէս Նզիպտոսի բոլոր հասարակ մարդիկ: Այսպէս, ջրով լի փայտե ամանը նախ հանցագործին են տալիս, ապա նոր ուղեկցորդ պահակին: Շղթաների բազմահնչուն զնգոցը այդ տեսարանը ուղեկցում է հնչունների բարդ ձևավորումով:

Այդպիսի կանգառումներից մեկի ժամանակ ինչ-որ մարդ մոտեցավ ինձ և երկարեց սիգարետի մի տուփ: Բացատրութեան փոխարեն նա ձեռքի շարժումով ցույց տվեց բեռնատար մեքենան և ասաց՝ «Բեմալը»: Նշանակում է ընկերս առաջվա նման հող է տանում իմ մասին: Նա նույնիսկ, շնայած շղթաներին, կարողացել է մարդիկ գտնել, որոնք իր հանձնարարութիւններն են կատարում և նրան փող են փոխանցում:

Երբ ես իմ ծարավը հագեցրի, կանայք սկսեցին ինձ հարցուփորձ անել: Հստ երևույթին, նրանց ամենից շատ հետաքրքրում էր այն, որ ես օտարերկրացի եմ, իսկ դա պարզ էր, շնայած ինձ ծածկող փոշու շերտին: Կալանավորութեան իմ ընկերները իմ փոխարեն պատասխանում էին: Ես որսացի «Փրանսավի» և «կոմունիստի» բառերը: Լսելով այդ, կանայք, ջերմ կարեկցանքից մղված, իրենց ձեռքերը

վեր բարձրացրին: Այնուհետև նրանք շնչալով ինձ մի քանի լիքուշ բառեր ասացին, որ ես չհասկացա, բայց նրանց ձայնի մեջ համարյա մայրական դուրգուրանք էր նկատվում:

Քիմալի սիգարետներն ու կանանց կարեկցական շշուկները արտասվելու շափ ինձ հուզեցին: Բայց հանկարծ արյունը խփեց իմ դեմքին, և իմ փոշոտած թարթիչների տակից նետած հայացքի մեջ կատաղություն բռնկեց. մեր հետևում, երկաթուղային արգելազօծի մոտ կանգ առավ մի ավտոմեքենա՝ պակկարտ: Նրա տերը իր դեռատի ուղեկցուհուն մատով ինձ էր ցույց առլիս, և երկուսով քրքշուկ էին: Արժե՞ր միթե ամբողջ հարցաքննության ընթացքում ինձ խեղդող կատաղությունը գսպել կարողանալ և համբերությունից դուրս գալ այդպիսի շնչին բանի համար:

Գիշերն արդեն վաղուց էր իջել երկրի վրա, երբ մենք մտանք Կահիրեի արվարձանը: Եվ այն ժամանակ, խլացնելով մոտորների դղրդյունը, հնչեցին կոկորդային, խմբական բարձր ձայներ: Կալանավորության իմ ընկերները որոշեցին կրկնել Ֆարիսկուրի փորձը: Նրանք հերթով մարտական լողունգներ արձակեցին, որոնք այնուհետև վանկաշափով կրկնում էին բոլոր մյուսները: Մեր ուղեկցորդ պահակները նրանց լսեցնելու փորձ անգամ չէին անում: Անցորդները կանգ էին առնում և հայացքով ուղեկցում մեզ: Ոմանք ծափահարում էին: Այդպես շարունակվեց ամբողջ ճանապարհի ընթացքում, քանի մենք գնում էինք Շուբրա-խեյմի և Շուբրայի բանվորական արվարձանով, իսկ այնուհետև ողջ Կահիրեով՝ կայարանի հրապարակից, առևտրական թաղամասերի միջով և մինչև մունիցիպալիտետի Պալատը (Կահիրեում դա նույնն է, ինչ որ ոստիկանական պրեֆեկտուրան Փարիզում):

Բակի լուսության մեջ իմ ընկերներն սկսեցին է՛լ ավելի բարձր և միահամուռ, քան մինչ այդ, խմբովին լողունգներ գոչել: Իսկույն ամեն կողմերից դուրս պրծան ոստիկաններ՝ ոմանք համազգեստով, ուրիշները փաղաքացիական զգեստով: Նախազգուշության նպատակով որոշ հեռավորություն պահելով, նրանք մեզ շրջապատեցին: Իրենց սկանչներին

չհավատալով, նրանք թոթվում էին ուսերը և գլուխները տալուբերում: Մեզ վրա ուղեցին ավտոմոբիլների լապտերների լույսերը: Քիչ ավելի հեռուն կանգնել և խորհուրդ էին անում մի խումբ բարձրաստիճան մարդիկ: Շտապ կարգով լրատարներին ինչ-որ տեղ ուղարկեցին: Սպասումը ձգձգվում էր: Իմ ընկերները լսել էին, որոշելով կարճ դադար տալ այնուհետև նոր ուժով հնչեց նրանց խմբերգը, որը պայթալելու կամքի վկայությունն էր:

Վերջապես մեզ հրամայեցին մեքենաներից ցած իջնել և բաժանեցին մի քանի խմբերի: Այժմ մեզ շղթայում էին այլ կերպ, գույգ-գույգ: Ես ընկա դատապաշտպանի զույգի մեջ: Այնուհետև եկավ մի բեռնատար մեքենա և Քիմալին տարավ Ֆելլահներից մեկի հետ շղթայված. նրանց ուղեկցում էին ավտոմատ-ատրճանակներով զինված շորս զինվորներ: Տեսնելով այդ, իմ սիրտը սեղմվում էր: Բեռնատար մի այլ մեքենա տարավ Նուր էդ-Դինին և պատմության դասատուին: Ինձ ու դատապաշտպանին նույնպես մի առանձին բեռնատար մեքենա տվին, որը մեզ տարավ Կահիրեի արվարձաններից մեկի ոստիկանական տեղամասը: Դժվար չէր հասկանալ, որ նոր ցույցերից խուսափելու համար որոշել էին մեզ բաժանել տարբեր բանտերի և ոստիկանական տեղամասերի վրա:

Ես միայն հարեանցի կարողացա դիտել այն շենքը, ուր մեզ տարան. ինձ այնպես թվաց, թե նա կանգնած է խղճուկ անակների շրջապատում: Ինչ-որ դռներ բացվեցին և նորից փակվեցին: Մեզ հրեցին անլուսամուտ մի շինություն մեջ, ուր մտրակը ձեռքին ման էր գալիս ոտին սանդալներ հագած և շատ տարօրինակ հագուստով ինչ-որ մի մարդ. նրա կոստյումը նման էր ծովայինի համազգեստին, միայն առանց օձիքի: Ներքևից լսվում էր անորոշ աղմուկ, ինչ-որ մեկը խոսուտ ձայնով հրամաններ էր տալիս և դրանից հետո կարծես թե լսվեց դանդաղ հեռացող բաղմունքի զուգույն: Այն շենքը, որտեղ մենք գտնվում էինք, կարող էր լինել և քաղնիքներին կից եղող մի հանդերձարան, և Մարկիդ դը Սադի ամբոցի մի նախազավիթ, իսկ պահապանը՝

թի՛ մասամբիս, թե՛ դահիճ: Մենք սպասեցինք երկար: Ահա ներքինից մեզ է հասնում օդը շաշտունով կտրատող մտրակի ձայնը, հետո հառաչանքներ, հետո նորից ձայներ, որ նման էին քայլող բազմության դոփշունին:

Անցավ անսահման երկար ժամանակ: Վերջապես մեզ հարկադրեցին իջնել ինչ-որ սանդուղքով, շղթաները հանեցին, և ահա ես հայտնվեցի մի շինության մեջ, որն ինձ սկզբում աշտարակ թվաց:

Դա մի քառակուսի բավական ընդարձակ՝ վեց մետր լայնքով, վեց մետր երկայնքով, բայց շատ բարձր, ութ կամ նույնիսկ տասը մետր բարձրությամբ մի սենյակ էր: Վերևում սրահն էր, որտեղ ոչ մի անգամ ոչ մի մարդ չտեսա, իսկ առաստաղի անմիջապես տակը, անկյունում, կախված էր մի հսկայական էլեկտրական լամպ: Հատակը, պատերը և առաստաղը ցեմենտից էին: Պատերի վրա՝ հատակից մինչև մարդու հասակի բարձրությամբ, դարչնագույն բծեր կային. ես միանգամից գլխի շրնկա, որ դրանք հետքերն էին արյուն ծծած փայտաղբիւրների, որոնց ճզմել էին ինձնից առաջ այստեղ նստած կալանավորները:

Ոչ մի կահույք՝ ընդհանրապես ոչ մի բան, եթե չհաշվենք դարչնահոտ ունիտազի վրայի ջրատար խողովակի ծորակը: Փայտե դռան մեջ՝ մի կլոր աչք:

Այդ աչքի միջից ես տեսա ոստիկանական մի գինվորի, որք, կարաբիներ ծնկներին դրած, ննջում էր աթոռակի վրա: Ես թակեցի դուռը: Զինվորը դուռը բացեց և իր հետևից իսկույն փակեց: Նշաններով ես նրան հասկացրի, որ խմել եմ ուզում: Նա ինձ ցույց տվեց ունիտազի վրայի ծորակը: Ես խնդրեցի ինձ մի վերմակ տալ. ինձ թվաց, թե նա չի առարկում և ինձ վերմակ կբերի:

Շուտով դուռը նորից բացվեց, բայց այս անգամ խուցը մտավ քաղաքացիական շորերով մի մարդ, — արդարև, ես կարողացա նկատել, որ միջանցքում մնացին նրան ուղեկցող մի քանի ոստիկաններ: Նա եվրոպական կոստյումով էր, որը մինչև իսկ կարելի էր էլեգանտ համարել, և ֆետով:

Նրա մազերը հարթ էին սանրված, և ձեռները խնամքով

պահված: Նա անբասիր ճշտությամբ անգլերեն էր խոսում:

— Ա՛հ, մոտո՛,— ասաց նա, — ինչքա՛ն տարօրինակ է նման վայրում տեսնել այսպիսի ջենտլմենի:

— Ո՞վ եք դուք:

— Բանտերի գլխավոր տեսուչը: Ես եկա պարզելու, թե արդյոք դուք որևէ բանի կարիք չունե՞ք:

— Ես բացարձակապես ամեն ինչի կարիք ունեմ՝ մահաճակալի, անկողնի, սիգարետի, խմելու, ուտելու և ամենից առաջ ազատության, որին ես լիակատար իրավունք ունեմ:

— Ես կհրամայեմ ձեզ համար բերել այն ամենը, ինչ սահմանված է բանտային կանոններով:

— Ամենից առաջ՝ մի մահաճակալ: Ես չեմ կարող պառկել այս ապականության վրա...

Ցեմենտե հատակը լպրծուն ցեխի շերտով էր ծածկված:

— Այո՛, իհարկե: Բայց նախ բացատրեցեք, թե ի՞նչ է պատահել ձեզ հետ: Անշուշտ, անձնագիրը կարգին չէ...

— Իմ անձնագիրը միանգամայն կարգին է: Իսկ ինչ վերաբերում է ինձ հետ պատահածին, ես կպատմեմ դատավորներին:

— Հասկանալի է, հասկանալի է. ինչ-որ քաղաքական բան կա: Ավելի լավ է անկեղծորեն ինձ պատմեք ամեն ինչի մասին: Ես կմտածեմ, թե ինչով կարելի է ձեզ օգնել: Այս գարշելի ծակը ձեր տեղը չէ:

— Ես էլ եմ այդպես կարծում: Այդ պատճառով էլ ես ձեզ խնդրում եմ կարգադրել, որ ինձ մի մահաճակալ բերեն: Իսկ ինչ իմ գործին է վերաբերում, այժմ արդեն ամեն ինչ դատավորների ձեռքին է:

— Դուք սխալվում եք: Քաղաքական ոստիկանության մեջ ես բարեկամներ ունեմ...

— Չեմ կասկածում...

Կրտեսը, տեսնելով, որ իրեն ճանաչեցին, այդ բանում ես իմ ոչ մի արժանիքը չեմ տեսնում, այլևս չհամառոտեցի: Նա դուրս եկավ, խոստանալով մահաճակալը ուղարկել, որն ինձ այդպես էլ չբերին: Պահակ կանգնած գինվորը այլևս չէր պատասխանում դռանն արած իմ թակոցին:

Ես փովեցի հատակի վրա, աչնտեղ, ուր ավելի քիչ էր ցիխոս, դլխիս տակ դնելով կրկնակի ծալած իմ պիջակը: Փայտոջիլնեքը իրենց երկար սպասեցնել շավին և ինձ վրա հարձակում գործեցին: Դրանցից մի քանի հատին ճգմեցի իմ վզի ու բարձի վրա: Ամենաարտառոց ձայներ էին հասնում ինձ. ինչ-որ մեկի ոտնաձայն, ինչ-որ տեղ ինչ-որ բան էր ճոճոտում, ինչ-որ իրեր էին վերուղի արվում, ինչ-որ մեկը ինչ-որ մեկին էր կանչում, ինչ-որ տեղ իրար հետ խոսում էին և նույնիսկ, ինձ թվաց, ընտանեկան կյանքի ձայներ լսեցի. կաթսան ընկավ, մահճակալը ճռնչաց, մանկական ձիչ լավեց, բայց, գուցե, դա ինձ թվում էր: Ես մտածեցի, որ պատի աչն կողմում, դռան դիմաց, անպատճառ մի բուլկեգործ է ապրում: Դա, ակներևաբար, խղճով մի բուլկեգործ էր, որ ապաստանել էր կիսանկուղում: Նրա ամբողջ ընտանիքը վառարանի շուրջն էր հավաքվել. նրանից բարկ տաքություն է ժայթքում, և երեխան դրանից քնել չի կարողանում, իսկ անհասկանալի ձայները, անշուշտ, խմորախառնիչն է առաջացնում:

Փայտոջիլնեքը հավաքվեցին իմ շապկի տակ: Ես սկսեցի նրանց ճգմել այնքան ժամանակ մինչև հողմությունից թուլացա և քնեցի:

Ես զարթնեցի մի աղաղակից և օդը շաշյունով կտրատող մտրակի ձայնից: Նորից աղաղակ: Ճշում էր երեխան: Մարդու ձայնը հաշվում էր. համենայն դեպս, ինձ այնպես էր թվում, թե նա հաշվում է: Մտրակը շաշեց, երեխան բարձր ճչաց ու ցավից ոռնաց: Տասը հարված: Այժմ արդեն երեխան միայն լաց էր լինում: Այդ ձայները գալիս էին այն պատի միջից, որի հետևում, ինչպես ես էի ենթադրում քնաթաթախ վիճակում, ապրում էր բուլկեգործը: Ես մոտեցա դռան աչքին, ոստիկանական զինվորը նիրհում էր աթոռակի վրա: Այդ կողմից ոչ մի ձայն չէր լսվում: Խցում նստեցնելուց առաջ ինձնից վերցրին ժամացույցս, և այժմ ես գաղափար չունեի, թե որ ժամն է և թե ընդհանրապես այժմ գիշեր է, թե ցերեկ:

Ես նորից փովեցի հատակի վրա և փորձ արի համոզել ինձ, որ իմ բոլոր լսածները ոչ մի կապ չունեն ոստիկանական տեղամասի կյանքի հետ. դա պարզապես բուլկեգործն էր պատժում իր աշակերտին կամ մի ինչ-որ նման կարգի բան: Այդտեղ ես ննջեցի և տարօրինակ երազ տեսա: Ես Բյուժեի մոտի մի լեռան վրա էի և ծնկի էի եկել Helleborus foetidus-ի*) առաջ՝ մի բույս, որը սև եղջերախոտի (черешица) վայրի քույրն է, փթթում է ծննդյան տոներին, որի ցողունները դեռևս ձյան տակն են ծաղիկներով պատվում, քանի որ օգոստոսին միայն սկսում են բացվել, իր վառ գույնով խստորեն առանձնանալով թառամած կանաչի մուգ ֆոնի վրա: Եվ միաժամանակ ես «Սեմիրամիս» հյուրանոցի իմ համարումն էի և խորհում էի եգիպտոսի դեպքերի մասին: Բայց երկու դեպքերում էլ միևնույն պրոբլեմն էր կանգնած իմ առաջ. ես պետք էր փոխվեի՝ դառնայի Helleborus foetidus-ի արմատը և, այսպես ասած, ներքուտ հետևել վերափոխության և վերակազմության այն բոլոր պրոցեսներին, որ բույսի մեջ էին տեղի ունենում: Ինձ թվում էր, թե ահա, քիչ է մնում կզանեմ պրոբլեմի լուծումը, բայց այն շարունակ խուսափում էր ինձնից: Անասելի մի տաքնույ պրոբլեմ էր համալինել ինձ. իմ հայտնագործութունից էր կախված այն գործի հաջողութունը, որին իմ կյանքն էի նվիրել, դրանից էր կախված նաև բանտից դուրս գալու հնարավորութունը... Ես անհավատալի ճիգ գործ դրի և նորից փորձեցի դառնալ սև եղջերախոտի արմատ, բայց այստեղ ծայր առան ամեն տեսակի նոր վախեր ու կողմարներ, նման նրանց, որ ծվատում էին ինձ, երբ ես դեռ երեխա էի և երպիս մեջ դառնում էի ինձ ծանոթ մեկ այս, մեկ այն առարկան՝ սևղան, զորդ, տաք վերմակ: Առանձնապես սարսափելի էր վերմակ դառնալը. ես զարթնում էի բարձր գոռոցով, շնչահեղձ լինելով փետուրե անկողնի մեջ:

*) Helleborus կամ ellebore — մրախուկ կամ եղջերախոտ — կրկարակայ, բազմաթիվ ոստեր ունեցող բույս: Հնում հարգի է եղել իր բուժական հատկութունների համար: Մ. հայ. ք.:

Այս անգամ ես գարթնեցի բանալիի ձայնից, բանալի, որը ձոնչում էր կողպեքի մեջ պատվելիս: Խցից ներս հրեցին գալարի հագած մի երիտասարդի, որն իսկույն փովեց իմ կողքին: Ես նրան նայեցի կիսաբաց կողքերի տակից:

— Ես գիտեմ, որ դուք ժողովրդի բարեկամ եք (I know you are a friend of people),— ասաց նա ինձ վատ անդերհնով:

Ես չպատասխանեցի և շարունակեցի լուռ գննել նրան:

— Ես նույնպես,— շարունակեց նա,— ժողովրդի բարեկամ եմ:

«Ժողովրդի բարեկամն» ուներ բշտիկներով ծածկված դեմք և գծուծ, խորամանկ հայացք:

— Անպե՛տք, զիբի՛ւ,— պատասխանեցի ես:

Ինչպես երևում է, չհասկանալով, նա շարունակեց.

— Եթե ուզում եք, ես կարող եմ ժողովրդի բարեկամներին հաղորդել ինչ-որ հարկավոր է:

— Զիբի՛ւ,— կրկնեցի ես և դեմքս շուտ տվի նրանից:

«Ժողովրդի բարեկամը» ոտքի ելավ ու նստեց ունիտագի վրա: Հետո նա նորից փովեց իմ կողքին և մի րոպե անց սկսեց ինձ ինչ-որ բաներ պատմել իր մասին, բայց նա այնքան վատ էր անգլերեն խոսում, որ ես ոչինչ չհասկացա: Իսկ ես շարունակ կրկնում էի. «Անպե՛տք, զիբի՛ւ, զիբի՛ւ»: Իմ բառարանի աղքատությունը, վերջապես, խարդավանեց նրան:

— Հիվա՛նդ եք,— հարցրեց նա:

— Զիբի՛ւ,— գոռացի ես, սիրտ պատռող ձայնով:

Նա գուռը թակեց և արաբերենով ինչ-որ բան ասաց մոտեցող ոստիկանին, որը ցավակցաբար նայեց ինձ: Նրանք միասին դուրս եկան, և ես նորից մնացի մենակ:

«Ժողովրդի բարեկամը» այդ գիշերվա վերջին ուրվականն էր: Նրա մեկնելուց անմիջապես հետո եկան ինձ տանելու: Նորից ինձ շղթայեցին դատապաշտպանի հետ և տարան դատարանի շենքը: Արեգակն ու առավոտյան թարմ օդը ցրեցին գիշերային մղձավանջը: Միջանցքներից մեկում մենք

հանդիպեցինք Քեմալին և, ի նշան ողջույնի, գլխից վեր բարձրացրինք մեր շղթայված ձեռքերը:

Քաղաքական բանտարկյալները ձեռնաշղթաներից չեն ամաշում, որովհետև նրանք ավելի շուտ միացնում են ձեռքերը, քան թե շղթայում դրանք: Եվ երբ բանտարկյալը, այլ բանտարկյալների հետ ողջույն փոխանակելիս, գլխից վեր է բարձրացնում իր շղթայակապ ձեռքերը, այդ ժեստը ոչ թե աղերսանք կամ աղոթք է նշանակում, այլ պայքարի կոչ: Այս օրերին երկրպագի կես մասում ձեռնաշղթաները արիություն սիմվոլ, ազատության համար մղվող պայքարի սիմվոլ են: Անհեթեթ ու անմիտ է այն աշխարհը, որ դեպի խուլ գլուղները կատարված ուղեորությունները վերջանում են ոստիկանական տեղամասերում. սարսափելի է այն աշխարհը, որ երջանկության ժամերը ընդհատվում են անմիտ հարցաքննություններով ու պրովոկատորների կեղտոտ զրպարտանքներով: Քաջարի է այն աշխարհը, որ շղթաները վեր են բարձրանում դրոշների նման և ուր ոչ թե հալածողների սպանալիքը, այլ շղթայակապ մարդկանց եղբայրությունն ու հալածվածների համերաշխությունն են արցունք առաջացնում մարդկանց աչքերում:

Դատաբանի միջանցքներից մեկում ես հանդիպեցի իմ բարեկամին՝ անվանի դատապաշտպան, Խաղաղության Համաշխարհային Խորհրդի անդամ Յուսուֆ Հելմիին: Ամենայն հավանականությամբ նա պատահաբար չէր ընկել այստեղ: Երկու խոսքով նա ինձ հաղորդեց, որ ահա արդեն քսանչորս ժամ է, ինչ ամբողջ աշխարհում մեր բարեկամները տեղեկացել են կատարվածի մասին և ահազանգ են բարձրացնում, և որ արդեն ստացվել են բողոքի առաջին հեռագրերը: Նրա խոսքերից ես եզրակացրի, որ Կահիրեի դատախազությունն աստիճանավորների մեջ միայն թշնամիներ չունենք: Այդ պատճառով մենք կարող ենք հույս ունենալ, որ օրվա վերջում քաղաքական բանտարկյալների սեփիմ ձեռք կրկնենք: Բայց այդ պահին ոստիկանները մեզ բաժանեցին, որովհետև, երբ երկրում ռազմական դրություն է, մեղադրյալին արգելվում է շփվել իր դատապաշտպանի հետ:

ԴԱՄՅՆՏՏԻԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Յուսուֆ Հելմին ծայրահեղ լավատես դուրս եկավ: Այն բանից հետո, երբ մենք դատարանի շենքի միջանցքներում ամբողջ առավտան սպասեցինք, որ մեզ հարցաքննության կանչեն, որն այդպես էլ տեղի չունեցավ, մեզ տարան բակ, որտեղ ուղեկցորդ պահակներից իմացանք, որ մեզ Դամյետտի են ուղարկում: հետաքննությունը այնտեղ է շարունակվելու, և այնտեղ էլ հենց մենք կկանգնենք դատարանի առաջ:

Ինչո՞ւ Դամյետտիում: Բոլոր կանոնների համաձայն հետաքննությունը պետք է տարվեր դատական օկրուգի կենտրոն էլ-Մանսուրիում, ուր մեզ ձերբակալեցին: Հետաքննությունը Կահիրե փոխադրելը գեոս մի կերպ կարող էր արգաբացվել, այնքանով որ Կահիրեն երկրի մայրաքաղաքն է: Բայց Դամյետտի ընտրությունը կարող էր բացատրվել միայն այն բանով, որ եգիպտական կառավարության մեջ մեզ թշնամաբար տրամադրված տարրերը ավելի շատ այնտեղի դատախազության ու ռազմական տրիբունալի վրա են վստահ: Իսկ էլ-Մանսուրիի դատավորները, ասաց ինձ Քեմալը, Կահիրեի կայազորի նման, ինչպես ասում են, գեմոկրատականորեն տրամադրված տարրերի ազդեցության տակ են: Այսպիսով, Կահիրեից Դամյետտի փոխադրելը պետք էր գնահատել որպես մեր հակառակորդների հաղթանակ:

Իմ ազատության հենց հաջորդ օրը ես իմացա, որ այն ժամանակ, երբ մենք Ֆարիսկուրումն էինք և երբ ոչ եգիպտական մամուլը, ոչ էլ համաշխարհային հասարակայնու-

թյունը զաղափար շուներ պատահածի մասին, ամերիկյան Ասոշիեյտեդ Պրես գործակալության Կահիրեի թղթակիցը արդեն գործակալության Նյու-Յորքի բաժանմունքից ստացել էր հեռեկալ հեռագիրը:

«Մեր տեղեկությունների համաձայն «Գնդապետ Ֆուտերը իրեն մեղավոր է նանաչում»՝ հակաամերիկյան պիեսի հեղինակ Ռոմե Վայանը ձերբակալված է եգիպտոսում վերջակետ Ուլարկեցեֆ հողված եգիպտոսում Վայանի քաղաքական գործունեության և եգիպտոսի Կոմունիստական պարտիայի գործունեության մասին»:

Ֆրանսիա վերադառնալիս ես իմացա, որ նույն այն օրը, երբ մեզ Կահիրեից Դամյետտի էին տանում, փարիզյան երկու թերթեր՝ «Օրոս»-ը և «Մը Մատեն»-ը Ռոբեր Բոնիի և A. X.-ի ստորագրությամբ հրատարակել են հոդվածներ, որտեղ ինձ անվանել են կոմունիստական ագիտատոր և շնորհավորել են եգիպտական կառավարությանը՝ մեծ հաջողության՝ իմ ձերբակալության առթիվ, կոչ անելով ինձ հետ ավելի խիստ վարվել:

Այսպես, այն վեճը, որ տեղի էր ունեցել մուսուլմանական աստվածաբանություն ուսումնասիրող ուսանողների և «Մուսուլմանական եղբայրություն» ընկերության անդամների միջև Նեղոսի Գելտայի մի փոքրիկ դյուղում, և դրան հաջորդած մեր ձերբակալությունը, ոչ իսկ լրիվ երեք օրում վերածել էին քաղաքական մի այնպիսի գործի, որտեղ Ամերիկայի Միացյալ Նահանգները և նրանց ծախսով ապրող ֆրանսիական վաճառված մամուլը հանդես էին եկել մեղադրողի դեմ: Պետք է ասել, որ «Ամբիգյու» թատրոնի ավերածությունն էլ, որ մի պատրվակ ծառայեց արգելելու իմ՝ «Գնդապետ Ֆուտերը իրեն մեղավոր է նանաչում» պիեսը, սարքվել էր այն մի խումբ վարձկանների կողմից, որոնց ծառայությունների համար նույնպես վճարել էին ամերիկա-

1 Ռոմե Վայանի «Գնդապետ Ֆուտերը իրեն մեղավոր է նանաչում» պիեսի ոտանքին թարգմանությունը հրատարակված է արտասահմանյան գրականության Հրատարակության կողմից 1953 թ.— Մանք. Խմբ.:

ցիները: Իսկ դրան նախորդել էր Ռոբեր Բոնիի պրովոկացիոն հոդվածը, որին կցված էր իմ մեծադիր լուսանկարը, որպեսզի ջարդարարները իմանան, թե ում է հարկավոր դնուհի: Այսպիսով, երկու փարիզյան և ֆարիսիստական պրովոկացիաների միջև եղած կասլը ակնհայտ է: Իսկ այդ կասլը, բոլոր այլ բաներից բացի, ցույց է տալիս, որ Եզրիպտոսում, ինչպես և Ֆրանսիայում ծիծաղելի է խոսել «ազգային ոստիկանության» առկայության մասին, որովհետև գաղութային, կիսագաղութային ու գաղութացման ստադիայում գտնվող բոլոր երկրներում, որոնց թվին է պատկանում նաև Ֆրանսիան, տեղական ոստիկանությունը սոսկ կատարողն է այն հրամանների, որոնք գալիս են արևմտյան աշխարհի գլխավոր ժանդարմ Ամերիկայից:

Եզրիպտական ժուռնալիստների ասոցիացիան ճիշտ քննեց իմ դործը և պակաս արիություն ցույց չտվեց, միաձայն պահանջելով իմ ազատությունը, մի հանգամանք, որ առավել արժանի է ամեն տեսակ գովասանքի, որովհետև երկրում պատերազմական ժամանակի օրենքներն էին գործում: Ֆրանսիական ժուռնալիստների ասոցիացիայի (որի անդամն եմ ես նրա հիմնադրման օրից) նախագահ Էդուարդ Էլսին, Անդրե Լարաբուր և ասոցիացիայի մեջ մտնող բոլոր ուղղությունների ժուռնալիստները անհապաղ բողոքի հետզերբ ուղարկեցին Փարիզի եզրիպտական դեսպանությանը:

Իսկ նույն այդ ժամանակ պարոնայք A. X.-ը և Ռոբեր Բոնին գրպարտիչ հերյուրանքներ էին թափում իրենց գրչակցի գլխին, որը բանա էր նստել օտարության մեջ և երկրում ռազմական դրություն լինելու պատճառով զրկված էր օրենքի տարրական երաշխիքներից օգտվելու հնարավորությունից: Բրպես ժուռնալիստներ, նրանք ոտնակոխ արեցին իրենց պրոֆեսիոնալ պատիվը, որպես իրենց երկրի քաղաքացիներ նրանք արհամարհեցին հայրենասեր-ֆրանսիացու իրենց պարտքը հօգուտ օտարերկրյա պետության շահերի: Երբևիցե նրանք այդ ամենի համար պատասխան կտան: Ինձ զարմացնում է, որ նրանք այնքան շուտ կարողացան մոռանալ, թե ինչ ձևկատագիր էին պատրաստել Ազատագրության ժա-

մանակաշրջանի տրիբունալները այն ժուռնալիստների համար, որոնք գործակցել էին նացիստների հետ: Եվ թող նրանք շատ հույս չդնեն այն բանի վրա, որ իրենց ամերիկյան տերերը օգնության կհասնեն: Ինչպես «Ամերիկյան» թատրոնում տեղի ունեցած միջադեպից հետո ես արդեն գրել եմ պարսի Ռոբեր Բոնիին, Ամերիկա թուշոլ վերջին ինքնաթիռի վրա բոլորի համար տեղ չի լինելու:

Մի երկար ճանապարհ է բաժանում Կահիրեն Դամյետտից, որը ծովային հին նավահանգիստ է Նեղոսի ամենաարևելյան բազկի վրա, Միջերկրականի ափից ոչ հեռու: Այդ ճանապարհորդության համար մեզ բաժանեցին երկու խմբի և նստեցրին երկու բեռնատար բաց մեքենաների մեջ: Այս անգամ մեզ շղթաներով չկապեցին իրար և մեր ուղեկցորդ սահակների հետ. մենք ամենքս ունեինք մեր սեփական ձեռնաշղթաները և ամեն մեկիս երկու ոստիկան: Քեմալն ու Նուր Էդ-Պինը այն նույն խմբի կազմումն էին, որտեղ ես էի:

Դատարանի միջանցքներում Քեմալին հաջողվեց մի քանի խոսք փոխանակել իր բարեկամների հետ, որոնք նրան պատմել էին քաղաքական վերջին դեպքերի մասին: Այլ Մախերի և Ռազմական կոմիտեի միջև գոյություն ունեցող կոնֆլիկտը է՛լ ավելի էր սրվել, և կարելի էր սպասել, որ մասսաների վստահությունը դեռևս չկորցրած Ռազմական կոմիտեն մտտիկ ապագայում հաղթանակ կտանի: Բայց այժմվանից արդեն սկսել էին երեսու կոնֆլիկտի այն հիմնական ուրվագծերը, որոնցով նշվելու է սուրմական դիկտատուրայի հետագա փուլը. Միացյալ Նահանգները և Մեծ Բրիտանիան առատորեն խոստումներ էին տալիս գեներալ Նազիրին: Սպառազինություն, վարկեր, Մուսկի ջրանցքի գոտուց գործերն էվակուացնելու հրապուրիչ հեռանկար (ի դեպ, ամբողջապես սիմվոլիկ), — մի խոսքով նրան խոստանում էին այն ամենը, ինչ պետք է, այն պայմանով, որ նա, ինչպես «Թալման» էր գրել, երկրին թույլ չտա «սահելու ռուսացիայի սլոն ուղու վրա»: Արդյոք «ազգային կոմիտեներն» ու գլուղացիական կոմիտեները կկարողանան մտաիկ ապագայում գեներալների վրա այնպիսի ճնշում գործել,

որպեսզի նրանց ետ պահեն դայթակղութունից: Գեներալ Նագիրի համար շատ դժվար չէ ազատվել Ռազմական կոմիտեի դեմոկրատական տարրերից, խաբել բանակի մեծամասնությունը, նրան պատիվներ շնորհելով և առաջնակարգ սպառազինություն մատակարարելով, և որոշ ժամանակով իշխանության գլուխ մնալ «Մուսուլմանական եղբայրության» աջակցությամբ:

Ահա թե ինչն էր այժմ մեզ մտահոգում, ահա թե ինչից էր կախված մեր մոտակա ապագան և եգիպտական ժողովրդի ապագան: Գեներալ Նագիրի այդպիսի վարմունքը եգիպտոսը կդարձնեն ատլանտյան կոալիցիայի զինակիրը, իսկ մեզ կդատապարտեն մի քանի տարվա տաժանակրություն:

Մինչ այդ մեր բեռնատար ավտոմեքենան սուրում էր Դեյուալի այգիների միջով: Եռանկյունաձև բարձր առագաստներ էին սահում Նեզոսի բազուկներով: Իսկ ջրանցքների ջրեքում աղբոր երեխաները ուրախ խաղ էին անում գլուխիսնձի տալով ծովաձիերի նմանող գոմեշների գավակի վրա: Բամբակենու ծաղիկներն արդեն այնքան վառ չէին. շուտով նրանք կվերածվեն բմբլոտ դնդիկների:

Մի փոքրիկ քաղաքում, որով մենք անցնում էինք, փողոցի մի տեղում այնքան ժողովուրդ էր խոնվել, որ մենք հարկադրված եղանք կանգ առնել: Մեր մոտով անցնող մարդիկ փող ու սիգարետ էին խցկում մեր ձեռքը: Նախորդ օրվա նման յուրաքանչյուր կանգառում կանայք փայտե ամաններով թարմ ջուր էին բերում մեզ և ժպիտներով կակեցություն շնորհում: Մենք կանգ առանք մի զորանոցում, որը հետո չէր այն փոքրիկ քաղաքից, ուր Քեմալն էր ծնվել. նա ուղեկցորդ սերժանտին խնդրեց մի հանձնարարությամբ գնալ իր ծնողների մոտ: Սա առանց հապաղելու ճանապարհ ընկավ: Ծանապարհին մեզ հանդիպող Ֆելլահները, իբրև ողջույնի նշան, բարեկամաբար շարժում էին ձեռքերը: Ես հիշեցի անցյալի ուսա գրողների պատմվածքները այն մասին, թե գլուղացիները ինչպես եղբայրաբար էին վերաբերվում շղթաչափապ այն տաժանակիրներին, որոնց նրանք հանդիպում էին Սիրիի ճանապարհներին:

Այդ միջոցին կալանավորության մեր ընկերները գրուցում էին ուղեկցորդ-զինվորների հետ և պատմում նրանց, թե մենք ինչպիսի անարդարություն ենք տանում: Զրույցը գնալով դառնում էր ավելի անկաշկանդ: Մի կանգառում ուղեկցորդները դենքերը ցած դրին և մեզ կոկա-կոլա հյուրասիրեցին: Կես ճանապարհին, բարեկամասիրությամբ համակված, նրանք մեր ձեռնաշղթաները հանեցին: Մեր առջև, շոֆերի կողքին նստած երկու սպաները տեսան այդ, բայց ոչինչ չասացին:

— Այս զինվորները,— ասացի ես Քեմալին,— ժողովրդի վրա չեն կրակի:

— Եթե սպաները հրամայեն, ապա կկրակեն,— պատասխանեց Քեմալը: Նրանք սպաներից վախենում են: Ծիշտ է, նրանք կրակելու են սիրտը քայացնելով, բայց այնուամենայնիվ առայժմ դեռ կկրակեն: Ահա կտեսնես, երբ մենք սկսենք մոտենալ Գամջետտիին, նրանք նորից կհաղցնեն մեր ձեռնաշղթաները, որովհետև նրանք գիտեն, որ Գամջետտիում բարձրաստիճան սպաներ, մեծ զորանոցների կան,— մի խոսքով այնտեղ կա այն ամենը, ինչ հարկավոր է խոշոր զորամասերում «կարգը պաշտպանելու» համար: Ահա թե ինչպես է այժմ ուժերի դասավորության գործը: Զինվորները կհրաժարվեն ժողովրդի վրա կրակելուց, հենց որ սեփական փորձով ըմբռնեն, որ երկինքը իրենց գլխին փուլ չի պա, եթե չհնազանդվեն իրենց պետերին, բայց եթե միայն բոլորը միասին չհնազանդվեն: Ֆարուկի հրաժարումը լավ դաս եղավ նրանց համար: Գահի տապալումը ամենաակնառու օրինակն է այն բանի, թե ուր կարող է հասցնել անհնազանդությունը: Հիշե՛ր, որ Ֆրանսիացիները գլխատեցին Լյուդովիկոս XVI-ին, ուսաները գնդակահարեցին Նիկոլային, իսկ Ֆարուկը արսուվեց զինվորական պատիվներով, այնպես որ եգիպտացու համար դասը բավականաչափ համոզեցուցիչ չէր: Զինվորները՝ Ֆելլահների այդ որդիները, դեռևս որոշ բան ունեն հասկանալու, իսկ դա հասկանալ միայն կարող են իրենք: Եվ միայն այդ ժամանակ նրանք կխիզախեն եղբայրանալ իրենց հայրերի ու եղբայրների հետ: Իսկ դա՛ վաղվա գործ է...

Գիշերն իջավ: Գյուղեր այլես այնքան հաճախակի չէին հանդիպում: Մենք գնում էինք լուսնի լույսով մեղմ փայլող բրնձի դաշտերի միջով: Մեր ընկերներն ու մեզ ընկերակցող պահակները ծոր տվին արաբական կոկորդ պատող մի երկարածիկ երգ: Նորայրական խաղաղասիրու- թյունը կայանավորներին միավորում էր նրանց թշվառ պահակների հետ: Ֆելլահները, որոնք իրենց սպիտակ էշերին նստած վերադառնում էին դաշտերից, մեզ սիրալիր ողջու- նում էին գլխով:

— Մեր ժողովուրդը բարի է,— ասաց Քեմալը:

Ես իմ ձեռքը դրի նրա ուսին.

— Արքա՛ն շատ եմ ես քեզ սիրում, իմ աղնիվ Քեմալ:

Աղեկցորդ պահակները նորից հագցրին մեր ձեռնա- շղթաները: Օդում արդեն ծովի աղի համն էր զգացվում: Քնած Դամյետտի միջով մենք անցանք փոթորիկ նման սուբալով: Նրկու բեռնատար ավտոմեքենաներն էլ կանգ առան մի աչքում, լուսնի լույսի տակ սպիտակ թվացող վար- դագույն վարդերի թփերով շրջապատված հին ձևի ցածրիկ բանտերի շինությունների մոտ:

Դամյետտի գեներալ-նահանգապետն ու բանտերի պետ պարոն գնդապետը նստել էին վարդերի մեջ, ծղոտից հյուսված բազկաթոռների վրա: Նրկուան էլ շաղ էին, երկուան էլ քրտնակալած, երկուան էլ ներքինիներին հատով գիլ- ճղճղան ձայնով: Խստությունը վարժեցված ծառաները առա- չին իսկ կանչից նրանց զովացուցիչ ըմպելիքներ էին մա- սուցում:

Մենք հերթով անցանք նրանց առջևով՝ յուրաքանչյուրս երկու ուղեկցորդ պահակներով, որոնք գնում էին ձգված և ստները համարյա թե զինվորական ձևով շարժելով:

Մեզ խուզարկեցին՝ կարծեմ ձերբակալության ընթաց- քում տասներորդ անգամ: Իմ օտնը երկու շաղերի հատուկ ուշադրությունը գրավեց. նրանք սկսեցին իրար հետ շշուռ- ջով խոսել և հոհուր: Ըստ երևույթին, նրանց մեծ հաճույք էր պատճառում, որ ինձ խուզարկում էին և այն էլ այդպիսի

մանրակրկիտությամբ: Նրանք ինչ-որ հրաման արձակեցին, և սկսեցին իմ հագուստները հանել:

Աղեկցորդ պահակների միջև, ինձնից երեք շաբթ հեռու կանգնած Քեմալը բողոքեց բարձր, վճռական ձայնով: Գեներա- լալը, որպես պատասխան, իր բարակ ձայնով նրա վրա ինչ- որ գոռաց: Օսյուր առավ մի աշխույժ գիպուգ՝ արաբերեն, որից ես ոչինչ չհասկացա, եթե չհաշվենք այն, որ խոսքն իմ մասին էր: Ես կիսով չափ հանված էի. պահակները, թվում էր, հրամանի էին սպասում, որ շարունակեն ինձ մեր- կացնել: Գեներալի ձայնը գնալով ավելի ու ավելի էր բարձ- րանում: Իսկ Քեմալը առաջվա նման խոսում էր հավասա- րակշռված, վճռական տոնով:

Գեներալը ինչ-որ հրաման ավեց: Ինձ հրեցին մի շենքի մեջ, քշեցին միջանցքների լարիքինթոսով և մտցրին մի նեղ կարոցեր:

Քիչ անց այնտեղ հրեցին էլի ինչ-որ մեկին: Հետո ներս մտավ ստիկանական սպան:

— Ես հրամայեցի ձեզ համար մի ընկեր բերեն,— ասաց նա ֆրանսերեն:

Եվ գրպանի լապտերով լուսավորեց նոր ժամանածին: Դա մի բարձրահասակ ֆելլահ էր, անսովոր չափով կեղտո- տած գալաբիով: Ինչ-որ հիվանդությունից կերված նրա կո- պերը թարախակալել էին:

— Ես ձեզ ընկեր եմ բերել,— կրկնեց սպան,— ընկեր, ընկեր...

Եվ նա նորից լուսավորեց թարախակալած կոպերով ֆելլահին: Ինչպես երևում էր, այդ ամբողջ պատմությունը նրան հսկայական բավականություն էր պատճառում:

Նա մեզ երկու վերմակ շարտեց: Գուռը աղմկով փակ- վեց, և մենք մնացինք դժոխային մթնոլորտի մեջ:

Ես լսում էի, ինչպես ֆելլահը շոշափելով վերմակն էր փնտրում, բաց արեց նրանցից մեկը և մոտեցրեց ինձ, հետո մյուսը բացեց իր համար և պռոկեց մեկուսի: Նրա հավա- ասարշափ շնչառությունից ես հասկացա, որ նա ննջեց:

ՎԱՌՎՈՂ ՍԻԳԱՐԵՏԸ ԴՌԱՆ ԱՉՔՈՒՄ

Հաջորդ օրվա կեսին ես ստացա մարդկային կարեկցության առաջին ապացույցը:

Թարախակալած կոպերով ֆելլաճը, երեսը դեպի պատը շուռ տված, քնել էր: Ես պառկել էի մեջքիս վրա, աչքերս առաստաղին սևեռած: Դռանը խփված երեք թեթևակի հարվածի ձայն լսվեց, և աչքի մեջ երևաց վառված սիգարետը բռնած մի ձեռք:

Ես վեր կացա, վերցրի սիգարետը, ծխեցի և իսկույն զգացի հիասքանչ մի գինովություն: Ես մոտեցա աչքին և տեսա մի անծանոթ դեմք, որն ինձ ժպտում էր: Մարդն իր մատները դրեց շրթներին: Դեմքն անհայտացավ:

Բայց դրանով չվերջացան կարեկցության արտահայտությունները: Ընդհակառակը, ուշադրության նշանները, որ ինձ ցույց տրվեցին Դամյետտիի բանտում գտնվելու երեք օրերի ընթացքում, շարունակ բազմապատկվում էին և զարմացնում ինձ, թողնելով ամենաշնորհակալ հիշողություններ:

Մենք՝ ես ու ֆելլաճը, բացարձակապես ոչինչ չունեինք: Կարցերը նեղ ու նեղվածք էր. ուներ ընդամենը երկու քայլ լայնք և վեց քայլ երկարություն: Ոչ կահույք կար, ոչ էլ մի որևէ իր. լույսը կարցեր էր թափանցում առաստաղի տակի փոքրիկ ձեղնալուսամուտից: Մեզ կերակրում էին միայն եփպտացորենի ալյուրից պատրաստած բլիթներով, այն էլ շատ անկանոն: Նույնիսկ ջրով լի թասը, որ բլիթների հետ

միաժամանակ մեր ձեռքն էին խոթում, հենց որ խմելը վերջացնում էինք, տանում էին: Կվացվելու տեղ չկար, եթե չհաշվենք զուգարանի ծորակը, որտեղ մեզ օրը մի անգամ էին տանում: Ո՛չ թուղթ կար, ո՛չ թանաք, ո՛չ մատիտ: Անկողնի փոխարեն ծառայում էր վերմակը, որը փռում էինք ուղղակի մերկ ցեմենտի վրա: Մութն ընկնելուց (կարցերում ոչ մի լուսավորություն չկար) մեր ձեռնաշղթաները հանում էին. արշալույսին դրանք նորից հագցնում: Բանտում գտնվելու ամբողջ ժամանակամիջոցում ես ոչ մի անգամ սիգարետի պակաս չեմ զգացել, եթե չհաշվենք առաջին առավոտը, թեև կալանավորների բոլոր փողերը վերցվում և պահվում են բանտային գրասենյակում: Հենց առաջին երեկոյան ինձ մոտ արդեն երկու տուփ սիգարետի պաշար կար՝ որոնցից մեկը ամենալավագույն տեսակի սիգարետներից էր, և երեք տուփ տափակ լուցկի: Ինձ նույնիսկ ցույց տվին, թե դրանք ուր պետք է թաքցնել: Բանից պարզվեց, որ այդ մերկ կարցերում ամեն տեսակ ծակեր ու ձեղքեր կային, որոնց գոյություն մասին նույնիսկ դժվար էր ենթադրել:

Երբ մենք խմել էինք ուզում, բավական էր միայն որոշ եղանակով թակել դուռը՝ և աչքի մեջ ցցվում էր խավաքաբտե մի ձնագար, որի մեջ դռան մյուս կողմից կարեկից մի ձեռք թասից առատորեն ջուր էր լցնում, այն պահելով անհրաժեշտ բարձրությամբ:

Միևնույն աչքի միջով մեզ տալիս էին մսի կտոր և հալվա՝ մի հիանալի քաղցրեղեն:

Մեզ պահում էին խստագույն մեկուսացման մեջ, մինչև իսկ «գրոսանքներն» էլ արգելված էին: Սակայն այդ ամբողջ ժամանակամիջոցում կարցերի դուռը բազմիցս բացվում էր, իսկ մի անգամ նույնիսկ ես դուրս սողացի դեպի բանտի մի այլ մասը: Եվ ես հնարավորություն ունեցա համոզվելու, որ եթե այնտեղ երկար մնամ, կկարողանամ ոչ միայն գրել ու կարդալ, այլև նամակագրություն ունենալ արտաքին աշխարհի, նույնիսկ Եվրոպայի հետ:

Ըստ որում բանտի ղեկավար անձնակազմից ոչ մեկը մասնակցություն չունեի իմ վիճակը թեթևացնելու գործում:

Նրանք ավելի շուտ նացիոնալիստական նախապաշարմունք-
ներից առաջացած ատելութեամբ էին վերաբերվում ինձ հետ,
այս զոչինչը, որոնք երկար ժամանակ անզլիացիներից
նվաստացում էին կրել, այժմ ձգտում էին վրեժ լուծել իրենց
ձեռքն ընկած եվրոպացուց՝ ընդհանրապես համարյա թե
անզլիացուց, և նրա հետ վարվում էին շատ ավելի վատ,
քան ամենախեղձ ֆելլահի հետ: Արդարև, ինձ մեղադրում
էին կոմունիստական գործունեության մեջ, բայց դրանով
լանջը չի փոխվում. չէ որ կոմունիզմը նույնպես եվրոպական
ծագում ունի, նշանակում է, որոշ չափով անզլիական է:

Այսպիսով, բանտում կողք-կողքի գոյություն ունեին
այսպես ասած երկու հասարակություն, որոնք տարբեր
կյանքով էին ապրում և իրար հետ ոչ մի բանով կապված
չէին: Մի կողմում՝ պետերը, շինովնիկները, ոստիկանական
և զինվորական սպաները, մյուս կողմում՝ քաղաքական բան-
տարկյալները և քրեականները, ինչպես նաև բանտի ստորին
անձնակազմը, (որ արտաքին աշխարհի հետ շփում ունի),
քաղաքացիական և զինվորական մարդիկ, ներառյալ սեր-
ժանտական կազմը: Մի կողմում՝ արտոնյալները, մյուս
կողմում՝ չքավորներն ու հալածվածները: Այստեղ ես նորից
համոզվեցի այն բանում, որ եզրագծերում հալածանքները,
ինչպիսին էլ որ լինեն դրանց պատճառները, ավտոմատ
կերպով առաջացնում են չքավորների եղբայրական միաս-
նություն: Այն սուր սահմանազատումը, որ, ըստ երևույթին,
գոյություն ունի եվրոպական բանտերում՝ քաղաքական բան-
տարկյալների ու քրեականների միջև, Դամյետալում ընդհան-
րապես նկատելի չէ: Թե՛ քաղաքականները և թե՛ քրեա՛լնե-
րը, բանտի ստորին անձնակազմի հետ միասին, միացյալ
ձակատ են կազմում պաշտպանելու արտոնյալների կողմից
հալածված թշվառներին:

Բանտում իմ ստացած ամբողջ օգնությունը անվճար էր:
Երկրորդ գիշերն ինձ մոտ եկավ մի դրամանենգ, որը,
ինչպես ինձ պատմեցին, իր շրջապատում հռչակ էր վայելում:
Դա անկաշիկանոց շարժումներով մի էլեգանտ սղամարդ էր,
որն ավելի լավ անզլերեն էր խոսում, քան ֆրանսերեն:

— Ես, իհարկե, կոմունիստ չեմ, — ասաց նա ինձ: —
Ես միայն իմ գործերով եմ զբաղվում և բնավ չեմ հետա-
քրքրվում, թե ինչ է կատարվում շուրջս: Նո՛ւ, ես ի՛նչ կարող
եմ անել այն հասարակության մեջ, որտեղ արդեն դրամը
չի խաղալու այն դերը, որպիսին նրան հատկացված է
այժմ: Բայց ձեր պոետ-բարեկամը ինձ պատմել է ձեր մա-
սին: Ես գտնում եմ, որ անարդարացի են վարվում ձեզ հետ,
և ահա ես խոսեցի այլ կալանավորների հետ, և մենք որո-
շեցինք մեր ուժերի ներածին չափ օգնել ձեզ:

Նա ձեռքով ծափ տվեց: Բանտապահը ներս մտավ երկու
բաժակ տաք թեյով: Գրամանենգը թեթև խփեց նրա ուսին:

— Այս զինվորները, — շարունակեց նա, — նույնպես
վրդովված են ձեր նկատմամբ ցույց տրված անարդարության
պատճառով: Զեր պոետ-բարեկամը, պետք է ասել, անչափ
լավ է խոսում: Ես մեծ բավականություն եմ գրուցում
նրա հետ:

Չետո նա արտասանեց կիտաի պոետը, և մենք անցանք
անզլիական պոեզիայի քննարկմանը:

Վերջապես, հաջորդ օրն ինձ հաջողվեց խոսել Քեմալի
հետ, որը, բանից երևաց, շատ նորություններ ուներ ինձ
հաղորդելու: Ամբողջ աշխարհի ռադիոն մեր մասին էր խո-
սում: Անընդհատ հոսանքով Կահիրե էին թափվում բողոքի
հեռագրեր: Եզրագծական ժողովուրդների ասոցիացիան իր
անդամների ընդհանուր ժողով էր գումարել, որպեսզի բըն-
նարկի այն, ինչ տեղի էր ունեցել ինձ հետ: Կահիրեի մեր
բարեկամներից ոմանց հաջողվել էր տեսակցություն ունե-
նալ գեներալ Նազիբի հետ, որին նրանք փորձել էին ապա-
ցուցել, թե մեր դեմ հարուցված դավադրության մեղադր-
ությանը շատ խախուտ հիմք ունի. այդ պատճառով, ռադիա-
կան տրիբունալը ինչպիսի եռանդով էլ կալի գործին, այդ
զատավարությունը միայն ծիծաղելի գրություն մեջ է դնե-
լու կառավարությանը: Իսկ ընդհանրապես, այդ բոլորը Ալի
Մախերի ինտրիգներն են, որոնք, ուղղված են Ռազմական
կոմիտեի դեմ: Նազիբը, կարծես թե տատանվել էր և խոս-
տացել անձամբ ուսումնասիրել իմ գործը:

— Ինչպե՞ս քեզ հաջողվեց իմանալ այդ բոլորը: Ձէ որ դու էլ, ինձ նման կարցերում մենակութեան մեջ ես նստած: — Ա՛յ քեզ բան, մենք էլի դատարիկ բաների մասին ենք խոսում... Աշխարհում, նույնիսկ բանտում, շատ ավելի բարի մարդիկ կան, քան ընդունված է կարծել... Ուշ Դամ-յետտին հուզված է մեր ձերբակալության պատճառով: Քաղաքում պետիցիաներ են շրջում, միմեքի համար միջոցներ են հավաքում, որպեսզի մարդավայել կերակրեն մեզ:

Նվ, իսկապես, հաջորդ օրը, երբ կալանավորության իմ ընկերը՝ Ֆելլաճը, բանտապահի ցուցումի համաձայն, դեմքը դեպի Մեկկա ուղղած ծնկաչոք ավարտում էր իր աղոթքը, մեզ համար բերին երկու հակաչափան բուտերբրոտ՝ սպիտակ բուլկու մեջ դրած հավի միս ու ռոստրիֆ:

Կեսօրին ինձ տարան դատախազի մոտ: Սկսվեց հարցաքննությունը, որը ֆրանսերենով վարում էր ինքը դատախազը՝ դատարանի քարտուղարի և քաղաքացիական շորերով երկու ոստիկանական աստիճանավորների ներկայությամբ: Այդ պահին լսվեց հեռախոսի զանգի ձայն. հեռախոսով խոսակցությունը քառորդ ժամից ավելի տևեց: Ես միանգամայն ոչինչ չէի հասկանում այն ամենից, ինչ դատախազն էր պատասխանում, որովհետև նա արաբերեն էր խոսում: Ինձ թվում էր միայն, որ նա բողոքում է: Հետո դատախազի կարմիր երեսը ծածկվեց մահացու դաշկությամբ: Խոսակցության վերջում ոստիկանական աստիճանավորներից մեկը ոտքի ելավ, հագավ իր պանամա-գլխարկը, ուսերը ցնցեց և դուրս եկավ: Խոսափողը կախ տալուց հետո, դատախազը սկսեց ինչ-որ բաներ ասել քարտուղարին, որը, ինչպես ինձ թվաց, նենգություն էր նայում նրան, — այդ մանր շինովնիկը նույնպես ճնշվածների դասին էր պատկանում: Այնուհետև դատախազն ինձ ասաց.

— Ստիպված ենք հարցաքննությունը դադարեցնել: Մեզ բոլորիս անհասկալի կահիրե են կանչում:

Ինձ կարցեր շտարան, այլ թողին բակում, մի խումբ զինվորների մեջ: Մի սերժանտ, որը ծառայել էր Օտարերկրյա լեգեոնում, ֆրանսերենից դեռ որոշ բան հիշում էր: Նվ

ես, ինչպես զինավարժության ժամանակ, սկսեցի հրամաններ տալ այդ մարդկանց: Նրանց ակնհայտ բավականություն էր պատճառում իմ հրամանները կատարելը՝ «պաշտպանվեցե՛ք», «հրացա՛նն ուսին», «հրացանը ոտքի՛», «ազա՛տ»... Ես ամենահիանալի տրամադրության մեջ էի: Կալանավորը մի ակնթարթում կարողանում է որսալ իր դրուժյան մեջ կատարվող բարենպաստ փոփոխությունը:

Այն բեռնատար մեքենայում, որը մեզ կահիրե էր տանելու, ես տեսա կալանավորության իմ բոլոր ընկերներին: Մեր ճանապարհորդությունը նման էր հաղթական երթի: Դամյետտի բանտի դարբանների մոտ հոծ բազմություն էր սպասում մեզ, որը մեզ տեսնելուն պես ողջունեց ուրախ ազադակներով: Քեմալն իսկույն բազմությանը դիմեց կոշերով, որոնք իսկույն կրկնվեցին և՛ բազմության, և՛ կալանավորների կողմից:

Յուրաքանչյուր քաղաքում, որի միջով ձգվում էր մեր ճանապարհը, մեզ դիմավորում էր առավել կամ նվազ մեծ թվով, չզիտես թե ում կողմից նախազգուշացված մարդկանց բազմություն: Այդ օրն ու դիշերը ամբողջ Դեյտայով մեկ հնչում էին այն լուրնգները, որ կալանավորության իմ ընկերները ազգաբարձում էին իրենց կոկորդային լեզվով.

«Կեցցե՛ զինվորների և գյուղացիների դաշինքը»

«Կեցցե՛ գյուղացիների և բանվորների դաշինքը»

«Կորչի՛ իմպերիալիզմը»

«Կեցցե՛ն գյուղացիական կոմիտեները»

«Կեցցե՛ն «ազգային կոմիտեները»

«Կորչի՛ Անգլիան, կորչի՛ Ամերիկան, կորչի՛ Ֆրանսիան»

«Կեցցե՛ ֆրանսիական ժողովուրդը»

Նվ բազմաթիվ այլ լուրնգներ, որ ես արդեն բազմիցս թվարկել եմ:

Քեմալը, Նուր-էլ-Դինն ու ես դրոշների ձողի նման ամբողջ հասակով ձգված կանգնել էինք բեռնատար մեքենայի թափքի մեջ, կռթնած կաբինի կտրին, ուր նստել էին շոֆերը և պահպանության պետերը՝ ոստիկանական երկու սպա-

ները Մենը ուղիղ մեր առաջն էինք պարզել նիկելապատ ձեռնաշղթաներով կապված մեր ձեռքերը, ձեռնաշղթաներ, որոնց վրա մակագրված էր՝ «Made in England» — «Պատրաստված է Անգլիայում», իմպերիալիզմի երկրներից մեկում:

Գիշերն արդեն վաղուց իջել էր երկրի վրա, երբ մենք մոտեցանք Կահիրեի արվարձանին: Բեռնատար մեքենան կանգ առավ, և պահպանություն պետք՝ կապիտանը, մոտեցավ Քեմալին: Նա ասաց, որ ինքը մեր նկատմամբ շատ ներողամիտ է եղել և չի արդեիվ մեզ ցույցեր սարքելու, երբ մենք դանազան քաղաքներով էինք անցնում, բայց այժմ նա խնդրում է Քեմալին համոզել իր ընկերներին լողունգներ չազդարարել, քանի մենք կանցնենք Կահիրեի միջով: Քեմալը կտրականապես հրաժարվեց, վճռականորեն հայտարարելով, որ ցույցեր սարքելը պաշտպանության մեր հիմնական միջոցն է, որ ռազմական տրիբունալների դատավորներին մենք կարող ենք հակադրել միայն հասարակական կարծիքը, և որ մենք ինչպես Եգիպտոսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս ծավալված բողոքի լայն կամպանիային ենք միայն պարտական Կահիրե վերադառնալու այս առաջին հաջողության համար, այդ պատճառով էլ նա խրախուսելու է իր ընկերներին, որ հնարավորին չափ ավելի բարձր ձայնով լողունգներ գոչեն, որպեսզի մայրաքաղաքն իմանա մեր վերադարձի մասին:

Բեռնատարը դանդաղորեն շարժվեց առաջ: Որոշ ժամանակ անց նա նորից կանգնեց մանրավաճառների արկըրդների առաջ: Կապիտանը հրամայեց իր հաշվին մեզ հյուրասիրել կոկա-կոլայով, ձմերուկով և խաղողով: Նա ժամանակ էր շահում: Նրա խորամանկության շնորհիվ մենք մայրաքաղաք մտանք կես գիշերին, և այն լողունգները, որ մենք բարձրաձայն գոչում էինք, ոչ մի արձագանք չդրան կիսով քնած քաղաքում: Զեռներեց սպան այս ձևով կարողացավ դուրս գալ դրությունից:

Այս դեպքը թույլ է տալիս դատողություններ անել այն մասին, թե ինչ է եղել բռնության և հալածանքի լազերի ու նրանց զոհերի լազերի միջև եղած ուժերի փոխհարաբերու-

թյունը 1952 թվականի օգոստոսի վերջին: Եվ ինչքան էլ նուրբ հյուսած լինի ինտրիգների ցանցը, մոտիկ ապագայում որևէ կառավարություն հազիվ թե կարողանա գլուխ հանել Եգիպտոսի ներքին և արտաքին քաղաքականությունից, առանց հաշվի առնելու ժողովրդի կամքը:

Բեռնատարով մեզ տարան ուղղակի «օտարերկրացիների բանար», որն այդ անունը պահել էր այն պահից, երբ կապիտուլյացիաների սեփիմ էր հաստատվել: Այժմ այնտեղ են պահվում քաղաքական բանտարկյալները: Այդ պահին այնտեղ գանձող տասնչորս բանտարկյալները, որոնք բուլտը պրեզրեսիվ հայացքների տեր մարզիկ էին, նախազգուշացված լինելով մեր ժամանման մասին, մեզ համար խուկական օվաքիա սարքեցին:

Ինձ բանտարկյալների ցուցակում մացնելու բուլտը ձեռնառկությունները դեռևս չէին ավարտվել, երբ իմ հետևից մարդ ուղարկեցին: Ինձ տարան դատախազություն, որտեղ ես տեսա Կահիրեի և Գամպետաիի դատախազներին, Ֆարիսկարի բշտիկավոր շինովնիկին և ինչ-որ հետևակային երիտասարդ մի սպայի, որն ուներ գլխավոր շտաբի տարբերանշան:

Երիտասարդ սպան ինձ մի կողմ կանչեց և խնդրեց մի քանի խոսքով պատմել, թե ինչ էր պատահել ինձ հետ: Ինձ լսելուց հետո, նա ուներ թոթվեց և խնդրեց Եգիպտոսի վրա չնեղանալ «իրադրությունների այդքան տհաճ դուզակցության պատճառով»:

— Դրա համար ես չափազանց սիրում եմ եգիպտական ժողովրդին, — պատասխանեցի ես:

Դատավորներից նա վերցրեց իմ թղթերը, ինձ նստեցրեց գինվորական մի ավտոմոբիլ և տարավ «Սեմիրամիս» հյուրանոցը, որտեղ ինձ սպասում էր իմ սենյակը, վաննան և հիանալի վիսկին:

Երկու օր հետո ազատ թողնվեցին նաև կալանավորության իմ ընկերները:

ԽՈՍՔԸ ՊԱՏԿԱՆՈՒՄ Է ՅՅԼԱՆՆԵՐԻՆ

Վերև նկարագրված դեպքերից հետո ես մի քանի օր ես մնացի Եգիպտոսում, սպասելով, որ ինձ պաշտոնապես հաղորդվեր գործը կարճելու մասին և մեկնելու վրդա տրվեր, առանց որի ես չէի կարող հեռանալ երկրից:

Այդ ամբողջ ժամանակամիջոցում ես անխոնջ հսկողության տակ էի գտնվում: Ինչպես երևում է, քաղաքական օտարիկանությունը չէր ուզում զենքը ցած դնել: Անշուշտ, նա դեռևս գտնում էր, որ իմ կողմից կատարված որևէ անզույշ բայլ թույլ կտա իրեն նորից ընթացքի մեջ գնելու «պետության հիմքերը պայթեցնելու»-ն ուղղված դավադրության մեղադրանքը: Այդ պատճառով ես ջանադրությամբ զգուշանում էի հանդիպում ունենալ բանտի իմ ընկերների կամ նրանց քաղաքական համախոհներից որևէ մեկի հետ: Ամբողջ օրը ես անց էի կացնում իմ կուլեգանների՝ օտարերկրյա թղթակիցների հետ, որոնց հետ ունեցած իմ շփումը, ի դեպ, իմ աչքը շատ բանով բացեց:

Այնուամենայնիվ, ինձ հաջողվեց հանդիպել մի եգիպտացու հետ, որն իր գրաված պաշտոնի շնորհիվ տեղյակ էր այն բոլոր ինտրիգներին, որ հյուսվում էին ինչպես Ռազմական կոմիտեի շուրջը, այնպես էլ նրա անգամների միջև: Մի քանի ժամ տևող մեր զրույցը տեղի էր ունենում ավտոմոբիլում, որը ստորալով մեզ տանում էր Կահիրեի ռեզիդենտաֆան թաղամասերի ամացի պողոտաներով: Հանդիպումը կազմակերպվել էր կոնսպիրացիայի բոլոր կանոնների հա-

մաձայն: Մենք երկուսով էլ շահագրգռված էինք այն բանում, որ իրար շխալտառակենք: Այն ամենը, ինչ ես շարագրելու եմ ստորև, մեր զրույցի համառոտ եզրակացությունն է:

Իմ զրուցակիցը ամենից առաջ իմ ուշադրությունը հրավիրեց ամերիկյան զեսպանության գործունեության թափի վրա, զեսպանություն, որն իր արամադրության տակ ունի զինվորական, առևտրական և մամուլի կցորդների մի ամբողջ հաստիք, ինչպես նաև պրոպագանդա մղելու համար պատկանելի դրամական ֆոնդ: Դեսպանության արամադրության տակ գտնվող և՛ անձնակազմը, և՛ միջոցները ամենևին էլ չեն համապատասխանում այն դերին, որ այսօր Միացյալ Նահանգներն են խաղում Եգիպտոսում, որովհետև առաջվա նման Եգիպտոսը առևտուր է անում գլխավորապես Մեծ Բրիտանիայի հետ: Ամերիկյան գործարարներին այդ իմաստով դեռևս քիչ բան է հաջողվել ձեռք գցել: Կոնդոնի Միտլի դիրքերը դեռևս բավականաչափ ամուր են. ամերիկյան ոչ մի բանկի մինչև այժմ չի հաջողվել հիմնավորվել Կահիրեում: Եթե երկիրը վերցնենք ամբողջությամբ, ապա նրա հարստության ամենամեծ մասը Ֆրանսիային է պատկանում՝ «Կրեդի ֆոնսյե» ընկերության, «Սյուկլերի դե էժիպտ»-ի և Սուեզի ջրանցքի միջազգային ընկերության միջոցով, — սակայն նրա ղիվանագիտական ներկայացուցչությունը նվազազույնի է հասցված: Անգլիան, որի տնտեսական շահերը ֆրանսիականից հետո երկրորդ տեղն են բռնում, Եգիպտոսով շափազանց շահագրգռված է ռազմական տեսակետով, այնուամենայնիվ նրա ղիվանագիտական անձնակազմն էլ քանակապես նկատելի չափով զիջում է ամերիկյան զեսպանության անձնակազմին: Արաբներն լեզվով լույս տեսնող մի թերթ, որը մեծ տիրաժ ունի, վերջերս դարձավ Հենրի Լյուսիսի՝ ամերիկյան հրատարակչական կոնցերնի սեփականությունը: Դրան պետք է ավելացնել այն, որ կոկա-կոլա արտադրող ֆիրմայի տիպի բաժնետիրական ընկերությունները կրկնակի դեր են կատարում. ամբողջ երկրով մեկ ցրված նրանց գործակալները իրենցից ներկայաց-

նում են գործակալության օդակներ, իսկ երբ պահանջվում է, ապա նրանք դառնում են ակտիվորեն գործող շղթաներ:

Ինչո՞ւ համար են ամերիկացիները աչդպիսի նշանակություն տալիս եզրիպտոսին: Հիմնականում երկու պատճառով:

Նախ՝ այն պատճառով, որ Մերձավոր Արևելքի բոլոր երկրներից եզրիպտոսը ամենալավագույն ուղղմական բազան է Սովետական Միության դեմ հարձակվելու համար: Մեծ օդանավակայաններ նույնպիսի հաջողությամբ կարելի է կառուցել նաև Լիվիայի, Անդրհորդանանի, Իրաքի որևէ մի անապատում կամ Անատոլիայի հարթավայրերում, բայց անապատում կառուցված վայրէջքի հրապարակներն ու թռիչքային ուղիները դեռևս ուղղմական բազա չեն հանդիսանում: Հարկավոր է ձեռքի տակ ունենալ տեխնիկական և այլ տեսակի անձնակազմ, ջուր, որպեսզի առանց դժվարության կարելի լինե՞ր կարգավորել մատակարարումը, հարկավոր է, որ գոյություն ունենան հաղորդակցության միջոցներ, որոնք անհրաժեշտության դեպքում կարողանային իրար փոխարինել: Եզրիպտոսում, որն ունի փոքր տերիտորիայի վրա կենտրոնացած բազմաթիվ բնակչություն, արդյունաբերական և գյուղատնտեսական կադրեր, հարուստ հողագործություն, ճանապարհների ճյուղավորված ցանց, երկու ծովերի վրա բացվող և լավ սարքավորված նավահանգիստներ, — այդ բոլոր պայմանները առկա են:

Իսրայելն այդ տեսակետից սոսկ երկրորդական տեղ է գրավում: Բնակչությունն այնտեղ տասնութ անգամ ավելի քիչ է, քան Եզրիպտոսում և այն էլ փոքր է մի նեղ հողաշերտի վրա, որը թշնամական երկրներով է շրջապատված և միայն մի ծովի է միանում:

Երկրորդ՝ այն պատճառով, որ Միացյալ Նահանգները իրենց հումքի և կապիտալի ներդրման ուղորանների, (ինչպես նաև ուղղմական բազաների) պահանջը բավարարելու միջոցներ որոնելիս, ձգտում են Անգլիային և Ֆրանսիային դուրս մղել ինչպես Եզրիպտոսից, այնպես էլ Իրանից և Հյուսիսային Աֆրիկայից: Այդ պահանջն առավել ևս հրամայա-

կան է այն պատճառով, որ անգլո-սաքսոնական երկրների միջև եղած հակասությունների ուժեղացումը սպառնում է իր հետ բերել Ատլանտյան դաշինքի տապալում:

Ահա հենց այդ երկու պատճառներով էլ Միացյալ Նահանգները մեծ ճիգ են թափում, որպեսզի Եզրիպտոսում իշխանության գլուխ բարձրացնեն մի այնպիսի հեղինակավոր կառավարություն, որը բավականաչափ ուժեղ լինե՞ր երկրի ներսում և թույլ՝ միջազգային ասպարեզում: Այլ խոսքով՝ մի կառավարություն, որն ամբողջապես ԱՄՆ-ից կախում ունենար: Որովհետև ո՛չ ուղղմական բազաները, ո՛չ էլ այս ու այն ձեռնարկությունում ներդրած կապիտալները չեն կարող անվտանգ լինել, եթե բնակչությունը թշնամաբար արամազրված լինե՞ր, և իշխանության գլուխ կանգնած լինե՞ր մի կառավարություն, որն ի վիճակի չէ բռան մեջ պահել իր ժողովրդին: Ոստիկանական մի կարգ, որը հարկադրված լինե՞ր հենվել արտասահմանի վրա, բայց որը լինե՞ր բավականաչափ ուժեղ՝ ամեն տեսակի ստոր և զարշելի գործեր կատարելու համար — ահա թե իմպերիալիզմը ինչ է ձգտում սովորաբար կապել այն ժողովուրդների վրին, որոնց վրա լուծ է ուղում դնել:

Ներկայումս Միացյալ Նահանգները Եզրիպտոսում իրենց հույսերը դնում են «Մուսուլմանական եղբայրություն» ընկերության վրա: (Վերևում ես արդեն ասել եմ, որ այդ ընկերության անդամները Ռադմական կոմիտեում գերակշռում են):

Դա խոսում է մուսուլմանական ժողովուրդների նկատմամբ ամերիկյան դիվանագիտության հետևողականության մասին, այդ նույն քաղաքականությունը կարելի է տեսնել Ֆեսից մինչև Ջակարտա, Ատլանտյան օվկիանոսի ափերից մինչև Հնդկական և հավաղ օվկիանոսների ափերն ընկած բոլոր տարածությունների վրա: Այդ քաղաքականությունը պաշտպանում է այն պահանջները, որ նացիստալիստորեն արամազրված բուրժուական պարտիսանները ներկայացնում են դադումային հին պետություններին՝ Ֆրանսիային, Մեծ Բրիտանիային, Հունգարիային: Ըստ որում, այդ պաշտպա-

նախկինը ցույց է տրվում սոսկ որոշակի պայմաններով, այլ խոսքով՝ այն չափով, ինչ չափով, որ այդ պարտիաները պայքար են տանում այն կազմակերպությունների դեմ, որոնց մոտ հստակորեն է հնչում ժողովրդական մասսաների ձայնը:

Ինդունեղիայում ամերիկացիները աջակցություն ցույց տվին հուլանդական լծի դեմ ապստամբող Ջոկյակարաայի հրիտասարդ ռեսպուբլիկային, միայն Մադիսոնում կատարված դատաստանից հետո, այսինքն՝ ապստամբների բանակի շարքերում եղած կոմունիստներին կոտորելուց հետո: Մարտիկոյում և Թունիսում ամերիկացիները «Բսթիքլալ» և «Նեո-Պեստոր» պարտիաներին խոստանում են աջակցություն ցույց տալ Ֆրանսիայի դեմ մղած պայքարում այն պայմանով, որ այդ պարտիաները հրաժարվեն կոմունիստների կողմից առաջարկված ազգային ճակատին մասնակցելուց:

Եզիպտոսում Ալի Մախերի կառավարությունն արգեն շափազանց ակնհայտ ձեռով էր ներկայացնում «բիզնեսի արքաների» — ֆինանսական կապիտալի շահերը և շափազանց բացահայտ էր պաշտպանում հրեաներին, հույներին, սիրիացիներին՝ ազգային այն փոքրամասնություններին, որոնց միջից միջազգային խոշոր սինդիկատներն իրենց համար միջնորդներ են ձարում և որոնք մշտական բախման մեջ են գտնվում «Մուսուլմանական եղբայրություն» ընկերության սոցիալական բազան կազմող մուսուլմանական մանր առևտրական բուրժուազիայի հետ:

Հեռեւաբար, Ալի Մախերին, թեկուզ ժամանակավորապես, պետք էր հեռացնել իշխանությունից: Թերես, եթե ֆաշիզմը հաղթանակի, որևէ ժամանակ Ալի Մախերին նորից կկանչեն, որպեսզի նա խաղա նույն այն դերը, որն իր ժամանակին նացիստական Գերմանիայում խաղաց դ-ր Յալմար Շախտը:

Իմ գրուցակցի կարծիքով Ռազմական կոմիտեի ներսում, բանակում և ամբողջ երկրում պայքարի հեռեկալ փուլը ծավալվելու է «Մուսուլմանական եղբայրություն» կազ-

մակերպության և դեմոկրատական տարրերի հետ դաշնակցած «Աաֆդ» պարտիայի միջև, ամերիկացիների աջակցությամբ ֆաշիզացման ուղին բռնող մանր բուրժուազիայի և լիբերալ բուրժուազիայի միջև, որը գյուղացիական և բանվորական մասսաների աջակցությամբ կոնստիտուցիոն ազատություններ է ձեռք բերում:

Հենց «Աաֆդ» պարտիայի ներսում եղած հակասությունները, այն թաքուն թշնամանքը, որ կա այդ պարտիայի դեկավար կոմիտեի անդամ խոշոր ֆեոդալ-հողատերերի, գավառական կոմիտեների անդամ մանր ու միջին բուրժուազիայի և ընտրողների մեծամասնությունը կազմող «Աաֆդ» պարտիայի հենարան գյուղացիական մասսաների միջև, եղիպական խոշորագույն պարտիային շափազանց անբարենպաստ պայմանների մեջ են դնում հանուն իշխանության մղվող վճռական պայքարի անցնելու համար:

Առաջիկա ամիսներին վճռական դեր է խաղալու ազգային հարցը: Տասնվեց միլիոն գյուղացիները, այն քսան միլիոն բնակչությունից, որի ոչ պակաս մեկ միլիոնը բանվորներ են, այն ուժն են ներկայացնում, որի հետ ոչ մի ուեժիմ չի կարող հաշվի չնստել:

Գյուղացիության աջակցությունը ձեռք բերելու համար Ռազմական կոմիտեն հարկադրված եղավ խոստանալ, որ ազգարային ռեֆորմ կանցկացնի և ներողամտաբար կվերաբերվի գյուղացիական կոմիտեներ ստեղծելու գործին. նա հույս ունեւր մի հարվածով գյուղացիներին կտրել «Աաֆդ»-ից և, ինչպես երևում է, այդ բանը նրան հաջողվեց: Այդ միևնույն պատճառով Ռազմական կոմիտեն հանդուրժեց նաև «ազգային կոմիտեների» ստեղծմանը, որոնցում «Աաֆդ»-ի գավառական կոմիտեները կկարողանան ժամանակի ընթացքում ուեժի հավաքել, որպեսզի հանդես գան այդ պարտիայի դեկավար կոմիտեի դեմ:

Բայց ռազմական իշխանությունները կկարողանան արդյոք ազգարային ռեֆորմ անցկացնել:

Գյուղացիներին տրված խոստումները կատարելու ամեն մի փորձը Ռազմական կոմիտեի դեմ է դուրս բերում ոչ

միայն խոշոր հողատերերին, այլև ֆրանսիական և անգլիական բաժնետիրական խոշոր ընկերություններին, որոնց է պատկանում եգիպտական հողի որոշ մասը: Բայց քանի որ ամբողջ աշխարհի ֆինանսական կապիտալի միջև ամենասերտ կապ գոյություն ունի, ապա ազգերային սեփորմի անցկացումը ոչ միայն Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային, այլև Միացյալ Նահանգներին լարելու է նրանց դեմ, ովքեր այն կիրառելու են:

Միայն ժողովրդական իշխանությունը կարող է մինչև վերջ կենսագործել գյուղացիների միջև հողերի բաժանումը:

Բուրժուազիային տրված խոստումների կատարումը՝ անշարժ գույքի վարձավճարի նվազեցումը, լիկվիդացումը այն գույքի, որի վրա «մեռյալ ձեռքի» իրավունքն է տարածվում, — ըստ երևույթին, կապվելու է նմանօրինակ դժվարություններ հաղթահարելու հետ, քանի որ անշարժ գույքի մեծ մասը գտնվում է օտարերկրյա ընկերությունների ձեռքին և այդ պատճառով էլ անօտարելի սեփականություն է հանդիսանում:

Սթեև նոր իշխանությունը ի վիճակի չլինի կատարելու իր խոստումները, դա շատ շուտով կարող է հանգեցնել այն բանին, որ ազգային և գյուղացիական կոմիտեները «Վաֆր»-ի շրջանակում, կամ նրա շրջանակներից դուրս կմիավորվեն նրա դեմ: Այդ դեպքում իշխանության գլուխ գտնվող զինվորականները մի որոշ ժամանակ անց կամ այն է հրաժարվելու են պետություն կառավարելուց, կամ հարկազրկված կլինեն օրինական կարգով ընտրված պառլամենտի վերահսկողությանը ենթարկվելով, պաշտպանել ժողովրդի պահանջները:

Այն շտապողականությունը, որով Միացյալ Նահանգները ձգտում են Մերձավոր և Միջին Արևելքում ստեղծել իրենց ստրատեգիական բազաները, կարող է նրանց (Միացյալ Նահանգներին) հարկադրել առաջ քաշելու այնպիսի պահանջներ, որոնց կիրառումը ազգական դիկտատուրան, իր իուլություն պատճառով, ի վիճակի չի լինի պարտադրելու ժողովրդին:

Սակայն հենց միայն նման պահանջների առաջբաշումը ռազմական դիկտատուրայի դեմ դուրս կրերեր բոլոր պարտիաներին և նույնիսկ բանակի մեծամասնությանը: Ես անձամբ կարողացա համոզվել, թե եգիպտական բոլոր պարտիաների ծրագրերում ինչպիսի նշանակալի տեղ են դրավում հակաիմպերիալիստական ազգային պահանջները (տես երրորդ գլուխը):

Վերջապես, բոլորի աչքին Միացյալ Նահանգները հանդես են գալիս Իսրայելին և կողմնակիորեն՝ Եգիպտոսի սինդիստական փոքրամասնությանը հովանավորողի դերում: Իսկ Իսրայելի և Եգիպտոսի ազգային փոքրամասնության դեմ մղվող պայքարը «Մուսուլմանական եղբայրության» ծրագրի հիմքն է կազմում: Բանակը Եգիպտոսի ազգաբնակչության մուսուլմանական մասսաներին կարող է համոզել համաձայնվելու Միացյալ Նահանգների հետ ռազմական դաշինք կնքելու միայն այն դեպքում, երբ զենք ձեռք կբերի Իսրայելի դեմ զինված հարձակում գործելու և Պաղեստինում պատերազմը նորոգելու համար: Բայց չէ՞ որ Միացյալ Նահանգները դաշնակից են Իսրայելին:

Գործերի նման դրության դեպքում, կարծես թե անգլիացիներին ավելի հեշտ էր իրենց կողմը քաշելու բանակի մուսուլմանական կադրերին:

Սակայն անգլիացիները դեմ են առնում սպաների մեծ մասի մոլեգին թշնամությանը, սպաներ, որոնց վաղուց ի վեր ստորացնում էին անգլիական զինվորական հրահանգիչները, նրանք դեմ են առնում նաև եգիպտական ամբողջ ժողովրդի միահամուռ ատելությանը, ժողովուրդ, որը խորապես վրդովված է Սուեզի ջրանցքի գոտում շարունակվող օկուպացիայից: Քանի որ անգլիացիները ոչ ոքի մոտ չեն կարողանում աշակցություն գտնել, բացի այն խոշոր հողային սեփականատերերից, որոնք ակնհայտորեն ավելի շատ են առեժամ ծավալվող իրադարձություններից, — նրանք (անգլիացիները) դիմում են իրենց հետախուզության ինտրիգների օգնությանը: Արդեն բացահայտված են (կամ մոտակա ժամանակներում բացահայտվելու են) Ինտելիջենս սեր-

վրիս կողմից թելադրված և նրա կողմից իրագործված բազմաթիվ զավազրություններ, որոնք տեղի են ունենում պաշտոնից հեռացված բարձրաստիճան սպայության ներկայացուցիչների, ինչպես նաև նախկին թաղավորի մերձավորների և այլ պաշտոնեական անձանց օգնությունը, որոնք արդեն վազուց ի վեր ոչ մի բան չեն կարողանում մերժել անզլիացիներին: Գրանուվ էլ հենց բացատրվում է այն, թե ինչու համար վերջին ժամանակներս այնքան ձեռքակալություններ են կատարվում երկրում: Բայց կարելի է շտաբակուսել, որ անզլիացիները հենվելու տեղ կգտնեն, եթե Պաղեստինում պատերազմը վերսկսելու դեպքում ամերիկացիները բացահայտորեն պաշտպանեն Իսրայելին:

Այսօրինակ բազմաթիվ հակասություններ ունեցող մի երկրում, որտեղ հասարակական կարծիքը ծայր աստիճանի գրգռված է, որտեղ ամենուր փոթորկում է քաղաքական կյանքը, և որտեղ ժողովուրդն իր ազգային ակնկալությունները սերտորեն կապում է սոցիալական պահանջների հետ, — այդպիսի երկրում ամերիկացիների վրա հենվող ռազմական զիկտատուրայի հաստատումը հազիվ թե հավանական լինի:

Այնուամենայնիվ իմ գրուցակիցը ծայր աստիճան հոսեակետորեն էր տրամադրված: Իր գրաված պաշտոնական գրություն շնորհիվ նա ամեն օր կարող էր տեսնել, թե ամերիկացիները ինչպիսի ճնշում են գործադրում բանակի վրա: Ցանկիների գործունեությունը նպաստում են եզրիպատական սպանների մեծ մասի քաղաքական կարճատեսությունն ու կզլիացումը, սպաներ, որոնց նախապես անզլիացիները, իսկ հետո Ֆարուկ թագավորը երկար ժամանակ թույլ չեն տվել դուրս գալու գինվորական կյանքի նեղ շրջանակներից: Մե'րթ Ամերիկա կատարած ուղևորությունից վերադարձած եզրիպատական օդաչու-սպաները հիացմունքով զեկուցում են Ռազմական կոմիտեին այն մասին, թե այնտեղ ինչպիսի սեփական ինքնաթիռների հետ էին թույլատրում խազալ մե'րթ Ռազմական կոմիտեի անդամը իր կողմնակիցներին առաջարկում է քննարկել այն օրինագիծը, որն ուղղված է «կոմունիզմը ճնշելու»-ն և այնքան բացահայտ ամերիկյան

մեթոդներ է օգտագործում, որ միանգամայն ակնհայտ է դառնում, թե այդ օրինագիծը կազմվել է ամերիկյան դեսպանության ուղղակի մասնակցությամբ (այդ օրինագիծը, որը մահապատիժ է նախատեսում կոմունիստների հետ կապ ունեցող սպանների համար, մերժվեց, բայց ո'վ կարող է ասել, թե ինչ է լինելու վաղը, եթե Կաֆր-է-Քավարում տեղի ունեցած իրադարձությունների նման մի օրե է նոր պրովոկացիա սեպ խրի մի կողմից բանակի և մյուս կողմից՝ բանվորների ու գյուղացիների միջև): մե'րթ ամերիկյան կապիտալներ են առաջարկվում սոսկման խոշոր աշխատանքներ կատարելու համար, որը թույլ կտա հող տալու ֆելլահներին՝ առանց ազրարային սեփորմը միջև վերջը անցկացնելու... ֆելլահներին խաղաղեցնելը հավասար է դաշինքի վերաբերյալ պայմանագրերի տակ գրված ստորագրություն: «Թուլարները մեկ իսկույն՝ տեղն ու տեղը հաշվելու և տալու են, իսկ պատերազմի համար մենք կպատրաստվենք դեռևս շատ երկար: Ի՞նչ ենք մենք կորցնում դաշինքի վերաբերյալ պայմանագիրն ստորագրելով»: Այսպես միամտաբար են դատում որոշ սպաներ, որոնք իրենց անկեղծ հայրենասերներ են ցույց տալիս: Այս մանկական դատողությունները ամբապնդվում են արևելյան այն հինավուրց արագիցիայի հաշվով, թե իբր մենք՝ (մուսուլմանները), միշտ հիմարացնում ենք բրիտանացիներին: Ռազմական կոմիտեի կազմում գտնվող զեմոկրատ-սպաները իրենց ժամանակի մեծ մասը ստիպված էին վատնելու այն բանը բացատրելով, թե կապիտալ ներդրումներ ձեռք բերելու քաղաքականությունը և դրա հետ կապված քաղաքական պայմանները թույլ կտան աստիճանաբար երկիրը դարձնել գաղութ, իսկ պրովոկացիաների և ճնշումների քաղաքականությունը ռազմական զիկտատուրայի սեփորմը կապելու է նրանց հետ, ովքեր նրան աշակցություն են ցույց տալիս արտասահմանից: Սակայն ամերիկացիների խոստումները հնարավորություն են բաց անում ավելի հեշտ լուծելու կենսական հարցերը և բուսակին թույլ են տալիս, — կարծես թե, առանց յանկիների

հասուկ վերահսկողության,— պահելու համարյա թե հրաշքով իր ձեռքն ընկած իշխանությունը:

Նպրատիակման մեջ իմ զրուցակիցը մի անգամ էլ վերագործավ ազրարային հարցին:

Արդյոք ֆելլաճները այնքան ուժ և համախմբվածություն կունենան, որպեսզի պնդեն իրենց պահանջների վրա և ոչ ոքի թույլ չտան իրենց հեռացնել այդ պահանջների համար մղվող պայքարից: Ազգային բուրժուազիան կզիտակցի՝ արդյոք, որ ինքը պարտավոր է անվերապահորեն պաշտպանել գյուղացիության պահանջները: Քաղաքականապես գրազետ բավականաչափ բանվորներ կա՞ն արդյոք, որ միանան գյուղացիությանը: Ահա թե որն է պորբիմը:



Իմ ֆարիզ վերադառնալուց մի բանի օր հետո Ալի Մախերը ստիպված եղավ հրաժարական տալ (սեպտեմբերի 6-ին), և դեներալ Նագիրը Ռազմական կոմիտեի հսկողության ներքո իր վրա վերցրեց երկրի կառավարումը: Նագիրը կանգնեց մի կառավարության գլուխ, որտեղ լայնորեն ներկայացված են «Մուսուլմանական եղբայրությունը» և նացիոնալիստների պարտիան, որոնք երկուսն էլ 1951 թվականի աշնանը, Սուեզի ջրանցքի գոտում բռնկած զինված պայքարի մասնակիցներ են եղել:

Այժմ, երբ ես այս տողերն եմ գրում, ռազմական զիկատատուրայի և «Էաֆդ» պարտիայի միջև մղվող պայքարը գանվում է ամենաթեժ շրջանում:

Գեներալ Նագիրի կառավարությունը ստիպված է եղել զիջումներ անել:

Ֆելլաճների պահանջով նա ձեռնարկել է ազրարային ռեֆորմի անցկացմանը, համաձայնել է անշարժ գույքի վարձակալական վճարները նվազեցնելու և անօտարելի գույքի վաճառքի վերաբերյալ բուրժուազիայի պահանջներին: Նա «Մուսուլմանական եղբայրությունը» խոստացել է զրավել

հակախորայեական դիրք, մտնելով արաբական երկրների կիզալի մեջ: Ամբողջությամբ վերցրած, ժողովրդին նա խոստացել է ձեռք բերել Սուեզի ջրանցքի էվակուացիան և Սուդանի միացումը Եգիպտոսին:

Այս բոլոր զիջումները ընդունակ են միայն սրելու Եգիպտոսում ռազմական զիկատատուրայի ռեժիմ ստեղծվելուց առաջացած հակասությունները:

Հետևաբար, պայքարը շարունակվելու է և այն ծավալվելու է ամենամոտիկ ապագայում:

Ես կուզենայի, որ այս հակիրճ ակնարկը այն մասին, թե ինչ եմ տեսել Եգիպտոսում՝ ռազմական զիկատատուրայի առաջին ամսում, օգներ ընթերցողին ավելի հստակորեն պատկերացնելու, թե ինչպիսի մարտեր են սպասում եգիպտական ժողովրդին:

Ես կուզենայի, որ իմ գիրքը օգներ ընթերցողին՝ սիրելու Նեղոսի հովիտը մշակող տասնվեց միլիոն այգեպան-ֆելլաճներին՝ այդ մեծ սիրտ ունեցող մարդկանց, որոնք կարեկից են կալանավորների նկատմամբ, անզրդվելի՝ ռեպրեսիաների առաջ, մարդիկ, որոնք երկարատև քնից հանկարծ են զարթնել և զարմանքով տեսնում են, որ իրենց խղճով գոյությունը փոխելը իրենցից է կախված:

Ես փորձ արի ընթերցողներին հաղորդել այն գաղտը, որ ես բազեցի իմ բանտային կալանքից: Եգիպտական բանտարում ես ըմբռնեցի, թե ինչ բան է եղբայրական համերաշխությունը: Եթե Նուր-էդ-Ղինի ժպիտը, Քեմալի հաստատակամությունը և իրենց չքնաղ երկրի նկատմամբ ունեցած անսահման սերը ընթերցողը հիշի այն պահին, երբ նրան լուրեր հասնեն, որ Եգիպտոսում մի որևէ պոետ կամ ֆելլաճներ ու բանվորներ են ձերբակալվել և դա ընթերցողին զրդի ակտիվորեն դրսևորելու տուժածների նկատմամբ իր համերաշխությունը,— նշանակում է՝ ես իզուր ժամանակ չեմ վատնել և իզուր չեմ կրել այն շարժարանքները, որ ինձ բաժին ընկան Նեղոսի հովտում: Չպետք է մոռանալ, որ պետիցիաներն ու բողոքի հեռագրերը նույնպես իրենց զրական

դերն են խաղում. դրան ապացույց է ծառայում մեր դեմ սարքված դավադրության տապալումը:

Այս դրքի գլխավոր նպատակն է՝ նպաստել ամրապնդելու աշխարհի բոլոր ժողովուրդների համերաշխությունը նգիպտոսի ազնիվ, խաղաղասեր, մեղմ, բարյացակամ և քաջարի ժողովրդի հետ՝ նրան սպասող առաջիկա ծանր փորձությունների պահին:

1 Հոկտեմբեր 1952 թ.



ՅՅՈՒԳՎԱԾ Է 1971 թ.

12-55

Յ Ա Ն Կ

Առաջաբան	3
Գլուխ առաջին. Ամերիկացին, փաշան և եգիպտական սպան	13
Գլուխ երկրորդ. Մի պետական հեղաշրջման պատմությունը	20
Գլուխ երրորդ. Դավադրություններ լողափում	35
Գլուխ չորրորդ. Նեղոսի հովիտը մի այգի է	47
Գլուխ հինգերորդ. «Վաֆդ» պարտիզի գավառական կոմիտեն	59
Գլուխ վեցերորդ. Թամբակենու ծագիկը	67
Գլուխ յոթերորդ. Անհեթեթությունների և անմտությունների աշխարհում	79
Գլուխ ութերորդ. Գիշերային ուրվականները	91
Գլուխ իններորդ. Դամյեստիի ճանապարհին	102
Գլուխ տասներորդ. Վառվող սիգարետը դառն այբում	110
Գլուխ տասնմեկերորդ. Խոսքը պատկանում է ֆելլահներին	118

Թարգմ.՝ վ. ԶԻՂԵՂՅԱՆ
Թարգմ. խմբագիր՝ Ա. ՄԱՐՏԻԿՅԱՆ
Տեխն. խմբագիր՝ վ. ԿՈՍՏԱՆԳՅԱՆ
Կանտոնի սրբագրիչ՝ Ի. ԲԲՈՒՏՅԱՆ

Վ.Յ 12453:

Պատվեր 704:

Տիրած 3000:

Հրատ. 5,3 մամ.: Տպ. $8\frac{1}{4}$ մամ.:
Հանձնված է արտադրության 14/V 1954 թ.:
Ստորադրված է տպագրության 11/IX 1954 թ.:
Թղթի ֆորմատը՝ $84 \times 108\frac{1}{32}$
Գինը՝ 1 ս. 65 կ.:

Գլխահրատի № 1 տպարան, Երևան, Ալավերդյանի վր. № 65, 1954 թ.: